նակն է մի շարք գրքերի¹, բոլորը համառորոնումների ու անխոնջ աշխատասիրության արդյունք: Ուրեմն, իրոք որ, բոլորովին էլ պատահական չէր, որ 1919 թ. հենց Թեոդիկին առաջարկվեց կազմել «Յուշարձան ապրիլ տասներմեկի» հուշամատյանը:

1908 թ. թուրքական սահմանադրության (Թեոդիկը այն անվանում է «խաբեպատիր եւ աղէտալի») պատճառած ոգևորությունը, որն ընդհատվեց 1909 թ. կիլիկյան կոտորածներով և ապա անթեղվեց 1913-1914 թթ. հայ գրի ստեղծման և հայերեն տպագրության հոբելյաններով, արևմտահայությունը 1918-1922 թթ. ոգևորության ևս մի կարճ ժամանակաշրջան ապրեց²: Պատերազմում Թուրքիան պարտվել էր արագ աճում էր քաղաքի հայ բնակչության թիվը (այն շուտով հասավ նախապատերազմականի սահմաններին), լույս էին տեսնում տասնյակ հայկական թերթեր ու ամսագրեր, տպագրվում էին գրքեր: Երբ Թեոդիկը ձեռնարկել էր իր գրքի նյութերի հավաքումը, վերապրած հայերի մի մասը հավատացած էր, թե Թուրքիայի կործանումը վերջնական է ու անդարձ. չէ՞ որ ստեղծվել էր «պատերազմի և տեղահանության հանցագործությունների հետաքննության» հանձնաժողովը, ձերբակալվել էր ջարդերի ու աքսորների կազմակերպիչների մի մասը: Քիչ չէր նաև այն մարդկանց թիվը, ովքեր կարծում էին, թե Հայաստանի վերականգնումն ու ազգի ազատությունը արդեն իրողությունն է: «Հայութեան լուսապայծառ արևը... ահա՛ իր կենսառոյգ ճառագայթները կ'արձակէ», - գրում էր այդ օրերին Բյուզանդ Պոյաճյանը (էջ 223):

Ինչպես նախորդ տասնամյակներում, այդ տարիներին ևս հայությունը Արևմտյան Հայաստանի ազատագրման հույսը շարունակում էր կապել մեծ տերությունների հետ՝ կարծելով, թե Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը, Ամերիկայի Միացյալ Նահանգները... ուր որ է կբերեն այդ ազատությունը և այն էլ՝ ոչ թե մեկ, այլ «երեք-չորս հատ ազատություն»:

Աքսորից վերադարձողները հրապարակը լցրել էին տեսածի ու լսածի պատմություններով ու հուշերով: Այդ մարդկանց խոսել ու գրել էր տալիս տառապանքի աննախադեպությունը: Նկատի ունենալով զգացածն ու ապրածը թղթին հանձնելու այդ ոգևորությունը՝ Արշակ Ալպոյաճյանը իրավացիորեն գրել է. «Կեանք ու ոգևորություն կը տեսնվի, միայն ընտրութիւնն է, որ կը պակսի»³:

Թեոդիկի գրքի արժանիքներից են հենց այդ «ընտրության» ապահովումը, սպանդի սարսափելի դեմքի իրական պատումի ստեղծումը և, մանա-

¹ Տե՛ս օրինակ՝ **Թեոդիկ**, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, *նույնի՛* Ձուլումը եւ մեր որբերը, Կ. Պոլիս, [1921], *նույնի՛* Գողգոթա թրքահայ հոգևորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին, հ. առաջին (Ա մաս), Անթիլիաս, 1966:

² Կ. Պոլսում լույս տեսած իր «Ձուլումը եւ մեր որբերը» գրքում Թեոդիկը այն բնութագրում է «երեւութապես փրկարար»: Տե՛ս **Թեոդիկ**, Ձուլումը եւ մեր որբերը, էջ 19:

³ «Կոչնակ», 1921, էջ 214:

վանդ, սպանդ երևույթի ընդհանրական լինելու ցուցադրումը, քանի որ մյուսները պատմում էին լոկ մի դեպքի կամ սպանության մասին:

Այո՛, եղեռնը **պատմվում էր**, բայց այն հար մնալու էր **անպատում**, քանի որ սպանողը առհասարակ հնարավոր չէ բառերով պատմել: Թեոդիկը իր գրքով հիմք է դնում եղեռնապատումի ավելի զգաստ, ծավալուն ու որքան հնարավոր է ամբողջական պատմությանը: Այն, ըստ էության, **հավաստի վկայությունների մի ամբողջություն է, պատմական արժեք ներկայացնող վավերաթուղթ**: Թեոդիկը, ինչպես նշվեց, կրել էր աքսորի բոլոր տառապանքները և վերապրողներից մեկն էր: Բայց արդյո՞ք կենդանի մնալը երջանկություն էրավ նրա ու նրա նմանների համար: Իրեն ծանոթ ու կիսածանոթ, ինչպես և անծանոթ ամեն մի նահատակ հայի վերաբերող խոսքը, բառն ու տողը գրելիս արդյոք նա մշտապես չի՞ վերապրել նրանց կրած տառապանքները, ձեռքն ընկած ամեն մի նկարի հետ չի՞ զգացել նրանց մայրերի, հայրերի, երեխաների ու հարազատների կսկիծները: Չէ՞ որ հայտնի ճշմարտություն է՝ երբ տեղեկանում ես մարդկանց գործերին ու նայում նրանց նկարներին, նրանք էլ նայում են քո գործերին, նայում են քեզ՝ ասես հարցնելով քո ապրած կյանքի ու կատարած գործերի մասին: Եվ երբ Թեոդիկի գիրքը լույս ընծայվեց, կարելի է ասել, որ **ապրիլյան զոհերը ներկա էին ու վկայություն էին տալիս**: Ու թեև մորմոքող վերքը շատ թարմ էր, և աղետի ծավալները, կիրաված մեթոդները դեռևս պատված էին քողով, սակայն, իր տեսակի մեջ լինելով առաջինը, ինչպես իրավացիորեն նշում է առաջաբանի հեղինակ Տիգրան Զավենը, Թեոդիկի գիրքը հաստատում էր «Գաղափարին յաղթանակը Բիրտ Ուժին վրայ» (էջ E):

Իր գրքում Թեոդիկը չի խտացնում գույները, հեղինակային հավելումներ չի անում, քանի որ ներկայացվող փաստերը ինքնին շատ խոսուն էին, և ինքն էլ այն համոզումն ուներ, որ **միմիայն ճշմարտությունը կարող է նրանց հիշատակի հաստատուն երաշխիքը լինել**: Եվ իրոք, գիրքը լայն բացված դարպաս է՝ հայ ժողովրդի նահատակության մի մասը ճանաչելու, մահախուճապ սերնդի ապրած սարսափների մեջ խորանալու, նրանց կրած անմարդկային տառապանքների ամբողջ ահավորությունը զգալու համար:

Հեղինակը հիշատակում և արձանագրում է զոհ գնացած 761 մարդու կյանքի պատմություն: Երբ կազմվում էր այս գիրքը, շատ նահատակների անուններ դեռևս հայտնի չէին: Հեղինակը ծրագրել էր նրանց մասին գրել «Յուշարձանի» Բ. հատորում, որը մասամբ իրականացրեց 1920-1921 թթ. շարադրված «Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան» գրքում, ուր ընդգրկված են միայն կրոնական գործիչները: Թալասի հայության տված զոհերի մասին, օրինակ, Թեոդիկը 1919 թ. գրում է. «... առայժմ հազիւ մէկ հոգի կարելի էր մեզ յիշատակել, ներքին գաւառներու հետ լայն յարաբերութիւններէ զուրկ ըլլալով դեռ» (էջ 135): Նպատակ ունենալով որքան հնարավոր է իր ժողովրդի մահագրության ստույգ և ծավալուն պատմությունը շարադրել՝

հեղինակը կանգնել է նաև այն բարդության առջև, որ ոչ միայն պատմագրի, այլև մարդկային կարողության սահմաններից դուրս է՝ ճշգրիտ պատկերը ներկայացնել այն լլկումների, խոշտանգումների, որոնց ենթարկվել էին իր ազգակիցները: Նյութի պատճառած հոգեբանական բարդություններից գատ՝ Թեոդիկը պետք է հաղթահարեր նաև անհրաժեշտ տվյալներ հավաքելու դժվարությունները. դիմեր ականատեսներին ու արքայներից վերադարձածներին, կուսակցական ու կրոնական անձանց, խմբագրություններ վազեր, նամակներ, խնդրագրեր ու դիմումներ գրեր, որի համար ժամանակ ու ջանքեր էին պահանջվում, մինչդեռ ժամանակ գրեթե չկար:

Թեոդիկը իր գրքում օգտագործել է նաև զավատներից եկած նամակներ, որոնցից մեկը Մուշի առաջնորդարանի քարտուղար Նազարեթի՝ Կ. Պոլիս ուղարկած գրությունն է. «Մշոյ դաշտեն 5000 հոգի ազատած են, մինչդեռ 200 000 էին» (էջ 129): Նշենք, որ Թեոդիկի հենց այդ տքնաջան աշխատանքի շնորհիվ է, որ մենք ունենք որոշ գրողների ու գործիչների (Է. Ակնունի, Մ. Կյուրճյան, Ռ. Ջարդարյան, Ն. Տաղավարյան, Ս. Բյուրատ, Գ. Բարսեղյան և այլք) ինքնության տվյալները՝ ինքնակենսագրականներ, գրություններ, նաև ուշագրավ նկարներ: Ի դեպ, նման գիրք ստեղծելու ամենամեծ դժվարություններից էր նաև ներկայացվող դեմքերի լուսանկարների հայթայթումը՝ այդ օրերի համար ոչ դյուրին մի բան: Իրողություն էր, որ օսմանյան իշխանությունները իրականացրած խուզարկությունների ժամանակ տարել էին ամեն բան՝ գրքեր, ձեռագրեր, փաստաթղթեր, լուսանկարներ: 1908 թ. թուրքական հեղափոխությունը խայծի նման Կ. Պոլիս էր հավաքել արևմտահայության ամբողջ մտավոր սերունդը, և դա ողբերգական եղավ այն առումով, որ ոչ միայն իշխանություններից մեծ ջանքեր չպահանջվեց ձեռքակալությունների ու արքայի ծրագիրը իրագործելու համար, այլև ոչնչացրեց բազում մտավոր ու մշակութային արժեքներ:

Թեոդիկը վկայում է, որ այդ օրերի համար սովորական մի բան էր որոնվող մարդուն չգտնելու դեպքում նրա հարազատներին արքայելը: Հաճախ ձեռքակալությունների մարմաջը հասնում էր զավեշտի: Ձեռքակալվում էին նույն անուն-ազգանունը ունեցող բոլորովին այլ մարդիկ: Այդպես, «Ազատամարտի» Հրաչի (Հայկ Թիրաքյան) փոխարեն արքայ էր ուղարկվել մի այլ անձ, մանկավարժ Մկրտիչ Կարապետյանի փոխարեն՝ մի ուրիշ հայ, հեղափոխական Ռոստոմի փոխարեն նահատակության էին ենթարկել մի ուրիշ Ռոստոմ Ռոստոմյանի, իսկ գարահիսարցի Գառնիկ Պոյաճյանին ձեռքակալությունից ազատել էին՝ պայմանով, որ երեսուն ոսկի (այն ժամանակվա համար չնչին մի գումար) փոխհատուցի: Եվ քանի որ չի ճարվել այդ գումարը, նրան նորից են բանտարկել. «Իր հուսկ բանքը, խոստովանահորը ուղղեալ, «Տեր Պապա, գնա՛ ըսէ, որ 30 ոսկի չունենալուս համար կը կախուիմ կոր...», – գրում է Թեոդիկը (էջ 101):

Այն, որ օսմանյան իշխանությունների համար նշանակություն չունեի, թե

ովքեր են ձերբակալվում, ժամանակին գրել է նաև Շ. Շահնուրը իր «Զոյգ մը կարմիր տետրակներ» գրքում. «... Շաւարշը (խոսքը «Ազատամարտ» թերթի խմբագիր Շավարշ Միսաքյանի մասին է – *Ս. Ա.*) ձեռք անցնելու մոլուցքէն բռնուած, ոստիկանութիւնը բարակ սանտրէ անցուց Պոլիսը, եւ իրենց թաքստոցէն դուրս քաշեց բազմաթիւ դողահար և դալկադէմ Շաւարշներ... Շաւարշները միշտ Հայ չէին. կար յոյն Շաւարշ մը»¹:

Իշխանությունները մարդկանց ձերբակալելու համար գործադրել են ամենաստոր միջոցները, դիմել նենգ հնարքների: Թեոդիկը գրում է, որ Հրանտ Աղաճանյանին կալանավորելու համար վերջինիս հասցեով ուղարկվել է ազգային գործիչ Փաստրմաճյանի կեղծ նամակը, որի հիման վրա հասցեատերը մեղադրվել է իշխանության դեմ դավադրելու հանցանքով:

Քանի որ անհնար էր հայ ժողովրդի միջից հանել ազատության գաղափարները, հարկ համարվեց սպանել մարմինը, ժողովրդին անճիտելու համար նախ և առաջ վերացնել մտքի, խոսքի ու հավատի մարդկանց, որը նշանակում էր նաև կասեցնել հայ ժողովրդի մտավոր ու մշակութային առաջընթացը: Աքսորյալների առաջին խմբերը կազմված էին գրողներից, թերթերի ու հանդեսների խմբագիրներից, կուսակցականներից ու կրոնավորներից: Իսկ համատարած ջարդը իրեն երկար սպասել չտվեց: Մեղադրվում էին հին ու նոր մեղքերի համար. ասենք՝ մասնակցություն 1890 թ. Գում-Գափուլի կամ 1895 թ. Բաբը Ալիի խաղաղ ցույցերին: Էջմիածնի կաթողիկոսական ընտրությունների պատվիրակ լինելու համար կախսադան բարձրացվեց վաճառական Կարապետ Ճամճյանը, իսկ կեսարացի Տետեյան եղբայրներին բանտարկել էին Թեոդիկի «Տարեցոյցին» բաժանորդագրված լինելու համար: «Յանկարծական Տեղահանութեան երեւոյթին տակ տեսակ մը Զուլում էր ատիկա. բռնի հաւատափոխութիւն, անլուր հարստահարութիւն եւ զարհուրելի սպանոյթ», – գրում է Թեոդիկը (էջ 121), տեղահանություն, որ ընդգրկել էր բնակչության բոլոր շերտերը՝ թարգմանիչներ, դերասաններ, երաժիշտներ, արհեստավորներ, ուսանողներ, դեղագործներ, պրոֆեսորներ (այդ թվում և՛ թուրքերենի): Մտվար են եղել մանավանդ ազգային ժողովի անդամների, արտասահմանյան բարձրագույն հաստատությունների, Կ. Պոլսի կրթական օջախների շրջանավարտների շարքերը: Թուրքական իշխանությունները ձերբակալեցին նաև իրենց բանակում ծառայող հայ զինվորներին ու բժիշկներին՝ այդ ամենը ուղեկցելով գույքի և ունեցվածքի բռնագրավումներով ու թալանով, որը իրականացնելու համար բանտերից ազատեցին հազարավոր մուսուլման քրեածին տարրերի, ովքեր սիրով զինվորագրվում էին որպես **չեթե** (թուրքական ոչ կանոնավոր զորքի զինվոր, որը զբաղվում էր թալանով ու սպանություններով):

Կեսարիայի և Թալասի մասին վկայաբանելիս Թեոդիկը գրում է, որ կառավարանների քանակով այդ բնակավայրերը ամենից մեծաթիվն էին. «Այդ

¹ Տե՛ս **Շահնուր Շ.**, նշվ. աշխ., էջ 30-31:

օրերուն էր, որ յիսունը չորս հոգի մարտիրոսացան» (էջ 131): Իր «Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան» գրքի ներածականում Թեոդիկը գրել է. «Դիտելի է, որ թուրանեան միտքը կրնայ սլացք առնուլ մինչեւ հանճար, երբ նօթճե (նյութել – *Ս. Ս.*) դաւ և ոճիր»¹:

Եվ արևմտահայության ոսկե ծաղիկը զանգվածաբար Գողգոթա քշվեց՝ նահատակվելու Բագինի վրա՝ ծեծ, տանջանք, կաղախան, մորթոտում, քարյուղով հրկիզում, հրացանազարկում՝ սովորական բաներ՝ կրկնվող ամեն օր ու ժամ: Թուրքի գազանային բնագոյր ասպարեզ էր հանել տաժանքի բազում ձևեր՝ «... ներբան տաղել, եղունգ փետել, լինտեր խորտակել, մօրէ մերկ՝ գլխիվայր կախել, մատերու պճեղին փայտէ բեւեռ մխել, լանջուկը գելուլ, աչք փորել, ոտք պայտել»²:

Իր գրքում հայության նկատմամբ կատարվածը Թեոդիկը համարում է նախօրոք ծրագրված: Գրեթե «**գիտական ճշգրտությամբ**» վարվող այդ գազանությունները կարող էին անհավանական թվալ, սակայն ըստ տասնամյակներ շարունակ թուրքերի կողմից դեպի այլազգիները և մանավանդ հայերը դրսևորած նենգ քաղաքականության՝ կռահելի էին: Ի պատասխան պատերազմը սկսելու առիթով հայկական որոշ շրջաններում ծագած ոգևորության, ինչպես վկայում է Կոստան Զարյանը, խոսել է նաև Զոհրապը. «Դուք տաճիկները չէք ճանչնար... Ես մօտեն կը դիտեմ ամեն բան... Կ'ըսեմ ձեզի, ինձ համար այլևս կասկած չկայ, որ այս անգամ անոնք վերջ պիտի տան թե՛ մեր հարցին, թե՛ մեզի: Այո՛, այս անգամ անոնք պիտի օգտագործեն պատմական եզակի պարագաները եւ անխնայ պիտի ջարդեն: Այդպիսի հրաշալի առիթ է կուգեք որ շուները չօգտուի՛ն... Մեծ պետությունները զբաղած՝ սահմանները փակ»³: Իրոք որ, Օսմանի մարդակեր ժառանգները ամեն ինչ կատարեցին գերագույն հետևողականությամբ ու սառնասրտությամբ՝ իրենց ծրագրերն ու գործունեությունը մշակելով ամենայն մանրամասներով: Դրա ապացույցներից է նաև այն, որ ձերբակալություններն ու աքսորները ամբողջ Թուրքիայի տարածքում սկսվեցին միաժամանակ ու իրականացվեցին մինչև վերջ: Որպեսզի ժողովրդին զրկեն ինքնապաշտպանությունից, կառավարությունը հայ երիտասարդությանը տարել էր պարտադիր զինվորական ծառայության, տներից հավաքել անգամ ճաշի դանակները, հայ լինելու «անքավելի մեղքով» տեղահանել ոչ միայն աշխատունակ մարդկանց, այլև կանանց ու երեխաներին: Այդ սև շրջանի մասին խոսելիս Թեոդիկը հաստատում է, որ Կ. Պոլսի Մեզրեի բանտը ամեն օր նոր մարդկանցով էր լցվում, և ամեն օր նոր խմբեր էին մեկնում դեպի Զանդրիի, Այաշի աքսորավայրերը՝ այնուհետև Դեր-Զորի անապատները տարվելու համար՝ ավազուտների մի անհայտու-

¹ **Թեոդիկ**, Գողգոթա Հայ Հոգեւորականութեան, Նիւ Յորք, 1985, էջ 2:

² Նույն տեղում, էջ 4:

³ «Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում», Երևան, 2006, էջ 265:

թյուն, որտեղ մեկնած մարդկանց գերեզմանատեղն անգամ հնարավոր չէր ճշտել (նրանցից էր և գրող Երուխանը՝ Երվանդ Սրմաքեշխանյանը): Տառապանքի այդ ճամփաներին շատերը մահացան քաղցից ու համաճարակներից, գետամույն եղան Եփրատի ջրերում, իսկ մեծ մասը զոհ դարձավ չեթեական, քրդական ու մուսուլմանական այլևայլ մարդասպան հրոսակախմբերին: Իհարկե պատահում էին և վրիպումներ: Օրինակ, ինչպես վկայում է Միքայել Շամտանճյանը՝ գրող Արամ Անտոնյանը հրաշքով վերապրողների թվում էր հայտնվել այն դիպվածով, որ ճանապարհին կոտորվել էր ոտքը, և ուղեկցող ոստիկանները նրան նետել էին հիվանդանոցներից մեկը ու ... մոռացել (էջ 227):

Թեոդիկի գիրքը թե՛ գրական, թե՛ պատմագիտական և թե՛ ազգագրական արժեք ներկայացնող հուշարձան է, թուրքական բռնակալության կողմից հայերի նկատմամբ իրականացված եղեռնի՝ ցեղասպանության անժխտելի վկայություն, ինչպես ներկայացված ու հիշատակված, այնպես էլ բոլոր հայ նահատակների սուրբ անվան հիշատակի արժանի տուրք: Գիրքը, ինչպես և նրա շապիկի վրա պատկերված հուշարձանը, եղեռնի զոհերի **հիշատակի առաջին գործնական արձագանքները** եղան հայ իրականության մեջ: Մինչև այս գրքի տպագրությունը քչերը գիտեին կատարվածի ամբողջ սարսափների, զոհերի անունների, նրանց մահվան մանրամասների, նահատակների՝ նախկինում կատարած գործերի մասին:

Առաջին զոհը, ում անդրադառնում է հեղինակը այս գրքում, փաստաբան, գրող, հրապարակախոս և ազգային գործիչ Գրիգոր Ջոհրապն է: Գրողին նվիրված խիստ համառոտ այդ էջում Թեոդիկը կենսագրական մի քանի տվյալներ է հաղորդում և նրան բնութագրում որպես թափանցող ու պայծառ իմացականություն, «կնճռոտ հանգուցները» քակող, նաև «անստերիւր (անսխալ, ճշմարիտ – Մ. Ա.) տրամաբանութեան» դրոշմը պահող, «գրակալութեան մէջ կարկառուն դէմք», նորավեպի «հոյակապ վարպետ»¹ և այլն:

Իր գրքում Թեոդիկը նույն ջերմությամբ ու ափսոսանքով է գրում հայ գրականության մյուս մեծագույն դեմքերի՝ նահատակված Վարուժանի, Միամանթոյի, Ռ. Սևակի (նա ոչ միայն բժիշկ էր, այլև զինվորական ծառայության մեջ էր թուրքական բանակում), ազգային, քաղաքական ու կուսակցական գործիչներ Հարություն Շահրիկյանի (Ատոմ), Գարեգին Չազայանի (Գ. Խաժակ), Խաչատուր Մալումյանի (Է. Ակնունի), Տիրան Քելեկյանի ու շատ-շատերի մասին՝ իր խոսքին կցելով նրանց ստեղծագործություններից, գրություններից, ինքնակենսագրականներից, նամակներից հատվածներ ու պատառիկներ, որոնք մեկ անգամ ևս հայելիացումն են դառնում ոչ միայն այդ մարդկանց գրական ու ազգային վաստակի, այլև հաստատումը և հանձնարարականը հայ ժողովրդի անցած ու անցնելիք

¹ Թեոդիկը առաջիններից մեկն էր, որ Ջոհրապին այս որակումն է տալիս, որը, ըստ էության, քիչ է տարբերվում «նորավեպի իշխան» հանրահայտ բնութագրումից:

կյանքի ճանապարհի, խոսքեր, որոնք այսօր ևս խիստ արդիական են հնչում: Վերհիշենք է. Ակնունու «Հայրենիք» գրությունից մի հատված. «Մայր–Հայրենիքից դուրս՝ Հայ ժողովուրդը ազգ չէ, այլ փշրանք, թափթփուկ, անպէտ եւ անկարելորդ: Երկիրն է նրա պատմական դերի բեմը, նրա կուլտուրական բաղձանքների հնոցը: Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը՝ սպանեց հրէական տաղանդաւոր ազգը, նա մեզ էլ կը սպանի՝ հասցնելով ազգը հայկական ջիւղութեան:

... Մեզանից աւելի հալածական ... նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն – Հայրենիք: Ի՞նչ, մի թէ մենք պետք է մեր ապագայ սերունդին Հայրենիքի փոխարէն թողնենք լոկ հայկական գաղութներ, ցիրուցան օվկէանի այս եւ այն կողմը» (էջ 15):

Սա հենց հեղափոխական տրամադրությունների բովում ազգային մտածողության մեջ ծնված հայրենասեր արևմտահայության՝ իր երկրին ու հողին անմնացորդ նվիրման այն բարձր գաղափարի արտահայտությունն էր, որ իր հիմքում ուներ մեկ ու միակ պատգամ՝ **արևմտահայությունը իր ազատությունը գտնելու համար միայն մի վայր ունի՝ ազատագրված Արևմտյան Հայաստանը:**

Գրքում Թեոդիկը նաև ներկայացնում է գրող Գեղամ Բարսեղյանի կենսագրությունը, նկարը և փոքրիկ մի հատված նրա «Խոնարհ հերոսներ» գրությունից: Թեոդիկի բնութագրմամբ՝ այդ «խոստումնալից տաղանդը»՝ «Մեհյանի», հեղափոխական «Ազատամարտի» ու «Ազդակի» խմբագիրը, լինելով դաշնակցական կուսակցության ակտիվ գործիչներից, օսմանյան իշխանությունների կողմից հրապարակային կախաղան էր բարձրացվել Կ. Պոլսում: Հենց այս խաչելության պատկերից է ծնվել Կոստան Զարյանի լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Ասացուած կախաղան բարձրացողի համար».

Այսօր քաղաքում,
մեծ հրապարակում,
մարդիկ հրեշտակի –
կում-կում
արին են խմում¹:

Հայ մտավորականներին ու գործիչներին կախաղան բարձրացնելը թե՛ անցյալում և թե՛ նոր օրերում սովորական բան էր օսմանյան իշխանությունների համար (հիշենք դեռևս սուլթանական Թուրքիայում կաղախան բարձրացված «Անմահն Ժիրայրին»). դա շարունակվեց ինչպես ապրիլյան սև գիշերից անմիջապես հետո՝ Համբարձում Պոյաճյան (Մուրատ), Մարտիրոս Գունտակճյան և այլք, այնպես էլ ողջ պատերազմի ընթացքում: Օրինակ՝ 1915 թ. հունիսի 2-ին հրապարակային կախաղան հանեցին 20 հնչակյան-

¹ Զարյան Կ., Օրերի պսակը, Պէրոյթ, 1971, էջ 152:

ների, որոնց թվում էր Վանի ինքնապաշտպանության հերոս Փարամազը (Մատթեոս Սարգիսյան): Ճակատագրի բերումով՝ Թեոդիկը նրանցից ոմանց հետ նույն բանտում էր եղել, անձամբ ճանաչել: Ուրեմն դժվար չէ պատկերացնել, թե ինչ մորմոքներ է ապրել նրանց մասին իր ամեն մի տողը շարադրելիս:

Գրքում տպագրված մի քանի ինքնակենսագրականներ հեղինակները Թեոդիկին էին հանձնել դեռևս պատերազմը սկսվելուց առաջ, երբ վերջինս իր «Տարեցույցերի» հերթական գրքերի համար նյութեր, ձեռագրեր ու գրական նշխարներ էր հավաքում: Տեղին է ասել, որ հենց Թեոդիկի այդ ջանքերի շնորհիվ են մեզ հասել նաև Մ. Մեծարենցի և արևմտահայ մի քանի այլ գրողների որոշ գործեր ու ձեռագրեր, որոնք նա հայտնաբերել է, կարելի է ասել, անհայտության ու մոռացության փոշիների միջից:

Թեոդիկը հաճախ է սեղմ, բայց և սպառնիչ որակումներով բնութագրում այս կամ այն գործչին, մտավորականին, գրողին, ազգի նվիրյալին: Այդ դիպուկ որակումները՝ «Քաջն Վահան», «անմեռանելին Ռուբեն», այսօր էլ մնում են ուժի մեջ, մեզ խորհել տալիս: Ռուբեն Զարդարյանին նա որակում է «թունդ դաշնակցական», բայց և՛ «գրական ջղուտ, յղկուած եւ պատկերալից ոճ մը» ունեցող, Ռուբեն Սևակին՝ «արուեստին թագնութեանց» մեջ հմուտ, «երագող ու գիտուն», «Մարդկութիւնը, Հայրենիքն ու Սէրը» երգող, Սիամանթոյին՝ «ցեղին մարտիրոսացումները կ'եղերերգեր, հերոսներու կեանքը կը պանծացնէր ու վրէժ կը կայծկլտար այնքան հուժկու և սխրալի ոճով մը» (էջ 19): Վանի հայտնի Իշխանին (Նիկողայոս Պողոսյան) բնութագրում է որպէս «գյուղացուց պատշամունքին առարկայ»: Խմբագիր, ուսուցիչ, ազգային երեսփոխան Սարգիս Մինասյանին համարում է «նկարէն ոճ» ունեցող, Սմբատ Բյուրատին՝ «Հմուտ՝ Գրքր.-ի (գրաբարի – *Ս.Ս.*), ֆրնս.-ի (ֆրանսերենի – *Ս.Ս.*) եւ պատմութեան» գրող, Արտաշէս Հարությունյանին՝ «տաղանդաւոր գրագետ», «գեղագետ-քննադատ», մտավորական, ում մեջ «քերթողը ցվերջ ապրեցաւ»: Անգամ այնտեղ, որտեղ թվում է, թե Թեոդիկը «երկար» է գրում, իրականում շատ հակիրճ է իր բոլոր արտահայտություններում: Արևմտահայ իրականության մեջ իր գործունեությամբ հայտնի Թորգոմի (Արտաշէս Սեմիրճյան) մասին Թեոդիկը գրել է ընդամենը վեց տող, բայց լեցուն ու հազեցած տողեր. «Պոլսոյ հին դաշնակցականներէն և իր ծննդավայրին շրջանակին եռանդուն կազմակերպիչներէն: Կը վարէ զանազան տէրօրներ մինչև 1895: Յետոյ կ'անցնի Պուլկարիա, և Պոլիս դարձին՝ կը մասնակցի Պապը Ալիի ցույցին և Պանք Օթոմանի դեպքին, փոխադրական գործով զբաղվելով: Երլտըզի «դժոխային մեքենայ»-ի պայթման իր դերակատարութենէն ալ վերջ՝ կը մեկնի արտասահման, ուր կը մնայ մինչեւ Սահմանադրութեան հռչակում, և կու գայ մայրաքաղաք, հոս մնալով մինչեւ իր տարագրումը» (էջ 75):

Իհարկե, կարելի է և չհամաձայնել գրքում տեղ գտած գրողներից և մտա-

վորականներից ոմանց տրված որոշ բնութագրումների և գնահատումների հետ: Դրանց մի մասը մեր օրերի համար, իհարկե, հնացած կարելի է համարել: Բայց հարցի ամբողջ էությունն էլ այն է, որ Թեոդիկը իր ժամանակի համար վերաբերմունքի և ընկալման ճանապարհ էր հարթում, առաջին խոսքն ասում ու առաջին արժևորումը հնչեցնում, որը շատ կարևոր էր մանավանդ կորստի մեծությունն ու ցավը գիտակցելու առումով: Կար և երկրորդ գործոնը. Թեոդիկի բնութագրումները մղելու էին ճշտելու իր կողմից տրված «գլուխգործոց» կամ «ամենա» որակումների ճշմարտացի կամ ոչ ճշմարտացի լինելը, որն արդեն նպաստելու էր այս կամ այն մարդու իրական վաստակի ու գործի ստուգապես ճշգրտմանը: Այդ նպատակին հանգեցնում է և այն, որ Թեոդիկը շատ հաճախ գրողի գլուխգործոց է համարում մի գործ, բայց իր գրքում տպագրում է մի ուրիշ գործ կամ հատված, որով նահատակ-ընթերցող կապի ստեղծումը ավելի է ընդլայնվում: Առհասարակ հարկ է նշել, որ Թեոդիկը ոչ մի տող ինքնանպատակ չի գրել իր հուշամատյանում: Ահա նա կես էջ ծավալով տպագրել է Սմբատ Բյուրատի «Նամակներ Այաշի բանտեն» գրությունը, որը մի կողմից ինքնին վկայություն է այն բանի, որ գրության հեղինակը բանտ է նստել (և այն էլ մի քանի անգամ), մյուս կողմից, որ նա միակը չի եղել («առանձին ալ չեմ, 84 հոգի ենք»), որ բանտում անգամ նա իր հույսը չի կորցրել ու միշտ հորդորել է յուրայիններին «մտահոգ չլինել», անգամ եղել է լավատես. «Մօտ ատենեն կ'ազատինք Աստուծով», որի վերջին բառը նաև մի վերջին հույս կամ, որ ավելի ճիշտ է, անհուսություն է պարունակում: Իսկ այն արտահայտությունը, թե «Եթե Թալաթ պեյ գիտնայ, թե ընտանեօք ինչ աղետի ու զրկանքի ենթարկուած են, վերջ պիտի տայ ներկայ վիճակիս՝ որ կը նսեմացնէ իր վեհանձնութիւնը» (էջ 39), ծաղրի լավագույն օրինակ է՝ ուղղված թուրք իշխանավորին:

Բերելով այս կամ այն նահատակի կենսագրական տվյալները՝ Թեոդիկը հաճախ է վեր հանում հայ մարդու ազգային նկարագրի բարձրությունը ընդգծող հատկանիշներ՝ նվիրում, ազնվություն, զոհողություն, հայրենասիրություն, մարդասիրություն: Այդպիսի օրինակներ են Ռ. Սևակի՝ կրոնափոխության և թուրք աղջկա հետ ամուսնանալու պայմանով ազատ արձակվելու մերժման հիշատակումը, Հայկ Թիրաքյանի մարդասիրական քայլը, երբ վերջինս ինքնակամ գնացել ու հանձնվել է ոստիկանություն՝ իր փոխարեն նույն անուն-ազգանունը կրող անմեղ աքսորյալին ազատելու համար: Ամեն օր ու ամեն ժամ ազգասիրության ու պատվարժանության այդպիսի օրինակներ են ցույց տվել նաև աքսորի ճանապարհը բռնած և բանտերում հայտնված հազարավոր հայեր, մարդիկ, որոնք իրենց կյանքով ու գործով բազմիցս հավաստել են, որ իսկական հերոսներ են: Օրինակ՝ Թեոդիկը ներկայացնում է Եղոյի (Գրիգոր Եղիազարյան) կյանքի մի քանի դրվագներ. «Բինկեանցի, 50 տարու: 1891-ին կը մտնէ Դաշնակցութեան շարքին մէջ և Պօլիս կը մասնակ-

ցի Մամբրէ վրդ.-ի տէրօրին: Կառավարութենէն կասկածուելով, կ'անցնի Կովկաս եւ մաս կ'ունենայ կրկին տէրօրական գործի մը մէջ՝ որուն հետեւանօք կը ձերբակալուի և կ'աքսորուի Սախալին: Հոն կը մնայ մինչեւ 1905, երբ Ճաբոն՝ կղզիին կէտը կը գրաւէ, զինքն ալ ազատ արձակելով: Սահմանադրութեան հռչակումին Պոլիս կու գայ եւ պահ մը առեւտրով զբաղելէ վերջ կը մեկնի Ամերիկա: Պատերազմի տարին ծննդավայրը կը դառնայ: – Սարսափի օրերուն, ծուղակը չիյնալու համար, Մուրատի հետ խմբովին կը բարձրանայ սար և մինչեւ 1916-ի վերջը քանիցս կընդհարի կանոնաւոր բանակին: Յետոյ կ'իջնէ Մամսոն, ուր ընկերով բռնի վերցնելով առագաստանաւ մը՝ բաց ծովը կ'ելլնէ, Ռուսիա անցնելու համար: Եզերապահ մը յատուկ հրահանգով Թիգէէն կը մեկնի՝ նաւը բռնելու: Քանի մը ժամ վերջ եզերապահը կը վնասուի եւ պարտուած ետ կը դառնայ, բայց ինքն ալ գնդակահար կ'իյնայ» (էջ 143-144):

Թեոդիկի խոսքում հաճախ նկատելի են ոճական-լեզվական ուշագրավ դրսևորումներ, որոնք ոչ միայն ծառայում են ներկայացվող անձի անհատական բնութագրումներին, այլև հեղինակային խոսքին և ամբողջ պատումին հաղորդում են յուրահատուկ երանգավորում: Գրիգոր Թորոսյանի մասին, օրինակ, նա գրում է. «**ազատօրէն** ծեծեց միշտ ազգայնական խնդիրներ», կամ, ասենք, Ղազար Ղազարյանի (Մարգպետ) վերաբերյալ՝ «Երկու անհատ – «մտաւորական»-ն ու «հայդուկ»-ը – կապրէին իր մէջ»: Իսկ գրող Թլկատինցուն (Հովհաննէս Հարությունյան) բնութագրում է որպէս «բազմաթիւ սաներ» հասցնող (նրա սաներից մեկը Ռ. Զարդարյանն էր), ով գրականությունը «շէնցուցած է համով հոտով արձակներով» և «Ամենացցուն դէմքը գաւառիկ գրականութիւնը մշակողներու շարքին մէջ»:

Որքան էլ Թեոդիկը հակված լինէր դէպի հայ գիրն ու գրականությունը և իր գրքում նախ և առաջ անդրադառնար նահատակ հայ գրողների կյանքին ու գործին, ու որքան էլ ինքն իր խառնվածքով լինէր, այսպէս ասած, գրական աշխարհի մարդ, չէր կարող գրքում արժանավորապէս չհիշատակել հասարակական այլևայլ ոլորտներում աչքի ընկած և չքացումի զոհ դարձած մարդկանց՝ երեսփոխանների, թերթերի աշխատակիցների, պատրիարքարանի, կրթության ոլորտի ու ազգային կառույցների ներկայացուցիչների, ինչը ոչ ավելորդ անգամ հաստատում է այն իրողությունը, որ թուրքական սպանող իր ծավալուն ընդգրկումներով ու համատարածությամբ բառիս բուն իմաստով համազգային եղեռն էր:

Այս առումով գիրքը բազում փաստեր ու ապացույցներ է պարունակում, արձանագրում հարյուրավոր մարդկանց տառապանքների ու մահվան պատմությունը, իմաստավորելով նրանց մահը՝ միևնույն ժամանակ ցույց տալիս նրանց անմեղությունը: Այդպէս նա սրտի մորմոքով է գրում նաև Եոզղատի նահատակների մասին. «Ի՞նչ գրել անգոր զոհերուն մասին. ո՞ր մտաւորականը, փաստաբանը, կամ ազգային ու կրթական գործիչները

կենսագրել, երբ տեղոյն բիրտ ավելի բնակչութենէն քանի մը իլեակ հազի կրնանք վերապրած տեսնել: Եօզղատի առաջնորդ հէք ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, որ կեանքիդ բոլոր շրջաններուն մէջ չարչարանքը միայն ճանչցար, Համիտի օրերէն մինչեւ կեղծ Սահմանադրութեան հոչակումը՝ կալանակալ եւ արգելափակ, աչքերէդ ու գրիչէդ թափելով միշտ «Կաթիլ մը արցունք այրած սրտերու»: Ընդհ. Պատերազմի սկզբնաւորութեան, երբ կարգակիցներդ մայրաքաղաքէս չէին ուզեր գաւառ մեկնիլ՝ ... դուն- Օտապաշեանի պէս «զինուոր Հայոց Աստուծոյ»- վազեցիր հասար հօտիդ քով, անոր հետ տառապելու եւ անոր հետ վկայուելու խժափար» (էջ 215):

Հայոց պետականութեան անկումից ի վեր կրոնավորները եղան մեր ազգային շահերի պաշտպաններն ու ժողովրդին առաջնորդողները: Ուստի բնական է, որ ջարդերի ու արքայների տարիների թուրքական բռնապետութիւնը իր ողջ ուժերը ուղղեց մանավանդ այդ դասի դէմ. քանդվեցին ու ավերվեցին մատուռներ, հողին հավասարվեցին եկեղեցիներ, հազարավոր եկեղեցականներ՝ գերապայծառից մինչև սարկավազ ու վարդապետ, քշվեցին անապատները, ուր դարձան իրենց սուրբ կրոնի անարգման ականատեսը և «մինչև ցեղումն արեան» բաժանեցին իրենց հոտին բաժին հասած տառապանքները: Իր գրքում Թեոդիկը ակնածանքով է խոսում շատ կրոնավորների մասին, տալիս եկեղեցականների անուններ, ովքեր ընկան իրենց «պարտականութեան ճամբուն վրայ», որոնցից էր Սահակ Տ. Վ. Օդաբաշյանը, ով գործել էր Սվազում, Ամասիայում, Մարզվանում, Սամսոնում, Բրուսայում, 1914 թ. պատրիարքական հանձնարարականով մեկնել գավառ ու դարձել «Պօլսոյ և գաւառի բոլոր աշխարհականներուն ու եկեղեցականներուն մէջէն առաջին **գոհը**» (էջ 167): Որքան էլ ցավով ու կսկիծով է խոսում հեղինակը ներկայացվող գոհերի մասին, այնուամենայնիվ ողջ շարադրանքի ընթացքում գերակշռում է մի բան. նա իր խոսքը չի ծանրաբեռնում սպանդի սարսափներով՝ դրանով իսկ ցանկանալով ասել, որ նրանք ու նրանց հիշատակը անմահ են, և իրենց մահով՝ կյանքն է, որ հաստատել են: Եվրոպական ու կրոնական հագուստներով այդ մարդիկ՝ ամեն մեկը իրական մի նահատակ ու հերոս, գրքի բոլոր էջերից, տարիների հեռավորությունից ասես քննական իրենց հայացքն են ուղղել բոլոր դարերի հայ սերունդներին՝ հարցնելու համար՝ շարունակվո՞ւմ է իրենց գործը, և արդյո՞ք իրենց մահը իզուր մի վատնում չի եղել: Նրանք՝ խառնվածքով ու զբաղմունքներով տարբեր այդ մարդիկ, որոնց միավորել էր եղեռնի կրակներից ելած հայոց ճակատագիրը, որոնց համար ոչ միայն գրականությունը կամ սքեմը փշե պսակ եղավ, այլև կուսակցական, ուսուցիչ, հողագործ, սերմնացան լինելը... Հարյուրավորներ, հազարավորներ: Օրինակնէ՛ր. գրքում ներկայացված հարյուրավոր մարդկանց կենսագրություններից... ցանկացածը:

Թեոդիկի այս գրքում խոսվում է նաև մինչև ապրիլի 11-ը ձերբակալված ու խոշտանգված մարդկանց մասին այն հասկանալի հիմնավորմամբ, որ

նրանց մահը եթե մի կողմից նախադրու՞ն էր ընդհանուր սպանդի, ապա մյուս կողմից՝ նրանք ևս հանուն «Սուրբ գործի» ու իրենց ժողովրդի ազատության կյանքը գոհասեղանին դրած մարդիկ էին, դրանով իսկ՝ նահատակներ: Այդ մարդկանցից Թեոդիկը առանձնացրել է Վանի կուսակալ Ջնդեթբեյի սաղրանքով քնած պահին խողխողված (ծանոթ պատկեր նաև մեր ժամանակների համար) Իշխանին (Նիկողայոս Պողոսյան), Վանի մեպուս Վռամյանին (Օննիկ Դերձակյան), որը դարձյալ սպանվել էր նույն կուսակալի սաղրանքներով, և ում մահվան վերաբերյալ Թեոդիկը գրում է. «Առաջին արհուն էր այս, որ կը թափուէր Վասպուրականի մէջ, որմէ յետոյ Հայաշխարհի հողը ճակատագրուած էր ծայրէ ի ծայր ներկուելու կարմիրով, ... տռամ, բեմադրուած՝ Իրթիհատի ջոլիրին կողմէ գերման **ռէժիսէտուրթեամբ**, որ «Ճերմակ Կոտորուած»-ի գիւտն ալ երկնեց» (էջ 107):

Թեոդիկի գրքում կան բնութագրումներ, որոնք առաջին հայացքից կարող են թվալ հպանցիկ և կամ պատահական, սակայն իրականում դրանք հայ տպագիր կամ գրավոր խոսքում այն առաջին ձևակերպումներն էին: Եթե միայն «կարմիր» կամ «ճերմակ» կոտորած ձևակերպումները նկատի ունենանք, ապա մեր օրերի դիտանկյունից դրանք կարող ենք որակել **պատմագիտական**, քանի որ, իրոք, նաև գերմանական ուղեղներում էին ծնվել զանգվածային տարագրման գաղափարները, մահվան ու աշխատանքի ճամբարների ստեղծումը, համատարած կոտորածները, որոնք հետագայում հիտլերյան Գերմանիայում նույն վայրագությամբ կիրառվեցին: Նրանց այդ գաղափարախոսությունը որոշակիորեն ձևակերպվեց նաև «Մայն կամպֆում», ուր, այլևայլ հանձնարարականներից գատ, առաջադրվում էր մոռացման ու լռության քաղաքականությունը, և ողբերգություն ապրող մարդուն արգելվում այլոց տեղեկացնել իր տառապանքի մասին կամ խոսել այն քաղաքականության մասին, որն այսօր ջանադրորեն իրականացնում է Թուրքիան:

Թուրքական ու գերմանական սրտակցությունը իհարկե ավելի հին իրողություն է, և այն, որ թուրքերը Արևելքի գերմանացիներն էին, իր հուշերում հաստատել է նաև արյունարբու սուլթան Աբդուլ Համիդ II-ը. «... մենք բնաւորութեամբ շատ ընդհանուր գծեր ունենք... մենք իրար լաւ հասկանում ենք... գերմանական հին կայսրերը ցանկանում էին տարածել իրենց տիրապետութիւնը մինչեւ Ալպերի այն կողմը եւ երագում էին հռոմէական մեծ կայսրութեան մասին: Իմ նախնիները եւս ցանկանում էին հիմնել մի կայսրութիւն, որ տարածուէր ամբողջ աշխարհի վրայ»¹:

Մեծ տերությունների՝ տարիներ շարունակվող այդ նենգ ու երկդիմի քաղաքականությունը հենց նկատի ուներ Երվանդ Օտյանը, երբ Կ. Պոլսի «Երգիծական տարեցոյցում» գրում էր, որ շարունակվում են հյուսիսից, հարավից, արևելքից ու արևմուտքից ի նպաստ հայ ժողովրդի եկող համակրական ցույցերը, ապա սրամտորեն ավելացնում. «Համակրական ցոյցերու

¹ Պետրոսյան Ս., Թուրքերը թուրքերի մասին, Երևան, 2011, էջ 183:

մէջ մագ մնաց պիտի խեղդուէինք... բայց փոխանակ խեղդուելու համակրական ցոյցերէ, մելիճներէ կը սկսինք ջարդուել ոչ համակրական կերպով»¹:

Թեոդիկի գիրքը, որը հիմք դրեց եղեռնի ճշգրիտ ու ընդգրկուն պատմությանը, գիտական արժէք ծառայելուց գատ, իրավաբանական վկայություն է առհասարակ մարդկային պատմության, որից ոչ միայն կարելի է հազարավոր անմեղ մարդկանց խոշտանգման ապացույցներ քաղել, այլև հավաստի վկայություններ այդ ժամանակաշրջանի իրական ջարդարարների, ինչպես 1896 թ. կոտորածների հեղինակ Նեմլի Ջադէ Հաճի Օսմանի, 1916 թ. հուլիսյան կոտորածների կազմակերպիչ Ջաքի փաշայի, Թալէաթի «աջ բազուկ» Կ. Պոլսի Կեղրոնական բանտի տնօրէն Իբրահիմ Խայթիի, Եոզղատի ջարդարար «գասապ» Քեմալի, Կ. Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյի և շատ այլոց մասին²:

Հայկական ջարդերի իրականացման գործում մեծ դեր խաղացին հատկապես քրդական աշիրեթները, չէչենական ու լեզգիական խմբերը: Մակայն էթե նրանք սպանում էին թալանի ու առևանգման համար, դառնում լոկ գործիք, թուրքերը առաջնորդվում էին քաղաքական, ազգային ու պետական նպատակներով:

Թէև իր գրքի շատ էջերում Թեոդիկը շեշտում է այդ ջարդարարների ազգային պատկանելությունը, սակայն ոչ մի տեղ սպանող չի պատճառաբանվում կրոնական հակադրման հանգամանքով: Այլ բան է, որ թուրք իշխանությունները բորբոքել էին նաև մուսուլմանների կրոնական բնագոյները, որը շատ հարիր էր իրենց ծրագրերին:

Այս գրքի մասին ամփոփիչ խոսք ասելուց առաջ հարկ ենք համարում անդրադառնալ Թեոդիկի վաստակի մեկ այլ արտահայտության ևս, որը դրսևորվեց նրա վերջին՝ «Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան» գործով, որի միայն 16 էջանոց առաջին մասն է տպագրվել (1921 թ.) հեղինակի կենդանության օրոք: Ծրագրված մյուս մեծածավալ մասերը լույս չեն տեսել քաղաքական կյանքի վատթարացման և հեղինակի՝ արտասահման մեկնելու պատճառով: Գիրքը ամբողջությամբ ընթերցողին է հասել իր գրությունից քառասունհինգ տարի անց՝ 1966 թ.: Առաջին անգամ տպագրվել է Անթիլիասում, ապա վերահրատարակվել է Նյու Յորքում 1985 թ. (այն տպագրվել է նաև որպես Բոստոնի «Պայքար» թերթի հավելված): Բնութագրելով այս գիրքը՝ Շահան Շահնուրը, ով Թեոդիկի քրոջ որդին էր, գրել է. «**Գողգոթան** գիրք մըն է, ուր կ'ըսուի, թէ տեղի ունեցաւ ոճիր մը: Ճիշդ է: Սպաննեցին մեր Տէր Հայրը: Հազարամեայ ծերունի՛ն յօշոտեցին վայրագաբար, կուտակուած ոխով եւ **բոլորովին անփույթ՝ հանդէպ հաւանական**

¹ «Երգիծական տարեցոյց», 1921, էջ 4:

² Թուրք ջարդարարների ու մարդասպանների մի մասի ցուցակը կարելի է տեսնել 1985-ին Նյու Յորքում տպագրված «Գողգոթա Հայ Հոգեւորականութեան» գրքի «Ջարդարարներ» բաժնում (էջ 560-570), ուր նրանց թիվը հասնում է 378-ի:

վրիժառույթեան (ընդգծումը մերն է – *Ա. Ա.*): Անպաշտպան էր մեր երեցը, ինչպես որ անպաշտպան էր իր հօտը»¹:

Թեոդիկի այդ գիրքը կարևոր հանրագիտարան է ոչ միայն արևմտահայության բնակավայրերի անվանումների, մարդկանց թվաքանակների, բազում կրոնավորների կենսագրական տվյալներ պարունակելու առումով, այլև երկրի մեծ ու փոքր քաղաքներում, գյուղերում ու բնակավայրերում եղած վանքերի, միաբանությունների, մենաստանների, սրբավայրերի, կրոնական հաստատությունների ճշգրտման առումով. այն ունի ոչ միայն ազգագրական, այլև աշխարհագրական ու տեղագրական նշանակություն: Հարկավ, դա այդպես է: Բայց մենք, խոսելով այս գրքի մասին, ցանկանում ենք հաստատել այն գուգահեռը, որ կա դրա և Թեոդիկի «Յուշարձան ապրիլ տասներմեկի» միջև, և որը այնքան դիպուկ նկատել է Շահնուրը՝ **սպանեցին, քանի որ բոլորովին անհոգ էին հավանական պատասխանատվության ու վրիժառության հանդեպ:** Կատարվածի համար պատասխան տալու կոչը չէ՞, որ հնչեցնում է Թեոդիկը իր երկու գրքերով, և ուժեղ լինելու հանձնարարականը չէ՞, որ անում է նա իր հիշատակած ամեն մի մահով: Եվ որ ամենակարևորն է՝ որքան էլ Թեոդիկի գրքերը վերաբերում են մահացածներին, դրանք իրականում ուղղված են ապրողներին: Հենց դա է այս երկու գրքերի խորհուրդը, նրանց գոյության իմաստը, կոչումը: Մանավանդ որ թե «Յուշարձանում» և թե «Գողգոթայում» քիչ չեն նաև այն էջերը, որոնք սպացույց են դառնում հայ ժողովրդի ապրելու ու հարատևելու իրավունք-հիմքի. հիշենք հեղինակի կողմից հիշատակվող Վանի, Մուշի, Մասունի, Վասպուրականի, Գարահիսարի, Ուրֆայի և այլ վայրերի դուրսագնական դիմադրությունները, որոնք հաստատումն են այն բանի, թե **սպանդին համակերպվելը անընդունելի զգացում է իսկական հայ մարդու համար, և որ այլևս չպետք է թույլ տալ դրա կրկնությունը:**

Նահատակվածներից շատ-շատերը չունեցան իրենց գերեզմանները, մնացին անթաղ և կամ ավագուտների տակ: Թեոդիկի «Յուշարձան ապրիլ տասներմեկի» գիրքը եղավ նահատակների մի մասի պանթեոնն ու առաջին կանգնեցված հուշարձանը՝ որպես անմահ հիշատակի լուսավոր խաչ նաև հայոց եղեռնին զոհ գնացած մյուս բոլոր մարդկանց համար:

Հ.Գ. Հոդվածում արտահայտված այն միտքը, որ Թեոդիկի գիրքը ոգեկոչում է նահատակների անվան ու գործի տևական հիշողություն, պետք է ընկալել նաև մերժամանակյա գործունեության իմաստով: Այսօր, երբ ամբողջ հայ ժողովուրդը որդեգրել է Հայոց ցեղասպանությունը աշխարհին ու Թուրքիային ճանաչել տալու արդար ուղին, խիստ կարևոր է աշխատել և այն ուղղությամբ, որ մեղքի իրենց բաժինը ընդունեն ոչ միայն կայսերական Գերմանիայի իրավահաջորդ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը,

¹ Շահնուր Շ., Զոյգ մը կարմիր տետրակներ, Պէրուք, 1967, էջ 10:

այլն Թուրքիայի տարածքում բնակվող քրդերը, չեչենները, դրբաշներն ու այլ ցեղախմբեր:

Արսրուն Աვაգյան–Первый дневник воспоминаний армянского распятыя

В статье затрагивается документальное и историческое содержание книги «Memorial to April 11» западноармянского литературного деятеля Теодика, вышедшей в свет в 1919 г., переизданной в Стамбуле в 2010 г. Автор, в частности, склоняется к мысли, что эта книга – первый памятный дневник в армянской действительности, который увековечивает память об армянских писателях, национальных деятелях, духовенстве и представителей других общественных слоев, ставших жертвой Геноцида армян. Если с одной стороны он утверждает невинность жертв, то с другой стороны он подтверждает ту истину, что все они были носителями свободолюбивых идеалов своего народа и были преданы национальным интересам. Автор склоняется к заключению, что Турция запланировала и осуществила Геноцид армян, поскольку не заботилась о вероятной ответственности и мести. Поэтому книга Теодика посвящена не только памяти погибших, но и размышлениям и деятельности живущих, констатируя, что забвение резни и смирение с ней неприемлемы, и мы не должны допустить ее повтора.

Artsrun Avagyan – The First Memorial of the Crucifixion of the Armenians

The article refers to the authentic and historical material included in the book “Memorial to April 11” by Western Armenian literary figure Teodik printed in 1919 and reprinted in 2010 in Istanbul. The author particularly expresses the opinion that this book is the first memorial in the Armenian reality perpetuating the memory of the Armenian writers, intellectuals, national activists, religious people and representatives of other social strata who became victims of the Armenian Genocide. If, on the one hand, it proves the innocence of the victims, on the other hand it confirms the truth that they were all the bearers of freedom-loving ideals of their nation, they were people of high moral values, and true patriots devoted to the interests of the nation. The author comes to the conclusion that Turkey had planned and carried out the Armenian Genocide being indifferent towards possible responsibility and vengeance. Therefore, Teodik’s book is not only in memory of the dead but it is also directed to the thoughts and activities of the living, saying that forgetting the slaughter and adapting themselves to it is unacceptable and that it should not be repeated anymore.

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ «ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ» ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր – ցեղասպանություն, երախտավորներ, ալտրոնիստական, անշահախնդրություն, փրկություն, միջամտություն, երախտագիտություն, շահագործում, աշխատուժ, հարկադիր, կաշառք, փոխադարձություն

Վերջին ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության համատեքստում բավականին լայնորեն քննարկվում է մուսուլման «երախտավորների» հիմնախնդիրը, որը ի տարբերություն Հրեական հոլոքոստի, թերևս ամենանվազ ուսումնասիրված թեմաներից է: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հազարավոր գերմանացիներ և Գերմանիայի կողմից ռազմակալված տարբեր երկրների ներկայացուցիչներ, հաճախ վտանգելով իրենց և հարազատների կյանքը, փրկել են հազարավոր հրեաների: 1953 թ. Իսրայելի Ազգային ժողովն ընդունել է նացիզմի գոհերի և դիմադրության հերոսների հիշատակը հավերժացնող օրենք, ըստ որի՝ նրանց, ովքեր ազգությամբ հրեաներ չեն եղել, բայց վտանգելով իրենց կյանքը անշահախնդրորեն օգնել են հրեաներին և փրկել նրանց կյանքը, շնորհվում էր «Երախտավորներն ազգությունների մեջ» («The Righteous Among the Nations») կոչումը:

«Երախտավորների» հիմնախնդիրը Հայոց ցեղասպանության համատեքստում մուսուլմանների կողմից հայերին օգնություն ցուցաբերելու կամ «փրկելու» տեսանկյունից քննարկելիս հետազոտողները հատկապես առանձնացնում են անձնագոհության և անշահախնդրության հարցերը¹:

Թուրք գիտնական և գրող Զիյա Մերալը 2005 թ. հանդես է եկել նմանօրինակ մի նախաձեռնությամբ: «Project Common Humanity» կոչվող կայքէջի միջոցով նա հավաքել է թուրքերի կամ քրդերի կողմից փրկված հայերի պատմությունները: «Պետք չէ մոռանալ, – գրում է հեղինակը, – որ հայերի մեծ մասը տեղահանությունից ու ջարդերից փրկվել է շնորհիվ իրենց շրջապատի թուրքերի և քրդերի»: Նա կոչ է անում չմոռանալ օսմանյան բոլոր այն պետա-

¹ Տե՛ս **Մարության Հ.**, Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները, «Պատմաբանասիրական հանդես», 2011, թիվ 2, էջ 29:

կան պաշտոնյաներին, որոնք մերժել են տեղահանության հրամանը ու մեծարել 1915 թ. թուրք «շինդլերներին»¹:

Թուրքագետ Հակոբ Չաքրյանը թուրքերի կողմից հայերին և հատկապես հայ երեխաներին փրկելու գործընթացին նվիրված հոդվածում նշում է, որ դա չի կարելի «փրկություն» կոչել, քանի որ «փրկվածների» մեծ մասը եղել է երիտասարդ աղջիկներ և փոքրահասակ երեխաներ, որոնց բռնի հավատափոխ էին անում, ստիպում մոռանալ մայրենի լեզուն և թրքաճառ: Հեղինակը գրում է. «Այդ փրկվածների մեջ չկա մի երեխա, որին պահպանած լինեն հայ լինելու համար կամ ընտանիքի հարկի տակ ընդունեն՝ հարգելով հայերի լեզվական, հոգևոր ու մշակութային արժեքները»: Նա նաև նշում է, որ մարդու ներաշխարհի վրա բռնանալու միջոցով ֆիզիկական գոյության պահպանումը չի կարելի համարել «փրկություն», քանի որ մարդու ներաշխարհն ու ֆիզիկական կառուցվածքն ամբողջությունն են²:

Խնդրի վերաբերյալ Հայկ Դեմոյանը նշում է, որ չնայած կան բազմաթիվ օրինակներ ցեղասպանությունը վերապրածների գրավոր և տպագիր հուշերում, ինչպես նաև բանավոր պատմություններում, որոնք վկայում են, որ շարքային մուսուլմանները (թուրքեր, քրդեր, արաբներ) հայ անհատներին և ամբողջական ընտանիքների օգնել են գոյատևելու, թեկուզ և՛ ժամանակավորապես, այնուամենայնիվ այս թեման շոշափելիս կարևորագույն խնդիրներից է պատմությունների դասակարգումը³:

Հայոց ցեղասպանության պարագայում երախտավորների խնդրի վերաբերյալ ազգագրագետ Հարություն Մարությանը առաջարկում է այն քննարկելիս պատասխանել թերևս ամենաթիրախային հարցին, թե ի՞նչ է նշանակում «փրկություն» բառեզրը և ի՞նչ ընդգրկում ունի այն: Նա առաջարկում է համեմատություններ անցկացնել հրեական փորձի հետ և աշխարհի կողմից ճանաչված և արդեն կես դար գործող մեթոդաբանությունը⁴ կիրառել Հայոց

¹ Տե՛ս www.projectcommonhumanity.net (ղիտվել է 17.10.2013 թ.): Հեղինակը նկատի ունի գերմանացի Շինդլերին, որը փրկել է հազարավոր հրեաների կյանք և հանրահայտ դարձել դրանով:

² **Չաքրյան Հ.**, 1915-ին ոչ մի թուրք որևէ հայ երեխայի չի փրկել, «Ձայն Համշենական», 2011, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիվ 9-10 (86-87):

³ **Դեմոյան Հ.**, Արդար թուրքեր. ովքե՞ր են, և ինչու՞ են նրանք կարևոր, – ՀՅԹԻ ԷԼ-Թերթ, http://www.genocide-museum.am/arm/g_brief_15.php (ղիտվել է 12.02.2015):

⁴ Յադ Վաշեմի հիմնական խնդիրներից մեկն Իսրայելի պետության և հրեա ժողովրդի անունից շնորհակալություն հայտնելն է այն ժողովուրդների ներկայացուցիչներին, ովքեր, վտանգելով իրենց կյանքը, Հոլոքոստի ժամանակ փրկել են հրեաներին: Վերջինս ամրագրված է Յադ Վաշեմի հիմնադրման օրենքում: Երախտավորի կոչումը շնորհելու չափորոշիչները որոշվել են 1963 թ.: Կազմվել է Իսրայելի Գերագույն դատարանի կողմից ղեկավարվող հանձնաժողով, որը հետազոտում է յուրաքանչյուր մասնավոր դեպք և պատասխանատվություն է կրում երախտավորի կոչումը շնորհելու համար: Այդ կոչումը շնորհվում է հետևյալ չափորոշիչներով. 1) փրկողը գիտակցել և ենթադրել է հրեայի՝ մասնավորապես փրկությունը, 2) նրա գործողությունները չեն հետապնդել կանխիկ գումարով պարգևատրման կամ այլ փոխհատուցման նպատակներ, ինչպիսիք են, օրինակ, փրկվողի կրոնափոխությունը, որդե-

ցեղասպանության պարագայում՝ այսպիսով տարանջատելով «խկական» փրկությունը «կեղծ» փրկությունից¹:

Հայոց ցեղասպանության համատեքստում մուսուլման հասարակության կողմից այլասիրական կամ մարդասիրական վարքի վերաբերյալ մեզ հայտնի միակ աշխատությունը, թերևս, Ռիչարդ Հովհաննիսյանի հոդվածն է, որտեղ հետազոտված են Հայոց ցեղասպանությունը վերապրածների 527 բանավոր պատմություններ, որոնցից 183-ում կան տեղեկություններ մուսուլմանների միջամտության մասին²: Հեղինակը փորձել է պարզաբանել փրկողների սոցիալական ու տնտեսական կարգավիճակը և միջամտության դրդապատճառները: Ռ. Հովհաննիսյանն իրավացիորեն նշում է, որ բավականին բարդ է սահմանել միջամտության դրդապատճառները կամ ներկայացնել անհատական ընդգրկվածության սոցիալ-հոգեբանական պատկերը: 183 վերապրողներն ընդհանուր առմամբ փաստում են 215 թուրքերի, քրդերի և արաբների 233 միջամտություն: Այս բանավոր պատմությունների համատեքստում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջամտողների մեծ մասը եղել է շարքային քաղաքացիներ, որոնք ցուցաբերել են փոքրածավալ օգնություններ, օրինակ՝ փրկել են մեկ կամ մի քանի հոգու՝ նրանց իրենց հովանավորության ներքո վերցնելով մի քանի օրով կամ տարով: Հեղինակն առանձնացնում է նման վարքագծի մի շարք դրդապատճառներ՝ տնտեսական, հումանիտար, կրոնական, սեռական շահագործման, կաշառքի, հարկադիր աշխատանքի, աստվածավախության կամ բարոյական զգացումների, երեխաներ չունենալու պատճառով երեխաների որդեգրման: Հետաքրքրական է այստեղ առանձնացնել այն հանգամանքը, որ ըստ հեղինակի՝ օգնություն ցուցաբերելու դեպքերը մեծ մասամբ հիմնվել են մարդասիրական զգացումների վրա: Սակայն նա միաժամանակ մատնանշում է, որ թեև պարտիզմը³ համարժեք է ընդհանրապես որևէ շահ չհետապնդելուն,

գրությունը և այլն, և եթե նա գումար է վերցրել ապա միայն փրկության հաջողությունն ապահովելու, այլ ոչ թե հարստանալու նպատակով, 3) առկա է եղել իրական վտանգ փրկողի կամ նրա հարազատների համար (երկու պարագայում հաշվի է առնվում փրկողի տնտեսական և սոցիալական ապահովվածությունը), 4) բոլոր վերոնշյալները հաստատվում են այն վերապրողների վկայություններով, որոնց օգնություն է ցուցաբերվել, կամ փրկության փաստը և վերջինիս պայմաններն ապացուցող համապատասխան փաստաթղթերի առկայությամբ: Տե՛ս <http://www.yadvashem.org/yv/ru/righteous/about.asp>, https://ru.wikipedia.org/wiki/Праведники_мира (կայք էջը դիտվել է 19. 02. 2015 թ.):

¹ Մանրամասն տե՛ս **Մարություն Հ.**, Երախտավորների ինստիտուտի խնդիրը հայոց և հրեից պարագաներում (անտիպ): Շնորհակալություն ենք հայտնում Հ. Մարությանին ձեռագիրը մեզ տրամադրելու համար:

² Նշենք, որ փրկողներին կամ երախտավորներին հեղինակն անվանում է «միջամտողներ»: Տե՛ս **Hovannisian R.**, *Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide*, in: *The Armenian Genocide. History. Politics. Ethnics*, New York, 1992, p. 1:

³ «Ալտրոնիզմ» եզրույթը ծագում է ֆրանսերեն «altruisme» բառից, որի հիմքում ընկած է լատինական «alter»՝ «այլ», արմատը և մեկնաբանվում որպես բարոյական սկզբունք, որը ենթադրում է այլ մարդկանց բարօրությանը նպատակաուղղված անձնուրաց գործողություններ:

այդուհանդերձ նշված դրդապատճառները նպատակահարմար է գտնում կա՛մ վերախմբավորել, կա՛մ ընդհանրապես շրջանցել¹:

Մեր կողմից քննարկվող երևույթը առաջին հայացքից դժվարբնութելի է, քանի որ դրա էությունը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել հետևյալ խնդիրները. ի՞նչով է պայմանավորված նման վարքագիծը, ի՞նչ մտադրություններ են ունեցել կամ ի՞նչ նպատակներ են հետապնդել «երախտավորները»: Խնդրի ուսումնասիրության համար կարևոր ենք համարում առանձնացնել մասնավորապես հետևյալ երկու հիմնական հարցադրումները՝ ովքե՞ր են փրկողները, և ի՞նչպես են նրանք վարվել:

Հոգեբան Սթիվեն Բաումը, ուսումնասիրելով «երախտավորների» վարքագիծը Հոլոքոստի օրինակով, նշում է, որ ցանկացած հասարակության մեջ կգտնվեն մարդիկ, ովքեր կընդդիմանան կառավարությանը և կվտանգեն իրենց կյանքը «զոհերին» փրկելու համար²: Ցեղասպանության համատեքստում ակտրոլիզմի առաջին ուսումնասիրողներից մեկը՝ Նեչամա Թեքը, ուշադրություն է դարձրել փրկողների սոցիալական խմբին, կրթության մակարդակին, քաղաքականության մեջ ընդգրկվածությանը, կրոնական պատկանելությանը, հակահրեականությանը կամ բարեկամությանը հրեաների հետ և հանգել այն եզրակացության, որ այս հանգամանքներից և ոչ մեկը ակտրոլիստական վարքագծի նախադրյալ չէ³:

Պատահական չէ, որ նման անհատները դուրս են մնում տվյալ հասարակությունից և ընկալվում որպես «օտարներ», և նրանց նկատմամբ սահմանվում են նաև պատիժներ: Օրինակ՝ Հրեական հոլոքոստի ընթացքում հրեաներին փրկողները պիտակավորվում էին որպես «հրեասերներ»⁴:

«Թիրախային խմբից» որևիցե մեկին օգնություն ցուցաբերելու, թաքցնելու դեպքերը բացառելու կամ սահմանափակելու համար տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ հստակ պատիժներ էին սահմանվել նաև Օսման-

Այն շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի փիլիսոփա Օգյուստ Կոնտը (1798-1857) բրիտանական բարոյական փիլիսոփայության համատեքստում՝ ի հակակշիռ էգոիզմի:

¹ **Hovannisian R.**, նշվ. աշխ., էջ 175-176:

² **Baum S.**, *The Psychology of Genocide. Perpetrators, Bystanders, and Rescuers*, New York, 2008, p. 208. «Ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների հանրագիտարանը» խնդրի առնչությամբ փաստում է, որ Գերմանիայի կողմից ռազմակալված ցանկացած երկրում եղել են մարդիկ, ովքեր վտանգել են իրենց կյանքը պաշտպանելու համար հրեաներին: Տե՛ս **Tec N.**, *Rescuers, Holocaust*, in: *Encyclopedia of Genocide and Crimes against Humanity*, v. 2, Editor in chief Shelton D., Detroit, New York, etc., 2005, p. 895: Ըստ պատմաբան Քրիստոֆեր Բրաունինգի տվյալների՝ գերմանացի զինվորների 10-20 տոկոսը մասնակցություն չի ունեցել հրեաների սպանություններին: Տե՛ս **Browning Ch.**, *Ordinary men. Reserve Police Battalion 101 and the Final Solution in Poland*, London, 2001, p. 159: Իսկ համաձայն Յադ Վաշեմի կայքէջի տվյալների՝ Հրեական հոլոքոստի պարագայում հաշվվում է 49 երկրի ու ազգության 25.271 երախտավոր, ովքեր պատկանում էին ամենատարբեր սոցիալական խմբերի, ունեին տարբեր կրթություն և կարգավիճակ: Տե՛ս www.yadvashem.org (դիտվել է 28. 08. 2014 թ.):

³ Տե՛ս **Tec N.**, նշվ. աշխ., էջ 898:

⁴ Տե՛ս **Baum K.**, նշվ. աշխ., էջ 201:

յան կայսրությունում: Նրանք պիտակավորվում էին որպես «դավաճաններ»: 1915 թ. երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի «ստորագրությունը կրող հեռագրում նշված է, որ հայերից որևէ մեկին հովանավորող մահմեդականը մահապատժի է ենթարկվելու իր բնակավայրում և տունն էլ հրդեհվելու է»¹: Նախագգուշացվում էին նաև թուրք զինվորականները և պետական պաշտոնյաները: Հրամանները չկատարելու դեպքում՝ «եթե հովանավորողը պետական պաշտոնյա լինի, ապա գործից վտարվելով՝ դատվելու է զինվորական դատարանով: Իսկ եթե զինվորական լինի, ապա որպես հանցագործ կանգնելու է ռազմական բարձր աստյանի առաջ»²:

Արամ Անտոնյանի կողմից շրջանառության մեջ դրված թուրքական վավերագրերից մեկում, որոնք տրամադրել է Հալեպի գաղթականության տեսչության գլխավոր քարտուղար Նայիմ բեյը, առկա է նաև Թալեաթի նախագգուշացնող հրահանգը. «Դարեր է ի վեր Թուրքիոյ համար փորձանքի տարր դարձող եւ վերջին ատեններս՝ բովանդակ օսմ. կայսրութիւնը արիւնի մէջ խեղդելու ջանացող Հայոց գոյութիւնը ապահովել ուզողները իբր *հայրենիքի դաւաճան* (ընդգծումը մերն է – Շ. Գ.) պէտք է պատժել տարբեր պատրուակով մը եւ պատկանեալ պաշտօնեաներուն տեղեկացնել գաղտնաբար»³: Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններում կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ մունետիկները շրջում էին բնակավայրերում և անընդհատ հիշեցնում հրամանի մասին⁴:

Այնուամենայնիվ, հիմնվելով վերապրողների հուշագրություններում և օտարերկրյա դիվանագետների զեկուցագրերում տեղ գտած վկայությունների վրա, կարելի է պայմանականորեն դասակարգել Օսմանյան կայսրությունում մուսուլմանների կողմից «երախտավորության» դրսևորման դրդապատճառները, նպատակները և խմբավորել դրանք՝ բացահայտելով, թե նման վարքագիծն անշահախնդի՞ր էր, և նպատակահարմար է արդյոք դա մահվան դատապարտված հայերի փրկություն համարել:

Հայոց ցեղասպանության ընթացքում մուսուլման հասարակության կողմից հայությանն օգնություն ցուցաբերելու դրդապատճառներն ու հիմնական նպատակները բաժանել ենք մի քանի պայմանական խմբերի՝ հիմնականում հիմք ընդունելով բանագետ Վերժինե Սվազյանի հավաքած 385 հուշ-վկա-

¹ «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափագյանի, Երևան, 1988, էջ 44:

² Նույն տեղում:

³ **Անտոնյան Ա.**, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 99:

⁴ Տե՛ս **Կճիկեան (Առաքելեան) Լ.**, Մօրենիկ եւ իր սեւ տարին, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 51:

յությունները և գրույց-վկայությունները¹, որոնք ներառում են հայերին մահից փրկելու կամ պարզապես նրանց օգնություն ցուցաբերելու 104 մասնավոր դեպք: Հանդիպում են դեպքեր, երբ վերապրողներն իրենց անցյալը վերհիշելիս հպանցիկ, ընդհանուր բնույթի նկարագրություններով են նշում, որ երբեմն հայերը փրկվել են շնորհիվ ցուցաբերած օգնության կամ միջամտության: Հայոց ցեղասպանությունը վերապրածների վերհիշած մասնավոր դեպքերում թվաքանակով ամենաշատն օգնություն են ցուցաբերել թուրք և արաբ տղամարդիկ: Նրանք, որպես կանոն, կարողանում էին թաքցնել կամ ապաստան տրամադրել ընդամենը մի քանի հոգու. փրկվածների քանակը հազվադեպ է գերազանցել տասը:

104 վկայություններում հանդիպող միջամտողների ընդհանուր պատկերն ըստ դեպքերի քանակի այսպիսին է.

Էթնոս	քանակ	անուն	սեռ	Ժամկետն ըստ օրերի, շաբաթների, ամիսների և տարիների	փրկվողների քանակը
Եզդի, քուրդ	17	4	10-տղամարդ 5-կին 2-չի նշվում	7-օրով 1-շաբաթով 2-ամսով 3-տարով 5-չի նշվում	58
արաբ	29	3	17-տղամարդ 7-կին 3-ընտանիք 5-չի նշվում	12-օրով 11-տարով 6-չի նշվում	33
թուրք	39	5	24-տղամարդ 11-կին 2-ընտանիք 3-չի նշվում	15-օրով 4-ամսով 11-տարով 9-չի նշվում	214
հույն	5	X	4-տղամարդ 2-կին	3-տարով 3-չի նշվում	19
չեչեն	2	X	2-տղամարդ	1- օրով 1-ամսով	10
չերքեզ	1	X	1-տղամարդ	1-չի նշվում	1
չի հիշատակվում	11	2	5-տղամարդ 1-կին 4-չի նշվում	3-օրով 5-տարով 3-չի նշվում	19
ընդհանուր քանակը	104	14- հայտնի 91-ան- հայտ	64-տղամարդ 26-կին 16-չի նշվում 5-ընտանիք	36-օրով 1-շաբաթով 7-ամսով 33-տարով 27-չի նշվում	354

¹ Տե՛ս **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011:

Առաջարկվում է այս ցուցակի տեղը փոխել Միջամտության
դրդապատճառները

Էթնոս	եզդի, քուրդ	արաբ	թուրք	հույն	չեչեն	չերքեզ	չի նշվում
Հարկադիր աշխատանք	3	13	8	X	X	X	6
Հարկադիր ամուսնություն	X	3	4	X	X	X	X
Նյութական շահ	2	X	4	2	X	X	1
Մարդասիրության	1	2	4	2	X	X	X
Նախագուշացնող- ներ	X	X	2	X	X	X	X
Փոխադարձության սկզբունքով	4	1	6	X	X	1	3
Երեխա չունենալու պատճառով	X	1	4	X	X	X	X
Չի հիշատակվում	6	7	7	1	X	X	7

Հենվելով վերոհիշյալ սկզբնաղբյուրների, ինչպես նաև այլ հուշագրությունների վրա՝ օգնություն ցուցաբերելու կամ մահից փրկելու դրդապատճառները պայմանականորեն բաժանել ենք հետևյալ խմբերի՝ *հարկադիր աշխատանքներում օգտագործելու, նյութական շահ հետապնդելու, հարկադիր ամուսնությունների, աջակցության «հումանիտար» նպատակների (ղեպքեր, երբ պատճառը չի հիշատակվում), երախտագիտության զգացում, երեխաներ չունենալու, փոխհատուցում ստանալու ակնկալության:*

Հարկադիր աշխատանքներում օգտագործելու դրդապատճառ

Հայաբնակ բնակավայրերից և աքսորի ճանապարհներին առևանգված կամ միջամտության ու ցուցաբերած օգնության պատճառով ողջ մնացած հայ կանայք, դեռատի աղջիկներն ու երեխաները տարվում էին մուսուլմանական ընտանիքներ, իսլամացվում, անվանափոխվում, սակայն որպես կանոն չէին ինտեգրվում ընտանիքում և շահագործվում էին որպես հավելյալ աշխատուժ:

1895 թ. Մեբաստիայի Տերիկ գավառակում ծնված Խոթեն Գյուլբենկյանը¹ շատ դիպուկ է նկարագրում մեզ հետաքրքրող խնդիրը. «Վերջապես հասանք Շեհիր դշլա, որը մեր վերջին հանգրվանն էր լինելու: Մեր հասնելուց մի որոշ ժամանակ անց եկան մի քանի պաշտոնյաներ: Նրանք հավաքեցին բոլոր պատանիներին ու աղջիկներին: Թուրքերը մոտենում էին նրանց և որպես

¹ Հուշագրությունը գրի է առնվել 1989 թ.:

ապրանք ընտրում ու տանում էին տղաներին՝ բատրակության, բանվորության, իսկ աղջիկներին՝ իրենց ընտանիքներում ծառայության: Աղջիկներից ամենագեղեցիկներին տանում էին իրենց հարեմները: Ինձ վերցրեց Շեհիր դշլայի մի նպարավաճառ՝ իր խանութում աշխատելու: Այսպես իմ կյանքը փրկվեց...»¹: Մեկ այլ վերապրող՝ Հովհաննես Գասպարյանը², պատմում է, որ 1915 թ. հուլիսին իրենց գյուղի բնակչությանը քստրել են և հասցրել Պոզկի գյուղաքաղաք. «Մենք չէինք իմանում՝ մեր ճակատագիրը ինչ է լինելու: Մյուս օրը եկան հիսուն-վաթսուն տարեկան մարդկանց առանձնացրեցին, մեզ էլ հետը և ասին, որ գյուղերն են դրկելու: Մեզ հետ մի ընտանիք կար, որոնց տղայի անունը Ռուբեն էր: Նրա հետ մեզ հրամայեցին գոմերը մաքրել, իսկ մայրս նրանց տնային գործերն էր անում: Հետո դարձա այդ գյուղի չոբանը, իսկ հետո՝ գյուղի մուլլայի բատրակը: Մուլլայի մոտ ձմեռվա աշխատանքս էր անասունների կերակրելը, ջրելը, գոմ մաքրելը, եզներին խնամելը, իսկ զարնանը և աշնանը՝ վար կանեի եզան գութանով, որի համար առավոտյան լուսաբացին էի վեր կենում, եզներին կերակրում, գնում էինք արտը վարելու, իսկ ամռանը, բերքահավաքի ժամանակ, հանգիստ չունեինք: Ցորենը, գարին հնձում էինք ձեռքի մանգաղով, լուսաբացից մինչև մութն ընկնելը: Այդ հնձած ցորենն ու գարին եզան կամով էինք ծեծում: Գիշեր ու ցերեկ աշխատում էի, ամենաձանր ամիսներն էին»³: Իսկ Համբարձում Սահակյանը⁴ վերհիշում է. «Ես մինակ մնացի: Օր մը ավագի վրա պառկած էի՝ անոթի ու տկլոր, մի արաբ մարդ եկավ, մոտեցավ ոստիկանին, փող տվեց, ասաց. «Ես սրան տանեմ, ինձ մոտ թող աշխատի»: Առավ տարավ ինձ իր մոտ որպես ծառա: Ես էդ մարդու մոտ չոբանություն էի անում: Էդ արաբը իմ կյանքը փրկեց: Ես միշտ օրհնում եմ նրան: Ճիշտ է գոմում էի ապրում, բայց կյանքս փրկված էր»⁵: Էրզրումցի Վարդանուշի մասին նրա դուստրը պատմում է, որ մի թուրք զինվորական նրան տարել է որպես սպասուհի իր կնոջ համար⁶:

Որոշ պատումներ վկայում են այն մասին, որ հայերն անձամբ են դիմել ծանոթ կամ պատահական մուսուլմաններին իրենց կյանքը փրկելու խնդրանքով՝ փոխարենն առաջարկելով աշխատել նրանց համար: Խարբերոցի մի բնակչի վկայության համաձայն, որը գրի է առնվել 1915 թ. հուլիսի 11-ին Հայ-սիրիական ամերիկյան նպաստամատույց հանձնախմբի աշխատակիցների կողմից, հաճախ մայրերն իրենք էին առաջարկել մուսուլմաններին վերցնել իրենց երեխաներին: Թուրքերն ընտրում էին այդ աղջիկ-

¹ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 318:

² Ծնվել է 1902 թ. Էսքիշեհիրի Յայլա գյուղում: Հուշագրությունը գրի է առնվել 1973 թ.:

³ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 405-406:

⁴ Ծնվել է 1898 թ. Սեբաստիայում: Հուշագրությունը գրի է առնվել 1970 թ.:

⁵ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 321: Տե՛ս նաև նույն տեղում, էջ 186, 202, 204, 226, 229, 254, 279, 288, 292, 314, 321, 346, 347, 353, 362-363, 385, 425, 426, 427, 434, 443, 447, 457, 467, 505, 517, 530-531, 564-565:

⁶ ՉՅԹԻ-ի գ. ֆ., բաժին 4, տեսագրություններ, թիվ 15 (2 ր. 41 վ.):

ներից ու երեխաներից իրենց մոտ ծառայության տանելու համար, նույնիսկ աղջիկներին բժշկական քննության ենթարկում՝ առավել առողջներին ընտրելու նպատակով¹: Նրանք, որպես կանոն, հարկադրական աշխատանքներ էին կատարում տնային տնտեսության, անասնապահության և հողագործության ոլորտներում: Հետաքրքրական է նշել, որ հայերն իրենք հաճախ այս հանգամանքն ընկալում էին որպես փրկություն մոտալուտ մահից: Հարկ է նշել նաև այն, որ հաճախ երեխաները պատմում էին այն մասին, որ աշխատանքը «լավ» չկատարելու դեպքում իրենք նաև պատժվում էին տերերի կողմից: Ըստ ընդունված կարգի՝ նրանք գիշերում և ճաշում էին ընտանիքի անդամներից առանձին:

Բիթլիսի Խալթիկ գյուղում 1902 թ. ծնված Հմայակ Բոյաջյանը² վերհիշում է, թե ինչպես է իրենց գյուղի կոտորածի ժամանակ փախել լեռները, որտեղ հանդիպել է քրդերին. «Երկու քյուրդ եկան ինձ քարշ տվին: Քյուրդը ուզեց ինձ սպանել, կողքինն ասաց՝ մեղք է: Ինձ տարան իրենց տուն: Ցերեկն անասուններին տանում էի արածեցնելու, գիշերը տուն էի գալիս: Էդ քրդական գյուղում ես հանդիպեցի Մանուկյան Սաքանազին, նա մեր գյուղացի էր, և միասին սկսեցինք արածեցնել անասուններին: ...էն տունը, որ ես ապրում էի, ինձ առանձին էին ճաշ տալիս: Մեկ էլ քրդի երեխաները գդալը վերցնում էին, գալիս էին իմ ճաշն էին ուտում: Էսպես ապրեցի մինչև ձմեռ»³:

Իսկ Դերջանի Բուլք գյուղում ծնված Հովհաննես Հարությունյանը 1915 թ. մայիսին Կարնո դաշտի հայկական գյուղերի տեղահանության և կոտորածի մասին վկայում է, որ տասնմեկ տարեկան հասակում Կամախի կիրճից փրկվել է մի քրդի օգնությամբ: Ըստ նրա վկայության՝ այդ քրդի ընտանիքի անդամները նրան թույլատրել են ճաշել իրենց հետ, ինչը հազվադեպ երևույթ է. «Ինձ Մելիդ քիւրտը տարաւ տունը. ախոռը կը մաքրէի, հօտադութիւն կընէի: Օրական երեք անգամ հաց կու տար, քիւրտի հետ հաց կ'ուտէի»⁴:

Մուսուլմանների մոտ աշխատանք կատարելու շնորհիվ ողջ էին մնում առանձին անհատներ կամ ընտանիքի մի քանի անդամներ: Հազվադեպ են եղել այնպիսի դեպքեր, երբ այս կերպ միաժամանակ փրկված լինեն բազմաթիվ մարդիկ: 1916 թ. պատահաձ նման մի դեպքի մասին, օրինակ, պատմում է վերապրող Սարգիս Պալապանյանը: Նա վկայում է, որ մի ամբողջ գյուղ փրկվել է՝ աշխատանքի անցնելով գյուղատիրոջ մոտ. «Այս կամուրջին

¹ The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Fallodon. Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce, London, p. 262.

² Հուշագրությունը գրի է առնվել 1989 թ.:

³ ՀՅԹԻ-ի գ. ֆ., բաժին 4, տեսագրություններ, թիվ 15 (2 ր. 41 վ.):

⁴ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ»: Փաստաթղթերի ժողովածու, հ. III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2012, էջ 103:

(խոսքը վերաբերում է Եփրատի կամրջին, որը գտնվում էր Բաղդադ տանող շոգեկառքի գծի մոտ – Հ.Գ.) մօտիկը կը գտնուէր թրքական գիւղ մը դէմն ու դէմը Ճարապլուս հնամենի քաղաքին: Այդ գիւղը Ջօրմաղրա կը կոչուէր: Գիւղատէրը՝ Իբրահիմ Միրքէլամգաստէ եւ իր որդին՝ Ֆատը Պէյ, բարեսիրտ մարդիկ էին: Անոնք օրուցի բոլոր հայ գիւղացիները բերեր կ'աշխատացնէին իրենց ազարակներուն մէջ որպէսզի մեր հայրենակիցները տարագրուէլէ ազատուէին»¹: Համաձայն վերապրողի մեկնաբանության՝ գյուղատերն այս քայլին դիմել է հայերին տարագրությունից փրկելու համար, սակայն իրական նպատակի բացահայտումը բավական բարդ է. նա տեղեկություններ չի հաղորդում նրանց հետագա ճակատագրի մասին:

Հաջողվում էր ողջ մնալ, թերևս, միայն արհեստավորների ընտանիքների անդամներին, ովքեր շահագործվում էին բանակի կարիքները հոգալու և անհատներին ծառայելու համար: Իբրև աշխատուժ օգտագործելու համար խնայում էին հատկապես կոշկակարներին, դերձակներին, վարսավիրներին, պայտարներին, շինարարներին, ջրաղացպաններին:

Հայոց ցեղասպանությունը վերապրած Մեսրոպ Մեսրոպյանը² յոզղաթցիների՝ 1915 թ. օգոստոսին տեղի ունեցած տեղահանության մասին վկայում է. «Քաղաքի ամբողջ հայությունն ըստ հրամանի պիտի տեղահանվէր, պիտի մնային բացառապես զինվորական բժիշկ, դոկտոր Մկրտիչ Քեչեյանի ընտանիքը, քաղաքապետարանի աշտարակային մեծ ժամացույցի վարպետ Ղազարոս Յոսմանյանը, խաչմերուկների գիշերային լույսերը վառող Պաղջեյանի ընտանիքը, դեղագործ Դանիէլը, 15 հոգի ալ երկաթագործ վարպետներ՝ բոլորն էլ իսլամանալու պայմանով»³: 1908 թ. Սեբաստիայի Խոչիխար գյուղում ծնված Հովհաննէս Չաղրջյանը վերհիշում է. «Հորս, որպէս շինարարի, պահել էին գյուղում. երբ հայերին հավաքած տանում էին սպանելու, թուրք մեծավորը, որը հորս հարգում էր, կըսէ հորս. «Հիսուն հոգու հավաքէ, որ աշխատեն»: Հայրս տեսնում է թները կապկպված հայերին, որոնց տանում էին մորթելու, նրանց միջից վաթսուն հոգու կընտրէ, նրանց կյանքը կըփրկէ, կտանի իր մոտ, միասին կսկսեն շենքեր կառուցել»⁴:

Ըստ Յոհաննէս Լեփսիուսի տեղեկագրի՝ Ջեյթունի հայության տեղահանության ժամանակ՝ 1915 թ. մայիսին, այնտեղ մնացել են և տարագրությունից խուսափել միայն վեց հոգի, ովքեր տարբեր արհեստների էին տիրապետում⁵: Ազգային բյուրոյի նախագահի տեղակալ Հովսէփ Խունունցի՝

¹ Պալապանեան Ս. (Պալապան Խոճա), Կեանքիս տաք ու պաղ օրերը (Այնթապ-Քեսապ-Հալէպ), Հալէպ, 1983, էջ 106:

² Ծնվել է 1900 թ. Յոզղաթում: Հուշագրությունը գրի է առնվել 1970 թ.:

³ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 357:

⁴ Նույն տեղում, էջ 345, տե՛ս նաև էջ 280, 309, 366-373:

⁵ «Գաղտնի տեղեկագիր Տոթթ. Եօհաննէս Լեփսիուսի: Նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերմանահայկական ընկերութեան, Հայաստանի ջարդերը», Կ. Պոլիս, 1919, էջ 14:

Կարինում հայերի կոտորածների և տեղահանության մասին 1916 թ. փետրվարի 23-ի զեկուցագրի համաձայն՝ Էրզրումում շուրջ հիսուն հայ արհեստավորների հաջողվում է ողջ մնալ գորքի համար կոշիկ, զգեստ կարելու անհրաժեշտությամբ¹: Խոտորչուրցի Կարլոս Չախալյանը, ով սովորում էր Մխիթարյանների վարժարանում և Էրզրումցիների երկրորդ գաղթի ժամանակ տեղահանվել էր նրանց հետ, պատմում է, որ հանդիպել է վաճառական Արմենակ Հալեբյանին, որն իր ամբողջ ընտանիքով, 40 այլ ընտանիքների հետ առերես իսլամն ընդունելով, որպես կարևոր արհեստավոր փրկվել էր ու այդ ժամանակ աշխատում էր Ուրֆայում²:

Ըստ ականատեսների վկայությունների՝ Տարոնում կառավարության հրամանով 1915 թ. հուլիսին հինգ հարյուր արհեստավոր կարողացել է խույս տալ տեղահանություններից³: Մուշի Վարդենիս գյուղի կոտորածը վերապրած Սարգիս Մխիթարյանն այս առնչությամբ վկայում է. «Այսպիսով ազատուեցին ջրաղացպանները, որոնց թուում և ես: Ինձ կանգնեցրին մեր գիւղի ջրաղացի վրայ, որ զօրքի համար ալիւր էր աղում»⁴: Խարբերդ նահանգի Բերրի քաղաքի տեղահանությունը և կոտորածը վերապրած Հակոբ Հովոբիկյանը⁵ վկայում է, որ 1915 թ. հունիսին տեղի տղամարդկանց հավաքում են Թլաբերդում և կոտորում. «Թլաբերդի ողբերգությունից Բաղնիք գյուղի բնակիչ Մեհմեդ բեգի օգնությամբ փրկվեց միայն տասնյոթամյա Խոսրով Նալբանդյանը, որովհետև նա պայտարի որդի էր, իսկ Մեհմեդ բեգը տասնյակ ջորի և ձի ուներ»⁶:

Այսպիսով, տեղահանություններից և մահից փրկվածների առաջին խմբում ընդգրկված էին այն երեխաներն ու կանայք, որոնք որպես աշխատուժ համալրեցին մուսուլմանական ընտանիքները, որոնց տղամարդկանց գերակշռող մասը գտնվում էր բանակում, և որոնք աշխատուժի կարիք ունեին: Դա նպաստեց, որպեսզի մուսուլմանական շատ ընտանիքներ պատերազմական իրադրության հետևանքով ստեղծված տնտեսական ծանր պայմաններում կարողանան պահպանել իրենց նախկին սոցիալական վիճակը և բարելավել այն: Նրանցից բացի, նշանակալից թիվ էին կազմում նաև

¹ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», հ. III, էջ 403:

² ՀՅԹԻ-ի գ. ֆ., բաժին 8, ձեռագիր հուշագրություններ, թղթ. 97:

³ **Բղէեան Ս. և Մ.**, Հարագատ պատմություն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 433:

⁴ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ»: Փաստաթղթերի ժողովածու, հ. II, Բիթլիսի նահանգ, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2012, էջ 274:

⁵ Օնվել է Խարբերդ նահանգի Բերրի քաղաքում 1902 թ.: Հիշողությունները գրի է առել 1980-ական թթ.:

⁶ **Հովոբիկյան Հ.**, Անմոռանալի անցյալ: Մեծ եղեռնից վերապրողի հուշերը, Երևան, 1995, էջ 48:

անհատ արհեստավորները և նրանց ընտանիքների անդամները, որոնք հոգում էին մասնավորապես օսմանյան բանակի կարիքները:

Նյութական շահ հետապնդելու դրդապատճառ

Մեծ եղեռնի տարիներին հայերը տեղահանությունից զերծ էին մնում՝ կաշառելով իրենց ծանոթ քրդերին կամ թուրքերին, ոստիկանությանը, տեղական կառավարման մարմիններին: Երբեմն հայերն իրենք էին կաշառք առաջարկում, իսկ երբեմն թուրքերն ու քրդերն էին պահանջում գումար՝ խոստանալով թաքցնել նրանց: Կաշառք կորզող թուրքերը կամ քրդերը հայերին թաքցնում էին իրենց տներում, հայ գաղթականներին հետ էին պահում քարավաններից և վերադարձնում իրենց բնակավայրերը, պարզապես ազատ էին արձակում կամ հանձնում մոտեցող ռուսական զորքերին: Երբեմն նույնիսկ թույլատրում էին գաղթական հայերին փոքր-ինչ հանգստանալ ճանապարհին: Այդուհանդերձ, ողջ մնացած հայերին հիմնականում ընդամենը մի քանի օր էին թաքցնում: Կաշառքի ձևերը տարբեր էին հագուստեղեն, տնային իրեր, զարդեղեն կամ գումար:

1908 թ. Մուշի Գյումգյում գյուղում ծնված Սաթենիկ Պետրոսյանը վկայում է. «Մեր ամեն ունեցածը բաժանեցինք մեր թուրք դրացիներուն, բոլոր հայերը հավաքվեցան գյուղին կենտրոնը՝ պարտեզին մեջ: Քույրս ոսկիներով հյուսած էր մագերը. հարուստներու օրենք էր ադ: Հարսերս ոսկի սրմաներով կապույտ թավիշ հագուստ հագած էին: Մեկ հսկա քյուրդ մը եկավ: Այդ հագուստները տվինք մեր ծանոթ քյուրդին, որ մեզի ազատի: Ան մեզի տարավ իր տունը: Հազիվ մեկ ժամ ճամբա գացինք, քյուրդերը վրանիս հարձակվեցան: Կիներուն հագուստները հանեցին: ...Ժանդարման եկավ մեզի տարավ: Քյուրդը եկավ, մեզի հետ վերցուց, նորեն բերավ իր տունը»¹:

1900 թ. Չմշկածագի Մամուսա գյուղում ծնված, վերապրող Ծիրանի Մաթևոսյանը պատմում է իրենց գյուղի 1915 թ. կոտորածի մասին. «Մեզ կնիկ, աղջիկ, էրեխեք, սաղին քշեցին, լցրին հայկական ժամը: ...Մեր քուրդ ծառային մենք փող տվեցինք. նա տարավ ոստիկաններին տվեց: Էդ գիշերը մեր քուրդ ծառան երկու ախպերներիս՝ Մաթևոսին ու Արամին, նստեցրեց ձիու վրա, էս էլ՝ մորս ձեռքը բռնած, գնացինք: Մեր քուրդ ծառան մեզի տարավ իրենց սարի բիրան: Էդ ժամանակ ռուսը Երզնկայում էր: Ռուս ֆուրգոններով հայերին տարավ Երզնկա»²:

Խարբերդի կոտորածը վերապրած Փայլուն Տերտերյանը³ վերհիշում է. «Մայրս կպատմեր, որ քառասունմեկ հատ դեղին ոսկի են տվել թուրք մեծավորին, որ իրենց ազատի: Ան ըսել է՝ հիմա բան չեմ կրնար ընել, միայն թուղթ

¹ Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 96: Հուշագրությունը գրի է առնվել 1989 թ.:

² Նույն տեղում, էջ 263:

³ Ծնվել է 1907 թ. Խարբերդի Եղեզի գյուղում: Հուշագրությունը գրի է առնվել 1997 թ.:

մը կրնամ կ'պցնել ձեր դուռին վրա, որ ասոնք թրքացել են և ձեզի ձեռք չեն տա: Այդպես ալ եղավ»¹:

Հարկ է մեկնաբանել, որ ըստ որոշ վկայությունների՝ կաշառք վերցնողները միշտ չէ, որ կատարում էին իրենց խոստումը, ավելին՝ մատնում էին հայերին կամ անձամբ սպանում: 1915 թ. ապրիլին տեղի ունեցած Արճեշի Օրորան գյուղի կոտորածը վերապրած Մուրադ Հովսեփյանն այս առնչությամբ վկայում է. «Տակաւին ոստիկանները չեկած՝ տեղացի թիրաքեր խաբեցին իմ հօրեղբայր Արմենակին՝ 22 տ., թէ փո՛ղ տուր մեզ, մենք քեզ կը պահենք: Առին նրանցից 5 օսմ. ոսկի: Յետոյ երբ ոստիկանները գիւղն եկան, յայտնեց նրա թաքստոցը մի նախրորդ [նախրապան]: Ոստիկաններ գնացին, գտան նրա տեղը ու սպաննեցին»²:

Հարկադիր ամուսնության դրդապատճառ

Հաճախ հայ կանանց չէին սպանում սեռական շահագործման կամ հարկադիր ամուսնության նպատակով: Որպես կանոն երիտասարդ մուսուլմաններն առնանգում էին հայ աղջիկներին և կանանց կամ համաձայնության հանգեւով՝ նրանց տանում էին իրենց հետ, օգնում թաքնվել, նաև ամուսնանում էին նրանց հետ և այդպիսով փրկում նրանց կյանքը: Երբեմն հայ կանայք ստիպված ամուսնանում էին մուսուլմանների հետ, որպեսզի կարողանան ապահովել իրենց ապրուստը:

Ըստ արաբ Բաթրայի վկայության՝ հայերը «եկան և հավաքվեցին Դեր Ջորի կամուրջի մոտ: Մենք տեսնում էինք, թե ինչպես թուրք ժանդարմները ու չեչենները նրանցից շատերին սպանում էին: Ողջ մնացած կանայք ստիպված ամուսնացան մեր արաբ անապատական շէյխերի ու գյուղապետերի հետ»³: Վերապրողներից Մարիցա Փափազյանն⁴ արքորի ճանապարհի մասին վերհիշում է. «Անոթի, ծարավ՝ ճամբան խոտեր փրցուցինք ու կերանք, մինչև որ հանդիպեցա բարձրաստիճան զինվորականի մը: Ան ուզեց մեծ աղջիկս՝ Արսինենն առնել: Ես մերժեցի: «Ազատ ես, – ըսավ մարդը, – բայց գիտցիր, որ եթե ինձ չտաս, վաղը կամ մյուս օրը ուրիշը պիտի բռնաբարի»: Աս մարդը խոստացավ պահել ընտանիքիս բոլոր անդամները, պայմանով, որ աղջիկս տամ իրեն՝ իբրև օրինավոր կին: Ստիպված էի ընդունել»⁵: Մեկ այլ վերապրող՝ Բողազյան գյուղից իննամյա Բարունակ Փափազյանը, վկայում

¹ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 278: Տե՛ս նաև էջ 85, 247, 267, 278, 290, 302, 365, 417, 419:

² «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու», հ. I, Վանի նահանգ, գլխավոր խմբագիր՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2012, էջ 257-258:

³ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 517-518:

⁴ Օնվել է 1874 թ. Սամսոնում: Հուշագրությունը գրի է առնվել 1970 թ.:

⁵ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 352:

է. «Էդ թուրքը արդեն երկու կնիկ ուներ, մորս հետ էլ ամուսնացավ: Մորս անունը Ֆաթմա դրեց, իմ անունն ալ՝ Իբրահիմ: Ինձ ալ թլպատեցին»¹:

Ինչպես արդեն նշել ենք, հայ կանանց ու աղջիկներին բաժանում էին թուրքական ու քրդական ընտանիքներին: Սակայն հաճախ նրանք բռնությամբ էին տարվում քրդերի, թուրքերի կողմից՝ համալրելու համար իրենց հարեմները: Դեռատի հայ աղջիկների ու կանանց առջև հաճախ երկընտրանք էր ծառանում. նրանք պետք է ընդունեին իսլամը կամ կյանքին հրաժեշտ տային:

Փորձելով արդարացնել իրենց վարքագիծը՝ թուրքերն ասում էին, որ բռնություն չեն գործադրել և հայ աղջիկների հետ ամուսնացել են վերջիններիս ցանկությամբ²: Ի հակակշիռ թուրքական պնդման՝ բերենք մի հատկանշական օրինակ: Սեբաստիայի նահանգում գտնվող Գեմերեկ (Կեմերեկ) ավանում երիտասարդ կանանցից ու աղջիկներից առանձնացրել են երեսուն հոգու և առաջարկել կրոնափոխվել, բայց նրանք մերժել են: Ի պատասխան՝ Սեբաստիայի կուսակալը հրահանգել է նրանց բաժանել մուսուլմանների միջև³: Հղենք նաև Լեփսիուսի գրառումը. «Շատ մը հայ քրիստոնեայ կիներ, որոնց ամուսինները թուրք բանակին մէջ կը ծառայէին, բռնադատուեցան իրենց ամուսիններուն բացակայութեան, այս անարգ եղանակով ամուսնանալու Մահմետականներու հետ»⁴:

Հայ աղջիկների հետ բռնի ամուսնությունների կապակցությամբ տիկին Շողակաթը պատմում է. «Քրդական Թթոիչ գյուղը չհասած նորեն ինձ մոտեցավ ինձ ուղեկցող երիտասարդ ժանդարման (որը միշտ բարյացակամ էր եղել մեր հանդեպ և ամբողջ ճանապարհին շարունակ ինձ դիմել էր, որ իմ աղջկան հոժարությամբ իրեն կնության տամ, խոստանալով փրկել նաև իմ կյանքը և միշտ էլ մերժվել էր իմ կողմից) և հայտնեց, որ կարավանը իր վերջին ժամերը կապրե: ...Որ հրամանը շատ խիստ է... Ամենքը պիտի ոչնչանան անխտիր... մեղք է, մի համառեք... Ես, վերհիշելով Կարինից մինչև այդտեղ մեր քաջած սարսափները և նայելով իմ մինուճար, գեղեցկուհի աղջկան և պատկերացնելով, որ վերջիվերջո, առանց իմ համաձայնությամբ էլ աղջիկս կարող է առևանգվել այդ ժանդարմայի կողմից կամ այլ մի թուրքի կողմից, անհուն ցավով ստիպված եղա տալ իմ համաձայնությունը... Ժանդարման պահեց իր խոստումը և Թթոիչ քրդական գյուղում ինձ ու աղջկանս աննկատելիորեն անջատելով կարավանեն, մի քրդի ընտանիքի մոտ պահ տվավ մեզ...»⁵:

¹ Նույն տեղում, էջ 365, տե՛ս նաև էջ 104, 242-243, 360, 373, 473-474, 558:

² The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16, p. 313.

³ Գաղտնի տեղեկագիր Տօթթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը, էջ 269-272:

⁴ Նույն տեղում, էջ 268:

⁵ ՉՅԹԻ-ի գ. ֆ., բաժին 8, ձեռագիր հուշագրություններ, թղթ. 97:

*Աջակցություն «հումանիտար» նպատակներով
(դեպքեր, երբ պատճառը չի հիշատակվում)*

Հումանիտար աջակցություն հիմնականում ցուցաբերում էին հայերի դրացիները կամ ծանոթները: Որպես կանոն, դրացիների օգնությունը կարճաժամկետ էր լինում: Նրանք կամ թաքցնում էին հայերին, որպեսզի վերջիններս խուսափեին տեղահանությունից, կամ հետ էին պահում տեղահանվածների քարավաններից: Ավելի հաճախ նրանց ցուցաբերած աջակցությունը սահմանափակվում էր պարզապես գալիք տեղահանության և կոտորածների մասին զգուշացմամբ:

Օսանոթ թուրքերի կողմից փրկվելու մասին է պատմում նաև 1909 թ. Մարաշում ծնված Արամ Մոմջյանը. «Մնացինք ես ու Տիգրանը: Մեզ ալ հրաշքով ազատեց թուրք տղա մը՝ Դուրդու անունով, որ թուրքական բանակում ծառայող քեռուս տղայի՝ Մարաշի գերմանական հիվանդանոցի գլխավոր բժշկի՝ դոկտոր Հարություն Տեր-Ղազարյանի սպասավորն էր: Այդ թուրք Դուրդուն, իբր, իր էջն է քշում, էջի վրայի խուրջինի երկու աչքերուն մեջ դրեց ինձ ու Տիգրանին՝ ամեն մեկս մի կողմում, որ ետ տանի Մարաշ՝ քեռուս տղային՝ բժշկին հանձնի մեզ: ...Թուրք Դուրդուն ինձ տարավ ետ Մարաշ, հանձնեց մեր ազգական բժշկի քրոջը՝ Հայկուհուն»¹:

Հետևյալ օրինակը բավական հետաքրքրական է նրանով, որ մի հայ տղայի օգնում է ողջ մնալ ծանոթ զինվորականը: Վերապրող Բենիամին Կարապետյանն այս մասին վկայում է. «Աբաս անունով մի մեծ մարդու մը չուպանը իդա մինչև ազատուիլը: Միկալ եկան ճանտարմները միզի բռնեցին: Այդ գյուղի զինվորացու քրդերին հավաքեցին ու ըսկսան միկ միկ անունները ցուցակագրիլ, որ հերթը հասավ ինձի, այդ ժանտարմների միծը օսման Չաուշն էր ինձի ըսավ անցիր տղաս, անցիր, սայիլ մի հոր տղայի, ինձի չի բռնին, բայց բոլոր քյուրտերուն տարան: Օսման Չաուշը այդ ճանտարմներու միձն էր, միր տուն միշտ դոնադայ եղածի միր հաց կերած և ինձ այդ դժվարին տեղից ազատեց»²:

Եղել են անհատներ, ովքեր մի քանի շաբաթ սատարել են հայերին հատկապես սահմանամերձ շրջաններում մինչև ռուսական զորքերի ժամանումը: Վկայություններ կան քուրդ աշիրեթապետների մասին, ովքեր Արճեշի գավառակի Կտրած քար գյուղում, Բիթլիսի Մոտկան գավառակում 1915 թ. ապրիլին տեղի ունեցած կոտորածների ժամանակ ամիսներ շարունակ պաշտպանել են տեղի մեծաթիվ հայերին, ապա՝ հանձնել ռուսական զորքին³: Վերապրող Գրիգոր Բաղդասարյանը 1915 թ. ապրիլին Վանի գավառա-

¹ Մվազյան Վ., նշվ. աշխ., էջ 462, տե՛ս նաև էջ 87, 89, 101, 102, 229, 345, 374, 422:

² ՀՅԹԻ-ի գ. ֆ., բաժին 8, ձեռագիր հուշագրություններ, թղթ. 115:

³ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», հ. I, էջ 248, տե՛ս նաև նույն տեղում, հ. II, էջ 81:

կի Արատենց գյուղի կոտորածների մասին պատմում է. «Մեր գիւղացիները մեծ մասամբ յաջողեցան նախապէս փախչիլ, իսկ միւսները մեր գիւղի քիւրտերէն Ահմէտի տղան՝ Ալօն, գաղտնի գիւղը մնացածները կը հաւաքէ, կա՛ռաջնորդէ թէ կ՛առաջնորդէ դէպի Նարգիւղի դաշտը և ինքը կվերադառնայ, այդպիսով ժողովուրդը անվնաս Վարագ կը հասնի և այնտեղէն ալ՝ Վան, ուր սկսած էին ապրիլեան կռիւները»¹: Իսկ Արճեշի Կտրած քար գյուղում Մուրադ աղան երկու հարյուրի չափ կին և երեխա է վերցնում իր պաշտպանության տակ և երկու շաբաթ պահում նրանց²:

Անձանութների կողմից մարդասիրական օգնության դրսևորման ձևերից էր նաև այն, որ գաղթի ճանապարհների մոտերքում ապրող մուսուլման կանայք ուտելիք և ջուր էին վաճառում հայ աքսորյալներին կամ կարեկցելով նրանց՝ անվճար տրամադրում:

1915 թ. ապրիլին Կարինի Հինձք գյուղի տեղահանության ճանապարհին տեղի ունեցած նման դեպքի մասին է պատմում Բագրատ Քոչքցյանը. «Արդէն բավական մթնել էր, երբ կանգ առանք մի գյուղի դիմաց, որի շուրջը սևին էր տալիս հրկիզված արտը: Գյուղից թուրք կանայք եկան՝ հետները բերելով ձու, կաթ, մածուն: Գթասիրտ մարդիկ դուրս եկան, որոնք մատչելի գներով վաճառեցին մթերքը: Լրիվ չքավորներին տալիս էին մի բաժակ կաթ կամ մածուն: Մա եզակի դեպք էր, որ պատահեց ամբողջ ճանապարհին»³: Մեկ այլ վերապրող՝ Լևոն Կճիկյանը, պատմում է, որ 1916 թ., երբ սովորականի պես գնացել է արտը վարելու, հանդիպել է երկու թուրքի: Նրանք դէպի իր կողմն են գնացել, և երբ նրանցից մեկը ցանկացել է ծեծի ենթարկել իրեն՝ գյավուրի ձագ անվանելով, մյուսը պաշտպանել է⁴:

Մեծ եղեռնի տարիներին եղել են նաև անհատներ, ովքեր պարզապես թաքցրել կամ պաշտպանել են հայերին: Այս առնչությամբ վերապրող Գարեգին Թուրիկյանը Էրզրումի Քղի գավառակի հայկական գյուղերում 1915 թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցած կոտորածների մասին պատմելիս անդրադառնում է նաև հայերի կյանքը փրկողներին. «Քարիւր աշիրէթի գլխատրը՝ Քիւչուկ աղան իր աշիրէթներով, Խարատէվրէնտի Հասան աղային որդի՝ Ազիզ աղան և կըմէկցի Իսմայիլ աղան ու իր կինը եղած են խիստ բարձր, տասնեակ ամիսներով ապրեցուցած ու պահած են հարիւրներով հայեր»⁵: Ըստ Խարբերդի՝ 1915 թ. ապրիլին տեղահանությունը և կոտորածը վերապրած Միսակ Պապաջանյանի վկայության՝ Խաթաբաշի աշիրէթից Մահմեդ անունով քուրդը թաքցրել է 500 հայ երիտասարդների և 700-800 կանանց ու երեխաների, Փիլվանկի աշիրէթից Հաջի աղան պատսպարել է 500

¹ Նույն տեղում, հ. I, էջ 155:

² Տե՛ս նույն տեղում, էջ 28:

³ Քոչքցյան Բ. (Մարտիրոսյան), Մի հայի կյանք, Երևան, 2002, էջ 79:

⁴ Կճիկեան (Առաքելեան) Լ., նշվ. աշխ., էջ 67:

⁵ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», հ. III, էջ 152-153:

մարդու, ազգությամբ քուրդ Մաթիուցի փաշայի մոտ են ապրել 600-700 հայ, կոզանցի Ջեյնալ և Սլեյման աղաները թաքցրել են մոտ 400 հայի, Մզե անու- նով քուրդը պաշտպանել է հիսուն հայի¹:

Չնայած վերոնշյալ դեպքերը որակել ենք որպես մարդասիրության սկզբունքով ցուցաբերած օգնություն, սակայն դրանց թվում հանդիպում ենք նաև դեպքերի, երբ օգնություն ցուցաբերելու պատճառը եղել է սովյալ ընտա- նիքի անդամներին ճանաչելը: Պարզաբանենք նաև, որ վերապրողները երբեմն չեն հիշատակում օգնության դրդապատճառները:

Վանեցի Մաքրուհի Սահակյանը վկայում է. «Հորեղբորս կնիկը՝ Պայծա- որ, մեզ վերցրեց, մարագի մեջ մտանք: Թուրք հարևանի կնիկը դարմանը լցրել էր մեզ վրա, որ մեզ չգտնեն ու չսպանեն: ...Էն մյուս օրը գիշերը էդ թուրք կնիկը մեզ՝ հինգ-վեց երեխեքիս, տարավ իր տունը, կերակրեց, պահեց ու գիշերով մեզ ուղարկեց Վան: Հորեղբորս աղջիկը՝ Արշալույսը, պատմում է, որ իր ամուսնուն՝ Սահակին, ևս օգնություն են ցույց տվել հարևանները»²: Արդեն հիշատակված Արշալույս Տեր-Նազարեթյանը պատմում է գաղթի ճա- նապարհին իր հետ պատահածի մասին. «Հազիվ նստած մածուն էինք ու- տում, տեսանք, որ երկու թուրք եկան մտան, ախպերներիս՝ Հակոբին ու Մի- սաքին բռնին տարան մորթելու: Մնացինք իմ քույրերով, մայրս ու ես: Մեկ էլ տեսանք մի թուրք մեր դեմը պպզել է, մեզ է նայում: Եկավ հորեղբորս կնիկին ասաց. – Էդ աղջկան տուր տանեմ, լավ կպահեմ: Մեկ է ձեզի ջուրը պիտի գցեն, բալի էդի սաղ մնա»³:

Երախտագիտության դրդապատճառ

Վ. Սվազյանի գրառած 104 մասնավոր վկայություններում հանդիպում են դեպքերի, երբ քրդերն ու թուրքերն իրենց ծանոթ հայերին օգնել են, քանի որ նախկինում հայերն աջակցել են նրանց: Օրինակ, մշեցի Սեդրակ Հարութ- յունյանը⁴ պատմում է. «Ինձ աղջկա շոր էին հագցրել: Հորեղբայրս՝ հարուստ Պետոն, յոթ հարյուր գլուխ ոչխար ուներ, իննսունուր տարեկան էր: Ինքն ու իր նախրչի Մելոն գալիս էին, էդ երկուսին էլ խփեցին: Մեկ էլ տեսա՝ աջ կողմից մեկը ինձ գրկեց: Տեսա՝ քրդի կինն է, որին մենք հաց էինք տալիս: Երևի ձիերի ոտքերի տակ կմնայի. էդ կինը փրկեց ինձ, տարավ մորս մոտ, ասաց մորս. – Մարե՛, երեխին գրկեմ, որ չսպանեն, թող իմանան քրդի երե- խա է»⁵: Աֆիոն-Գարահիսարի տեղահանության մասին 1907 թ. ծնված Ասա- տուր Մենեջյանը վկայում է. «...Մամաս ժամանակին կաթ էր տվել մեր դրա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 257:

² Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 146:

³ Նույն տեղում, էջ 202, տե՛ս նաև էջ 91, 107, 115, 163, 168, 223, 271, 306, 311, 436, 445, 471, 474, 516, 517, 534, 557, 559:

⁴ Ծնվել է 1904 թ. Մուշում: Հուշագրությունը գրի է առնվել 1997 թ.:

⁵ Սվազյան Վ., նշվ. աշխ., էջ 94:

ցի թուրք ընտանիքի չոջուխին: ...Երբ 1915 թ. ջարդը պիտի ըլլար, մեր դրացի թուրքը էկավ մամայիս ըսավ. «Դուռը բաց ձգեցեք, եկեք մեր տուն»: Մեր փոքրը մեկ հայ նպարավաճառի ընտանիք մը կար: Թուրքերը անոնց հորն ու մորը և տղային մորթեցին, իսկ աղջկան ալ բռնաբարեցին: Էդ մեր դրացի բարի թուրքը էդ աղջկան մեղքցավ, ներս առավ, պահեց մեզի հետ»¹:

Կամախում ծնված Տիգրան Օհանյանը, ով այդ ժամանակ եղել է տասներեք տարեկան, Կամախի ձորի կոտորածների (1915 թ. մայիս-հունիս) մասին պատմելիս վկայում է, որ ողջ է մնացել իրենց ծանոթ թուրքերի շնորհիվ. «Էնտեղ ծանոթ թուրքեր դուրս եկան, հայրս դրանց տղաներին աստղձագործություն էր սովորեցրել: Ծանոթ թուրքերն ինձ առան պահեցին»²: Արդեն հիշատակված Մեսրոպ Մեսրոպյանը պատմում է. «Թուրքը, տապարը վերցուած, կհալածեր 13-ամյա տղա մը՝ Խորեն Արսլանյանը, որը փորձած էր փախչել, որ չմորթվի, բայց թուրքը կհասնի ետևեն, կուզե խոշտանգե անոր՝ թե քանի հատ ոսկի կլլած է: Այդ միջոցին չերքեզ ձիավորներու խումբ մը վրա կհասնի: Մեծավորը Խորենին կհարցնե, թե որուն տղան ես, սա կպատասխանե, թե՛ հայրը ժամանակին Ուզունլուի գայմագամը եղած էր և Մանվել էֆենդի կկոչվեր, որը գաղթական չերքեզներու վերաբնակեցման ժամանակ բարեացակամորեն ծառայություններ ըրած էր: ...Չերքեզները Խորենին կազատեն, հետերնին կտանին, որը այս տարի մեռավ Երևանի մեջ»³:

Երեխաներ չունենալու դրդապատճառ

Ըստ Վ. Սվազյանի հավաքած վկայությունների՝ հանդիպում ենք նաև դեպքերի, երբ թուրքերը երեխաներ չունենալու պատճառով հայ երեխա են վերցրել: Այսպես, Տիգրանուհի Մովսեսյանը պատմում է. «Զարդեն առաջ Օվսաննան, որը դեղեխ հորեղբոր աղջիկը կըլլա, դեռ ծնված չէր: Մայրը Օվսաննայով հղի էր, երբ հորը տարին թուրքական բանակ, և այլևս ետ չէկավ: Զարդի ժամանակ անոնց տեղահան կընեն: Օվսաննան վեց տարեկան կըլլա: Մեծ մայրը կառնե անոր, Կեսարի կտանի: Հոն, անշուշտ, չքավորություն և շատ նեղություններ կտեսնան: Թուրք պաշտոնյա մը անոր հոգեզավակ կառնե, քանի որ ինքն ալ զավակ չուներ»⁴: Ըստ մեկ այլ վերապրող Պետրոս Կիլիշյանի վկայության՝ «ինձ համոզեցին, ձեռս բռնեցին կինը և մարդը, մենք գնացինք այդ թուրք մարդի տունը, որ զավակ չուներ: Երեք տարի ես մնացի այդ թուրքի մոտ»⁵:

¹ Նույն տեղում, էջ 393-394:

² Նույն տեղում, էջ 236:

³ Նույն տեղում, էջ 358, տե՛ս նաև էջ 86, 94, 236, 258, 269-270, 274, 330-331, 338, 531:

⁴ Նույն տեղում, էջ 557:

⁵ Նույն տեղում, էջ 251: Տե՛ս նաև էջ 280, 285, 556:

Փոխհատուցում ստանալու ակնկալիքի դրդապատճառ

Ռեզոլուցիաներում տարածքներում հայերին օգնություն ցուցաբերելը ևս անշահախնդիր չէր, քանի որ դա արվում էր փոխադարձության սկզբունքով: Նկատի ունենալով ռուսական գործերի առաջխաղացումը՝ տեղի մուսուլմանները պաշտպանում էին հայերին՝ հուսալով, որ ռուսների մուտք գործելու դեպքում հայերն իրենց կպաշտպանեն: Այս առնչությամբ, օրինակ, էրզրումցի Նազար Ղազարյանը վկայում է. «Ռուս-տաճկական պատերազմը յայտարարուելուն պէս հայերուն վիճակը վատացաւ, գիւղերը կողոպտուեցան քիւրտերու կողմէ, որոնք իրենց «ծանօթ» հայերէն ոմանց պաշտպանեցին այն պատճառով, որ հայերէն կը սպասէին փոխադարձ պաշտպանութիւն՝ ռուսներու հանդէպ: Հայերը պաշտպանող քիւրտերը Քոլէն և Չուռուկ (Քոլ և Չուրուք – Հ. Գ.) գիւղացի էին, որոնք պաշտպանեցին տասնհինգ օր»¹: Մեկ այլ վերապրող՝ Թորոյանը, փաստում է, որ ստացել է մի թուրքի աջակցությունը, ով հետագայում ասել է. «Այժմ դու պետք է պաշտպանես ինձ. ռուսները գալիս են»²:

Երախտավորների վարքային դրսևորումների ուսումնասիրությունը դրդապատճառների տեսանկյունից հիմնականում շեշտադրում է հավատքի, համոզմունքների և ալտրուիստիկ մարդկանց անհատականության գործոնները: Կարծում ենք, սա պայմանավորված է նրանով, որ «հակառակորդ» խմբի անդամներին օգնություն ցուցաբերելու համար սեփական կյանքը վտանգի ենթարկելով, երբ ամբողջ հասարակությունը գտնվում է զանգվածային կոտորածներ իրականացնելու համար անպատժելիության մթնոլորտում, անհատը վեր է կանգնում իր էթնիկ պատկանելությունից և բավարարում իր նմանի նկատմամբ կարեկցանքի և նրան ձեռք մեկնելու պահանջմունքը:

Չնայած դեռևս անհրաժեշտություն կա Հայոց ցեղասպանության համատեքստում երախտավորների հիմնախնդիրն առավել համակողմանի և ադրյուրագիտական լայն հենքի վրա դիտարկել, այնուամենայնիվ կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել որոշակի եզրակացությունների: Օսմանյան կայսրության իրագործած ցեղասպանության համատեքստում մուսուլման հասարակության տարբեր սոցիալական խմբերի կողմից ալտրուիստական վարքագծի դրսևորման դրդապատճառների ու նպատակները:

¹ «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ», հ. III, էջ 232:

² **Kévorkian R.**, *The Armenian Genocide. A Complete History*, London, New York, 2011, p. 313.

րի դիտարկումները ցույց են տալիս, որ բարոյական հոգեբանության գործոնը «փրկողների» համար ունեցել է աննշան դերակատարություն:

Համաձայնելով Հայոց ցեղասպանության համատեքստում «երախտավորների» հիմնախնդրի վերաբերյալ Հ. Մարությանի առաջադրած լուծման հետ՝ այն է՝ Հրեաների հոլոքոստի պարագայում գոյություն ունեցող մեթոդաբանական փորձը կիրառել Հայոց ցեղասպանության պարագայում և դասակարգելով մուսուլման հասարակության կողմից երախտավորության դրսևորման հիմնական նպատակներն ու պատճառները, հարկ է այդուհանդերձ արձանագրել, որ վերջինս գերազանցապես դուրս է մնում փրկություն եզրույթի սահմանման շրջանակներից:

Մուսուլման հասարակության կողմից երախտավորության դրսևորման հիմքերը, թերևս, պետք չէ փնտրել համամարդկային բարոյականության, կրոնական կամ էթնիկ պատկանելության համատեքստում, այլ մեր կողմից նշված և մեկնաբանված դրդապատճառների շրջանակներում:

Асмик Григорян – Проблема «благотворителей» в контексте Геноцида армян: ее проявления на уровне мусульманского общества

В контексте Геноцида армян, пожалуй, менее всего исследована проблема «благотворителей» мусульман, относительно которой в последнее время идут довольно активные обсуждения. Опираясь на свидетельства в дневниках свидетелей и докладах иностранных дипломатов, можно условно классифицировать мотивы проявления «благотворительности» мусульманами в Османской империи. Изучение мотивов и целей организации альтруистического поведения со стороны различных социальных слоев мусульманского общества в контексте геноцидов, осуществленных османскими властями, различные социальные группы общества обнаруживают, что для «благотворителей» фактор нравственной психологии почти не играл роли. Основы проявления «благотворительности» не следует искать в контексте общечеловеческой нравственной, культурной, религиозной или этнической принадлежности, а в более узких рамках, таких как материальный интерес, принудительная работа, сексуальная эксплуатация, брак, добрососедские отношения, чувства преданности, взаимные ожидания, тем более, что подобное поведение в основном проявлялось по личной инициативе.

Hasmik Grigoryan – The Issue of “Rescuers” in the Armenian Genocide Context; Manifestations of Muslim Society

The issue of the Muslim “rescuers” is the least researched theme in the context of the Armenian Genocide, discussions which have taken place quiet often recently. Sacrifice and objectiveness must primarily be stressed during the discussions of the issue in the Armenian Genocide milieu, especially from the point of view of helping and “saving” Armenians by the Muslim society.

Based on the testimonies of the Armenian survivors and reports of foreign diplomats, motives and purposes of Muslim “Rescuers” of the Ottoman Empire can be conventionally classified, revealing whether such behavior was objective or not and whether it can be called salvation or not.

Observations of altruistic behavior and motives of the Muslim society in the context of genocides taken place in the Ottoman Empire unveil that moral psychology had no connection with the behavior of “Rescuers”. Basis of patronages by Muslim society should be searched for not in the context of human ethics, cultural, religious or ethnic affiliation, but in narrow circles, for instance in the expectation of material benefit, forced labor, sexual exploitation, marriages, neighboring relationships, gratefulness and mutual anticipation, as such behavior was mainly organized by individual initiatives.

**JOHANNES LEPSIUS: THE FIRST HISTORIAN OF THE
ARMENIAN GENOCIDE AND HIS HUMANITARIAN ENGAGEMENT**

Keywords – Genocide, Turkization, Nationalism, Moral Law, One-party dictatorship, Johannes Lepsius, Henry Morgenthau, Mehmet Talaat, Enver Pasha, Hans von Wangenheim, Abdul Hamid II

It was late in the day of 31 July 1915 when Henry Morgenthau, American Ambassador to Istanbul, sent a cable to the State Department at Washington. “Doctor Lepsius, President of German Orient Mission which maintains six Armenian orphan asylums in Turkey, has information from reliable source that Armenians, mostly women and children, deported from the Erzerum district, have been massacred near Kemakh between Erzinghan and Harput”¹. Johannes Lepsius had arrived at the Ottoman capital on 24 July. The events of his journey are narrated by Franz Werfel in his novel *The Forty Days of Musa Dagh*. It was wartime, and the journey had been prompted by disconcerting news regarding the fate of the Armenians in the Ottoman Empire, a German ally.

What Morgenthau references, a disturbing account of great massacres taking place in Kemakh Canyon at the upper Euphrates, was among the first batch of horrific news given to Lepsius by eye witnesses Thora von Wedel and Eva Elvers. These two Nurses had showed up at the German Embassy on 21 July to deliver to Consul General Johann Heinrich Mordtmann a report of what they had seen. Their descriptions were independently corroborated by Austrian zoologist and mountaineer Victor Pietschmann². Mordtmann, who had been born in Istanbul and who was the true expert on Oriental matters at the Embassy, was in all likelihood less surprised by this news than was Morgenthau. The country was riddled with German Consulates, mission stations, hospitals, schools, as well as employees of the Baghdad Railway and businessmen. Their reports of what they had witnessed in the heartland in spring of 1915 had already been received by the Embassy.

No later than 6 June, Ottoman Minister of the Interior Mehmed Talaat had openly expressed towards Mordtmann his government’s intention to use the World War for its own political gain. “Without diplomatic interference from abroad”, it would be easy to “thoroughly clean house concerning enemies within – domestic Christians of any confession”³. Based on precise information contained in reports he had received from all parts of the country, Ambassador Hans von Wangenheim cabled Chancellor Theobald von Bethmann-Hollweg on 7 July, that there could be no doubt about “the

¹ Morgenthau to Secretary of State, 31 July 1915. <http://www.armenian-genocide.org/us-7-31-15>.

² Note Mordtmann, 21 July 1915. Politisches Archiv des Auswärtigen Amts (subsequently: PA-AA) BoKon/169.

³ Note Mordtmann. Rößler to Botschaft Konstantinopel, 6 June 1915. PA-AA/BoKon/169.

government's actual intention to eradicate the Armenian race from the Turkish Empire"¹. He couldn't have made a more definite statement. The deportations and massacres of increasing intensity that could be observed in the Anatolian provinces since the spring served the express purpose of systematically handing an ethnic group – the Ottoman Armenians – over to destruction. Wangenheim's words prove that the German government was aware of this at least by early July 1915. Had one asked – in Lepsius's words – the *quaestio juris* after thus answering the *quaestio facti*², in this view, one were doubtless compelled to speak of a "genocide"³.

It was on this particular day, 7 July, when Morgenthau conversed about the Armenian question with Austro-Hungarian Ambassador Pallavicini. We can see from his diary entry that he did not nearly have as comprehensive and clear a picture of the full scope of the issue as did Wangenheim. The diary talks of excess, yet it does not make mention of any systematic policy of extermination. Instead, its main focus is on the deportation of 280.000 Jews from Baltic Courland by the Russian army. Moreover, the diarist commiserates British attempts at an intervention at Petrograd and their sobering result: the Tsardom's declaration that it would not tolerate any external interference with its domestic affairs⁴.

Civilians had been targets of warfare from the outset of this war. It had started in August 1914 with the so-called Belgian atrocities – which in fact were also French atrocities – when a sum total of 6.427 civilians fell victim to the German paranoia of alleged ambushes by so-called franc-tireurs⁵. Later, plans were devised by German officials to permanently remove the Polish border population by force in order to implement a "racial military border" against the Russians⁶; even though those were never put into action. In the beginning of 1916, 143.000 Serbs lost their lives during death marches orchestrated by Habsburg and Bulgarian military personnel⁷. In Russia, the following fell victim to a military policy of deportation within the first three years of the war: six million civilians, among them hundreds of thousands of Jews, German minorities, inhabitants of the Baltic territories, Roma, and Muslims from the Caucasus and Central Asia. They were universally deemed potential enemies within and "unreliable" as sections of the populace⁸. There were also plans for a permanent Russification of the border regions⁹.

¹ Wangenheim to Bethmann-Hollweg, 7 July 1915. PA-AA R 14086.

² **Lepsius J.**, *Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland*, Berlin, 1896, S. 10.

³ **Lepsius J.**, *Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915*. *Der Orient*, Vol. 1919, n° 1/3, S. 14.

⁴ *United States Diplomacy on the Bosphorus. The Diaries of Ambassador Morgenthau 1913-1916*, 7 July 1915, London, 2004, p. 271.

⁵ **Horne J.** and **Kramer A.**, *German Atrocities, 1914. A History of Denial*, New Haven and London, 2001, p. 74.

⁶ **Mommsen W.J.**, *Der "polnische Grenzstreifen". Anfänge der "völkischen Flurbereinigung" und der Umsiedlungspolitik*, in: *idem: Der Erste Weltkrieg. Anfang vom Ende des bürgerlichen Zeitalters*, Frankfurt am Main, 2004, S. 118-136.

⁷ **Roshwald A.**, *Ethnic Nationalism and the Fall of Empires. Central Europe, Russia and the Middle East, 1914-1923*. London, and New York, 2001, p. 126.

⁸ **Gatrell P.**, *A Whole Empire Walking. Refugees in Russia During World War I*, Bloomington, 2005, p. 3.

⁹ **Schwartz M.**, *Ethnische "Säuberungen" in der Moderne. Globale Wechselwirkungen nationalistischer und rassistischer Gewaltpolitik im 19. und 20. Jahrhundert*, Munich, 2013, S. 131f.

However, there was a very specific difference between these and Talaat's announcement to Mordtmann: no one had any intentions of thoroughly cleaning house concerning certain ethnicities because nobody aimed to destroy the Russian multinational Empire in this war¹. Hence, Talaat announced way more than a deportation caused by the necessities of war. His was the announcement of a new, and essentially Turkish post-war order not achievable merely through deportations of domestic enemies but only by dispersing them completely, and thereby eliminating their influence once and for all. There had never been an announcement quite like this before. In contrast to the Russian deportation policy, which was ruthless and inhumane in its own right, Talaat's vision encompassed an outright apocalyptic aspect. This contrast, however, is highly significant for an understanding of the events². Wangenheim and the German government were aware of this by no later than the beginning of July.

There is ample evidence suggesting that it was in fact Johannes Lepsius who informed Morgenthau of the magnitude of the events. Days before their meeting, the latter was still convinced that great massacres did not occur as part of the deportations and that deadly force had only been used in skirmishes with Armenians putting up armed resistance³. Yet, Morgenthau had for some time harbored suspicions of the ultimate goal being "race extermination"⁴. When Lepsius first came to see him at the American Embassy on 31 July 1915 at 3 p. m.⁵, these suspicions grew firmer⁶.

According to Lepsius's report quoted in Morgenthau's cable to the State Department, the following had taken place on the upper Euphrates in late spring. On 10 June, a convoy of deported Armenians approached the bottleneck near Kemakh Canyon, where they came under crossfire. "Ahead, Kurds blocked the way, behind were militia troops" in the words of Thora von Wedel who had gotten all the details from Turkish soldiers. "At first, they were looted, then brutally slaughtered, and finally their bodies were thrown into the river"⁷. The carnage lasted a total of three days. Finally, on the fourth day, the 86th cavalry brigade arrived, supposedly to put a stop to the murdering. In truth, though, they had come to surround the Armenian

¹ All the differences notwithstanding, there are also certain similarities to be made out: "Up to a point", as Donald Bloxham and Dirk A. Moses observe, "CUP population policy mirrored that of the Tsars. After a series of localized "pacification" measures in their shared border regions from the outset of the war, and incursions into enemy territory, each regime radicalized its policies in spring 1915, as the war situation became critical". **Bloxham D.** and **Moses D. A.**, *Genocide and ethnic cleansing*, in: **Bloxham D.** and **Gerwarth R.** (Ed.), *Political Violence in Twentieth Century Europe*, Cambridge, New York, 2011, p. 97.

² "Mit der praktisch vollständigen Zerstörung einer "nationsfremden" Ethnie wurde in der Geschichte erstmalig ein radikal sozialdarwinistisch-nationalistisches Gedankengut realisiert". **Kieser H. L.**, *Der verpasste Friede*, Zurich, 2000, S. 16.

³ United States Diplomacy on the Bosphorus. The Diaries of Ambassador Morgenthau, 26 July 1915, p. 286.

⁴ Morgenthau to Secretary of State, 16 July 1915. <http://www.armenian-genocide.org/us-7-16-15>.

⁵ United States Diplomacy on the Bosphorus. The Diaries of Ambassador Morgenthau, 31 July 1915, p. 291.

⁶ It seems almost inconceivable, as Margaret Anderson observed about Morgenthau, "that a man whose Armenian translator accompanied him everywhere, every hour of the working day as well as most evenings", should have taken this long to understand what was happening. **Anderson M. L.**, *Helden in Zeiten eines Völkermords?* Armin T. Wegner, Ernst Jäckh, Henry Morgenthau, in: **Hosfeld R.** (Ed.), *Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme*. Göttingen, 2013, S. 154 .

⁷ Valentini to Bethmann-Hollweg, 10 September 1915, Appendix 2. PA-AA R 14093.

women and children who were stuck in the canyon. On order, they were all gunned down. It had been commanded thus, recalled a Turkish soldier who was present.

The army's gruesome slaughter of 13 June raged on for four hours, from 11 a. m. to 3 p. m.¹. The operation had apparently been well prepared. Thora von Wedel: "They had brought ox carts in order to dump the corpses into the river and to cover their deed's tracks. After the butchery, manhunts were held for several days in the cornfields of Erzincan, shooting those who had escaped to look for shelter there"². In total, between twenty and twenty five thousand people fell prey to the eliminatory orgy perpetrated by military, police, special forces, and irregular gangs only between 10 and 14 June 1915 in Kemakh Canyon³. Evidently, the deportations of the upper Euphrates valley were regularly accompanied by massacres, and, as Lepsius uncovered, the same occurred in other parts of Eastern Anatolia. This was clearly no matter of a military preemptive strategy but rather the work of a political will to eliminate⁴.

Morgenthau relates that Lepsius was planning to inform the International Red Cross of these goings-on (which he actually did after his return, through semi-legal publications in Switzerland). Moreover, he was determined to try to persuade his own government to put a halt to this crime against humanity perpetrated by a wartime ally – as we know, he failed. But first and foremost, he wanted to gather as much information as possible about the extent and characteristics of this catastrophe. Morgenthau requested permission in Washington to allow Lepsius access to the American consular documents⁵. Whether this was officially granted him is unknown⁶. Morgenthau did in fact show several reports to Lepsius, whom he deemed to be a "high-minded Christian gentleman"⁷, and allowed him to make verbatim excerpts. "His feelings were aroused chiefly against his own government", Morgenthau records in his memoirs in view of those hours spent together at the American Embassy. "He expressed to me the humiliation which he felt as a German, that the Turks should set about to exterminate their Christian subjects, while Germany, which called itself a Christian country, was making no endeavours to prevent it"⁸.

In the beginning of August 1915, Lepsius wrote from Istanbul to his wife Alice at Potsdam: "Unspeakable things have happened and are happening still. The goal is perfect extermination – executed under the veil of martial law. There is nothing else to be said"⁹. Lepsius, 57 years old at the time, was received for an audience with War Minister Enver Pasha on 10 August 1915 after a recommendation by Auswärtiges Amt (the German State Department) and the German Embassy. This was precisely when

¹ Thora von Wedel-Jarlsberg to Neurath, 28 July 1915. PA-AA/BoKon/170.

² Valentini to Bethmann-Hollweg, 10 September 1915, Appendix 2. PA-AA R 14093.

³ **Lepsius J.**, *Deutschland und Armenien*, Potsdam, 1919, Einleitung, S. XXIV.

⁴ "The Armenian fate was composed of the two elements: ethnic cleansing, or forced collective displacement, and direct physical annihilation. Only because of the presence of both elements is the epithet genocide applicable". **Bloxham D.**, *The Great Game of Genocide. Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*. Oxford, New York, 2005, p. 69.

⁵ Morgenthau to Secretary of State, 31 July 1915. <http://www.armenian-genocide.org/us-7-31-15>.

⁶ Lepsius claims to have been denied access. *Mein Besuch in Konstantinopel*, S. 6.

⁷ *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918, p. 343.

⁸ *Ibid.*, p. 344.

⁹ Lepsius to Alice Lepsius, beginning of August 1915, Lepsius-Archiv Potsdam (subsequently: LAP) 118-1320.

the siege at Musa Dagh was unfolding, where some 5.000 Armenians had sought refuge on the escape from their persecutors, the fateful days that are recounted in Franz Werfel's novel. The meeting was by no means a matter of course. Its background, too, remains unclear to this day and will in all likelihood never be fully uncovered. Certainly, the Reich's government at that point took a strong interest in exercising a mitigating influence on its Turkish ally¹. The German Embassy at Istanbul, however, doubted it could ever end successfully². Enver, in turn, had a vested interest in a certain amount of German backing³. At least until the increasing success in defending the strategically important Dardanelles and the resulting growth in Turkish confidence would have completely dispelled any qualms.

Отв. дежурный по опероду полештарма XI [армии]

Махонин

[Копия, машинопись]

РЦХИДНИ, ф. 85, оп. 15, ед. хр. 184, л. 1-1 об.

5

Телеграмма Арустамова на имя Орджоникидзе
29. III. [1921]
«(Только Орджоникидзе и командарму).
Тов. Орджоникидзе, командарму Наштарму

Дивизия Тефик бея ушедшая из Ахалкалакского уезда в составе 1.500 штыков, 400 всадников, 12 пулеметов и одной батареи расположилась в семи верстах от границы в районе деревни Казанчи. Разведка наша доносит, что все армянское население этого района беспощадно вырезается, все конюшни в деревнях переполнены трупами, женщины и девочки до десяти лет насилуются, сопротивляющихся убивают. Сам Тефик бей изнасиловал двух девятилетних девочек. Весь скот, имущество, лошади, зерно забрано и сотнями пудов ежедневно отправляется в глуб. Оставшееся население умоляет красную армию о помощи. Прикажите Вашим частям стоящим в районе Александрополя положить конец этой озверевшей банде, непризнающей даже приказа и своего командующего Кязим Карабакир паши.

Арустамов». [Подлинник, машинопись]

РЦХИДНИ, ф. 85, оп. 15, ед. хр. 186, л. 1-2 об.

6

К докладу Арустамова члену Ревоенсовета Кавфронта тов. Орджоникидзе

«Сведения о насилиях, грабежах и др. совершенных группой войск Кемал-паши в Ахалкалакском уезде»

В девяти селах уезда

Изнасиловано - 930 ж[енщин]
женщин

Изнасиловано - 120 д[евочек]
девочек от 8-15 лет

Избито - 2508 чел[овек]

Убито - 163 чел[овек]

Уведено - 32 мужчин

“-“ - 28 женщин

Угнано -

коров - 1098

быков - 1000

бычков - 525

овец - 2208

Увезено хлебных продуктов - 32.800 пудов

золота - на 16800 р[ублей]

деньгами - 158.910.000 рубл[ей]

картофеля - 3800 пудов
арб угнано - 358 штук

Население всех этих деревень совершенно раздето, а в настоящее время, в невероятный холод и голод все сидят зарывшись в сено, варят саман и питаются этим, так как ничего съедобного кемалисты не оставили.

Страшное впечатление оставляют изнасилованные женщины и девочки, некоторые из которых находятся на краю смерти, настолько гнусно и зверски издевались над ними.

Мужчины находятся не в лучшем положении, так как все без исключения избиты и в настоящее время не способны к труду, а наоборот требуют сами помощи.

Уполномочен Арустамов
4 апреля 1921 г., г. Тифлис
[Подлинник, рукопись]

РЦХИДНИ, ф. 85, оп. 15, ед. хр. 192, л. 2-2 об.

7

Вх. № 5517

30/3-[19]21 года

Москва из Полештарм 11 № 890/545 В/сл. 24/3 15 только Чичерину

Командующему восточным турецким фронтом Кязиму Карабекир паша.

Копия Наркоминдел Р.С.Ф.С.Р. тов. Чичерину и копия члену Р.В.С. Кавфронта тов. Орджоникидзе.

Тифлис, 24 марта 1921 года, 3 ч. 15 мин.

На основании полученных мною официальных донесений считаю долгом довести до Вашего сведения что командование турецкими войсками находящееся в районе Ахалцих-Ахалкалаки допускает целый ряд деяний возбуждающих местное население: забирают у населения имущество, хлеб, скот, лошадей и избивают до полусмерти [в] случае отказа что имело место [в] селении Гумахдо и мобилизуют местное население. Организованные на местах органы Советской власти благодаря таковым действиям оказываются совершенно изолированными от местного населения. По последнему полученному донесению турецкое командование находящееся в районе Ахалкалаки наложило на местное население контрибуцию [в] размере сорок одна тысяча пудов зерна, несколько тысяч пудов картофеля и до десяти тысяч голов скота и лошадей и начало выводить из города Ахалкалаки казенное народное имущество, автомобили, телеграфное и телефонное имущество. На протесты заявленные представителями командования Красной армии и местной власти, турецкое командование дает обещание прекратить указанные деяния, каковые обещания однако к нашему глубокому прискорбию не осуществляются. Выражаю уверенность, что все вышеуказанные мною факты происходят единственно благодаря самочинным действиям отдельных представителей младшего турецкого командования, основанным [на их] неосведомленности состоявшемся соглашении между нашими представительствами.

... Я уверен, что Вы отнесетесь с должным вниманием [к] моему настоящему заявлению и примите самые решительные меры немедленному пресечению всех указанных фактов [в] районе Ахалцихского и Ахалкалакского уездов, а также сделаете распоряжения о возвращении всего случайно захваченного имущества, хлеба, скота и лошадей по принадлежности местному населению.

Командующий Красной Армией Геккер

АВП РФ, ф. 148, оп. 4, п. 4, д. 5, л. 3.

Վարուժան Պողոսյան – Նորահայտ փաստաթղթեր 1921 թ. Ախալքալաքի գավառում քեմալականների իրականացրած վայրագությունների և կոտորածների մասին

Սույն հրապարակումն ամփոփում է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության և Գ. Օրջոնիկիձեի անձնական արխիվներում պահվող փաստաթղթեր, որոնք հավելյալ լույս են սփռում 1921 թ. Ախալքալաքի գավառում քեմալականների իրականացրած վայրագությունների և կոտորածների վրա: Քեմալականները ոչ միայն կոտորել են Ջավախքում բնակվող հայերին, այլև նրանց նկատմամբ կիրառել անասելի բռնություններ, թալանել նրանց պատկանող ունեցվածքը, գույքը և սննդամթերքը: Այս իրողություններն արտացոլված են Անդրկովկասում գործող ռուսական բանակների հրամանատարների և Ախալքալաքի գավառի հեղկոմի նախագահ Առուստամովի հրապարակվող գրություններում՝ ուղղված մասնավորապես Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինին և Գ. Օրջոնիկիձեին:

Varuzhan Poghosyan – Newly Discovered Documents about Atrocities and Massacres Carried Out by the Kemalists in the Province of Akhalkalak in 1921 (in Russian)

The present publication contains documents stored in the archives of the Ministry of Foreign Affairs of the Russian Federation and in the private archives of G. Ordzhonikidze, which shed additional light on atrocities and massacres carried out by the Kemalists in the Province of Akhalkalak in 1921. Not only massacred the Kemalists the Armenians living in Javakhk, but also acted violently towards them, looted their possessions, property and food. These facts are reflected in the writings of the commanders of Russian Army in Transcaucasia, as well as Arustamov – the Chairman of the Revolutionary Committee of the Province of Akhalkalak, and were addressed particularly to the Commissar for Foreign Affairs of Russia G. Chicherin, and G. Ordzhonikidze.

Արման Կիրակոսյան, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, 400 էջ

Հետխորհրդային տարիներին, չնայած երկրում տիրող ճգնաժամային իրավիճակին, մեր գիտության որոշ ճյուղեր, այդ թվում պատմագիտությունը, առաջընթաց ապրեցին՝ շնորհիվ առանձին անհատների քրտնաջան աշխատանքի և նվիրումի: Ձևավորվեց մի նոր սերունդ, որի ներկայացուցիչները ստանձնեցին Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերը շոշափող հիմնախնդիրներին լուծում տալու պատասխանատվությունը: Վստահաբար կարելի է հավաստել, որ այդ սերնդի առաջատարներից է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության ակնառու դեմքերից Արման Կիրակոսյանը, որը գիտաքաղաքական հանրությանը հայտնի է իր պատմագիտական ծանրակշիռ ուսումնասիրություններով¹:

Թերևս նախորդ հետազոտությունների տրամաբանական շարունակությունն էր լինելու հայ-ամերիկյան հարաբերությունների խնդիրը, որի ուղղության մեկնարկը տրվել է դեռևս 2004 և 2007 թթ.², և սույն մենագրությունը դրա վկայությունն է: Որոշ վերապահումներով մեզ թույլ ենք տալիս պնդել, որ աշխարհասփյուռ հայության և Հայաստանի Հանրապետության համար պատմական և արդիական հույժ կարևոր խնդրակարգը սույն աշխատությամբ պատմագիտական պատշաճ ուղղություն է ստանում, ինչը նաև հնարավորություն կընձեռի ըմբռնելու պատմական անցյալը, հասկանալու ներկան և կանխատեսելու ապագան:

¹ Տե՛ս **Киракосян А.**, Великобритания и Армянский вопрос (90-е годы XIX века), Ереван, 1990, **Կիրակոսյան Ա.**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.-1914 թ.), Երևան, 1999 (տե՛ս նաև անգլերեն թարգմանությունը՝ **Kirakossian A.**, British Diplomacy and the Armenian Question from the 1830 to 1914, Princeton, London, 2003), *նույնի՝* Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, 2006, *նույնի՝* Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը: Պատմաիրավական եռալեզու տեղեկանք, Երևան, 2006, **Киракосян А.**, Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., Ереван, 2010.

² Տե՛ս **Kirakossian A.**, The Armenian Massacres 1894-1896: US Media Testimony, Detroit, 2004, *նույնի՝* Armenia-USA: Current Realities & Vision for Future, Yerevan, 2007.

Առաջին հայացքից աչքի է զարնում գրախոսվող մենագրության կառուցվածքը, որը տրամաբանական ներքին հյուսվածքով բաժանվում է փոխկապակցված երեք մասերի, որոնցից յուրաքանչյուրը, լրացնելով միմյանց, ծառայում է գլխավոր խնդրին: Առաջին՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության սկզբունքները (1776-1914 թթ.)» գլուխը սույն աշխատության տեսական-մեթոդաբանական մասն է: Այստեղ հանգամանորեն լուսաբանվում է ԱՄՆ արտաքին քաղաքականության ձևավորման և կայացման ժամանակաշրջանը հինգ պարագրաֆների շրջանակներում, որոնցում առանձնանում են ԱՄՆ «կնքահայր» Թոմաս Փեյնը, պատմագիտության, քաղաքագիտության և դիվանագիտության ոլորտներում քաջ հայտնի «Մոնրոյի վարդապետությունը», ռազմավարության ոլորտի այնպիսի հեղինակություն, ինչպիսին է ծովակալ Ալֆրեդ Մահանը: Հայրենական ընթերցողի համար պակաս նշանակություն չունի նաև ԱՄՆ արտաքին քաղաքականության հարացույցը կազմող այնպիսի հասկացությունների ճշգրիտ փոխադրությունը, ինչպիսիք են Non-Interventionism՝ չմիջամտողականություն, American Continentalism՝ ամերիկյան կոնտինենտալիզմ, Isolationism՝ մեկուսացվածություն և դրանց միջոցով «պատմական իրականության» իրական բովանդակությունը ներկայացնելու հետևողական ձգտումը:

Այս համատեքստում աչքի է զարնում ԱՄՆ արտաքին քաղաքականության մեթոդաբանական հիմքի ցուցադրությունը, որը քննարկվող պատմական ժամանակաշրջանում էական դեր է խաղացել ամերիկյան արտաքին քաղաքական գործունեության ուղղորդման, իսկ մեր օրերում՝ անցյալը հասկանալու առումներով: Ա. Կիրակոսյանը գրում է. «ԱՄՆ-ի 19-րդ դարի արտաքին քաղաքականությունն անվանում են նաև «ռեալիստական»՝ ազգային շահի պաշտպանությանը միտված քաղաքականություն, որը ժամանակի ընթացքում ենթարկվեց ձևափոխությունների և Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում դարձավ «իդեալիստական» ու ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի անունով կոչվեց «Վիլսոնյան»: «Իդեալիստական ինտերնացիոնալիզմի» նոր ուղեգիծը նշանավորեց ԱՄՆ մուտքը համաշխարհային քաղաքականություն՝ աշխարհում խաղաղություն և ժողովրդավարություն ապահովելու նպատակով» (էջ 9): Ընդամին, հեղինակը ընթերցողին համոզում է առաջին գլխի ինքնուրույն նշանակության՝ ԱՄՆ արտաքին քաղաքականության համալիր ընկալման տեսանկյունից: Այս հատվածը կարող է մասնավորապես օգտակար լինել ուսանողության համար:

Հայ ժողովրդի քաղաքական պատմության տեսանկյունից, որը տվյալ ժամանակահատվածում հանդես էր գալիս Հայկական հարցի ցավագին էվոլյուցիայի տեսքով, էական նշանակություն ունի ԱՄՆ միսիոներական շարժման սկզբնավորման ու ծավալման պատմության վերլուծությունը: Տվյալ ժամանակաշրջանում այն ԱՄՆ կողմից ոչ միայն արժեքային որոշակի համակարգի արտահանումն էր Օսմանյան կայսրություն (ըստ այդմ՝ նաև հայկա-

կան միջավայր), այլն գործիքակազմ հատկապես այն օրերին, երբ ԱՄՆ-ը դեռևս չունէր արտաքին քաղաքականության ինստիտուցիոնալ լիարժեք կառույցներ: Այս ուղղության զարգացումը Ա. Կիրակոսյանը տեղավորում է «մշակութային իմպերիալիզմի» զարգացման շրջանակներում, որը ԱՄՆ արտաքին քաղաքականության սկզբունքների իրականացման, աշխարհում երկրի ներկայության ու ազդեցության ապահովման միջոց էր:

Ընդ որում, դժվար է արժևորել միսիոներական շարժման իրողությունը օսմանահպատակ հայության շրջանում՝ դրա հակասականության բուն պատճառով: Այն պառակտում էր հայությանը միասնական ու ամբողջական օրգանիզմի՝ «հայկական *միլիթի*» շրջանակներում, որն ի վերջո հանգեցրեց «բողոքական *միլիթի*» ձևավորմանը: Սակայն միաժամանակ դժվար է չգնահատել կրթական-մշակութային այն դերը, որը նա խաղաց արևմտահայության քաղաքակրթական առաջընթացում: Միսիոներները հայության առանձին հատվածներին օժանդակություն ցուցաբերեցին հայկական գանգվածային կոտորածների և Մեծ եղեռնի ժամանակ որոշակի ու շոշափելի ասպարեզներում: Ըստ այդմ՝ հակված ենք այդ շարժումն առհասարակ գնահատել ամերիկահայ պատմաբան և աստվածաբան Լևոն Արփիի տեսանկյունից, ըստ որի՝ «Ամերիկյան խորհրդի» առաքելությունների քաղաքականությունն ուղղված էր հայերի շրջանում ոչ թե հավատափոխություն իրականացնելուն, այլ «ավետարանչական գաղափարներ և իդեալներ» պատվաստելուն՝ առանց կտրելու նրանց ազգային եկեղեցուց (էջ 67):

Սակայն, ինչն օրինաչափ էր և սպասելի, արևմտահայ հասարակության ճնշող մասը առհասարակ և մասնավորապես հայ առաքելական եկեղեցին ոչ միայն կասկածամտությամբ, այլև թշնամանքով ընդունեցին միսիոներների գործունեությունը «հայկական *միլիթում*»: 1844 թ. պատրիարք ընտրված Մաթևոս Բ Չուխաճյան Կոստանդնուպոլսեցին 1846 թ. հայ բողոքականներին բնորոշեց իբրև «քրիստոնեության սուրբ հավատի թշնամիներ և հայերի Սուրբ ուղղափառ Եկեղեցու քանդողներ» (էջ 68):

Միսիոներների գործունեության ձևերը, հիշարժան տարեթվերը, դերակատարների ու կազմակերպությունների մասին պատկերացում կազմելը թողնելով շահագրգիռ հետազոտող ընթերցողին՝ նշենք, որ այս հարցում ևս Օսմանյան կայսրության շրջանակներում դրսևորվեցին «բարեկամ» երկրների շահագրգռությունները օսմանահպատակ հայության հանդեպ: Այս առումով առանձնանում էր Ռուսաստանը (էջ 82-83): Հայտնի էր նաև օսմանյան իշխանությունների վերաբերմունքը. «1890 թ. Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ալեքսանդր Տերրելը գրում էր, որ «թուրքերը հավատացած են, որ ազատ մտածելակերպ կրթող և քաջալերող Ռոբերտ քոլեջը պատճառ է դարձել Բուլղարիայի կորստի համար» (էջ 82):

Մասնավորապես ժամանակակից հայ ընթերցողի համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հայկական հեղափոխության իբրև թե

«նախապատրաստման» գործում միսիոներների դերի լուսաբանումը և գնահատականը (էջ 82-87, 89): Անկախ այն հանգամանքից, թե իբր միսիոներների նպատակը Օսմանյան կայսրությունում «հեղաշրջման նախապատրաստումն էր», սակայն իրականում նրանց գործունեությունը հանգեցրեց կրթության և տեխնիկական-տնտեսական առաջընթացի քաջալերմանը, որը, ի վերջո, նպաստելու էր «վեստերնիզացիային», ինչ-որ իմաստով «արևմտյան ազգայնականության» տարածմանը հայ հասարակության, մասնավորապես ուսանող երիտասարդության շրջանում: Սա կասկածից վեր է:

Բայց խորքային հարցը հետևյալն էր. իսկ կարո՞ղ էր արդյոք հայությունը ընկրկել քաղաքակրթության զարգացման մայրուղուց, որքան էլ վտանգի զգացողությունը մեծ լիներ, որքան էլ օսմանյան կառավարությունն ու խավարամիտ հասարակությունը այդ ուղղությամբ ջանքեր գործադրեին:

Երրորդ պայմանական ասպարեզը, որն ակնարկեցինք, թերևս հիմնականն է ու գլխավորը, քանի որ այն վերաբերում է Օսմանյան կայսրությունում ԱՄՆ ծավալած դիվանագիտական գործունեությանը և այդ ենթատեքստում Հայկական հարցի զարգացմանը, նաև հայկական կոտորածների պատմության լուսաբանմանը:

Ելնելով համակողմանի հարցադրումից՝ Ա. Կիրակոսյանը ԱՄՆ դիվանագիտական ծառայությունների գործունեությունը, որ նույնական է Օսմանյան կայսրության հետ ԱՄՆ հարաբերությունների պատմությանը, բաժանում է տրամաբանված և հիմնավոր երկու փուլի՝ 1800-1890-ական թվականներ և 1897-1914 թթ.: Հանուն ճշմարտության նկատենք, որ հեղինակը, հավատարիմ մնալով պատմագիտական հետազոտության օբյեկտիվության պահանջին, փաստում է, որ «թեև Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Օսմանյան կայսրությունը ճանաչեցին միմյանց 1830 թ., իսկ դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին 1831 թ., քաղաքական և առևտրական առնչություններն այդ երկրների միջև սկիզբ էին առել ավելի վաղ շրջանում»՝ «նույնիսկ անկախությունից առաջ» (էջ 43):

Նա նաև ընդգծում է, որ երկու երկրների հարաբերությունները «սկսեցին վերելք ապրել 1860-ական թթ., մասնավորապես 1861-1865 թթ. Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում»: «1862 թ. փետրվարի 25-ին ԱՄՆ-ն ու Օսմանյան կայսրությունը Փարիզում,– գրում է Ա. Կիրակոսյանը,– ստորագրեցին Բարեկամության և առևտրի պայմանագիր, որի համաձայն՝ օսմանյան կողմն ամերիկյան քաղաքացիներին և նավերին շնորհեց «ամենից արտոնյալ պետության» կարգավիճակ, իսկ ամերիկյան կողմն այլևս չէր պահանջելու թուրք առևտրականներից «առևտրային թույլտվություններ» (trade permits)» (էջ 90), որն ուժի մեջ մտավ նույն թվականի հուլիսի 2-ին: Այնուհետև Օսմանյան կայսրությունը շարունակեց նորանոր արտոնություններ շնորհել առևտրի զարգացման և արտահանման մեծ պահանջարկ ունեցող և համաշխարհային հզորության ձգտող երիտասարդ

երկրին: Ինձ թույլատրում եմ ենթադրել, որ ձևավորվող միտումը (trend) էական ազդեցություն ունեցավ 1920 թ. հունիսի 1-ին Հայաստանի մանդատի հարցում Վ. Վիլսոնի նախաձեռնության տապալման գործում: Այս ժամանակաշրջանում է, որ ձևավորվում են և լայն գործունեություն ծավալում հայկական երկու՝ կաթոլիկ և բողոքական *միլեթները*: Ասել, որ դրանք իրենց ճանապարհը հարթում էին դյուրին ձևով, ճիշտ չի լինի: Սակայն, ըստ հեղինակի պատումի՝ այդ *միլեթներն* էական ազդեցություն էին ձեռք բերում և դառնում արևմտյան (ամերիկյան) ազդեցության տարածման խողովակներ ու գործիքներ, լայն առումով՝ մեռնող և քայքայվող կայսրության արդիականացման համար, որը տվյալ պարագայում ընկալվում էր իբրև եվրոպական քաղաքական և մշակութային տարրերի «ներդրում» Օսմանյան կայսրությունում: Այս առնչությամբ Ա. Կիրակոսյանն իրավացիորեն նկատում է, որ Թուրքիան չէր կարող դիմադրել քաղաքակիրթ աշխարհի առաջատար պետություններին և արգելել առևտրականների ու միսիոներների մուտքը երկիր (էջ 126): Ինչ վերաբերում է ԱՄՆ և Օսմանյան կայսրության, այսպես կոչված է «տիտղոսակիր ազգերի» (համապատասխանաբար՝ սպիտակամորթների և մուսուլմանների) գերիշխանությանը, ապա այս առնչությամբ հեղինակը չի մոռանում երկու երկրներում «արդարադատության սահմանազատման» մասին և վկայակոչում է ԱՄՆ պետքարտուղար Թոմաս Բայարդի դիտարկումը. «Ինչպես որ հնդկացիներն էին անկարող ընդունել մեր հաստատությունները, այնպես էլ քրիստոնյա ազգությունները չէին կարող ընդունել և ճանաչել օտտոմանյան հաստատությունները,... և մենք շարունակում ենք անել հնդկացիների հետ այն, ինչ օսմանցի զավթիչներն արեցին քրիստոնյա ժողովուրդների հետ» (էջ 126):

Ինչպես ցույց է տալիս Ա. Կիրակոսյանը, ԱՄՆ-ը, թերևս իր կամքից անկախ, «համիդյան գուլումի» տարիներին անուղղակիորեն ներգրավվեց «Հայկական հարցում» «առևտրական շահերի, ԱՄՆ-ի քաղաքացիների, մասնավորապես միսիոներների անվտանգության պաշտպանության» ոլորտներում: Այդ առումով ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանության «գործուն» վկաներից է: Հիրավի, ինչպես նշում է հեղինակը, «ամերիկյան դիվանագետների և միսիոներների զեկուցագրերը կարևորագույն սկզբնաղբյուր են օսմանյան իշխանությունների կողմից կոտորածների կազմակերպման և իրականացման ուսումնասիրության հարցում» (էջ 156): Ա. Կիրակոսյանի ուշադրությունից չի վրիպել նաև ԱՄՆ հայ քաղաքացիների հանդեպ օսմանյան պետության քաղաքականությունը, որն իր անօրինականությամբ միջազգային իրավունքի պատմության աննախադեպ նմուշ է:

Հեղինակը, ճիշտ է, հպանցիկ, սակայն բովանդակային առումով հույժ կարևոր անդրադարձներ է կատարել Բեռլինի վեհաժողովի (1878), Բարձր Դռան կողմից մայիսյան բարեփոխումների ծրագրի (1895) կիրառման դրսևորումներին, որոնք հայոց պահանջատիրության կարևորագույն բաղկացու-

ցիչներից են: Ի դեպ, ինչպես ցույց է տալիս համիդյան կոտորածների առնչությամբ ամերիկյան դիվանագետների գրագրության ուսումնասիրությունը, դեռևս 1895-1896 թթ. շատերի համար պարզ էր դարձել, որ օսմանյան քաղաքականությունը նպատակաուղղված է Փոքր Ասիայի քրիստոնեության բնաջնջմանը (Ալեքսանդր Տերբել), և խոսքը տվյալ պարագայում «համակարգված կերպով գործի դրված շարժման մասին է» (էջ 199):

Հեղինակը տարբեր դիպվածներով լայնորեն լուսաբանում է նաև եվրոպական դիվանագիտությանը քաջ հայտնի խարդավանքների տարրապատկերը՝ Հայկական հարցի ցավագին էվոլյուցիայի շրջափուլերում:

Մենագրությունում քննարկված ինքնուրույն նշանակություն ունեցող հիմնահարցերից է ԱՄՆ-ում հայկական համայնքի ձևավորման պատմությունը, որը թվագրվում է 1618 կամ 1619 թվականներով: Հայերը, ինչպես արձանագրում է Ա. Կիրակոսյանը, «հիմնականում մեկնում էին ուսանելու՝ քաջալերված ամերիկյան բողոքական առաքելությունների կողմից» (էջ 247): Միաժամանակ, Օսմանյան կայսրությունում հալածանքների սաստկացմանը զուգընթաց, ԱՄՆ-ը «դառնում էր նաև ապաստարան հայ քաղաքական փախստականների համար» (էջ 248): Իսկ 1894-1896 թթ. կոտորածների հետևանքով արևմտահայերի թիվը ԱՄՆ-ում զգալիորեն աճեց: Այս ժամանակաշրջանում է, որ ձևավորվող ամերիկահայ գաղութը սկսեց ստեղծել իր ազգային կառույցները, կազմակերպվել ի դեմս ազգային կուսակցությունների, դարձավ «լոբբինգ» ունեցող կազմակերպված համայնք:

Անշուշտ առանձին հետաքրքրություն է ներկայացնում աշխատանքի վերջին՝ վեցերորդ գլուխը, որը փաստորեն ընդգրկում է 1897-1914 թթ. տեղի ունեցած զանգվածային կոտորածների և Մեծ եղեռնի նախապատրաստման ժամանակաշրջանը և այդ շրջագծի մեջ՝ Օսմանյան կայսրության ու հայության հանդեպ ԱՄՆ քաղաքականությունը, որը թերևս իրականանում էր Մակ Քինլիի, Թեոդոր Ռուզվելտի և Ուիլյամ Թաֆտի «առևտրական դիվանագիտության քաղաքականության» ընդհանուր ընկալման տրամաբանությամբ: Այստեղ ամբողջ հասակով հառնում է «օսմանյան ճիվաղը»՝ հայ ժողովրդին իր բիբլիական բնօրրանում ոչնչացնելու թուրքական բաղձանքով և հակաքաղաքակրթությամբ. օսմանյան «իշխանությունները,– նշում է հեղինակը,– հարկ էին հավաքում նաև կոտորածների ժամանակ սպանվածների ազգականներից» (էջ 322):

«Երիտթուրքական հեղափոխությունից հետո,– գրում է Ա. Կիրակոսյանը,– ԱՄՆ-Օսմանյան կայսրություն առևտրական հաշվեկշիռը զգալի աճ արձանագրեց: Այն 12,7 մլն դոլարից 1908 թ. աճեց մինչև 25,5 մլն դոլար 1913 թ.: *Երիտթուրքական կառավարությունը ի դեմս ԱՄՆ մեծ ներուժ ունեցող հզոր դաշնակից էր գտել, որը կարող էր դառնալ եվրոպական տերությունների դեմ ուղղված կարևոր հակակշռող լծակ*» (ընդգծումը մերն է – Լ. Շ.) (էջ 335): Վավերագրերի հիման վրա մանրակրկիտ գրված այս հատվածը հույժ

կարևորություն է ստանում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, որտեղ ինչպես ավի մեջ ներկայացվում է ԱՄՆ քաղաքականությունը մեզ հետաքրքրող ոլորտներում կոնկրետ անձանց, օրինակ՝ Հենրի Մորգենթաուի գործունեության տեսքով:

Այսպիսով, հայ ամերիկագիտության ոլորտում գիտական հանրության սեղանին է դրված իր տեսակի մեջ եզակի մի աշխատություն, որն այսուհետև *ԱՄՆ-Օսմանյան կայսրություն (Թուրքիա)-Հայաստան (Հայկական հարց)* եռանկյունում թույլ է տալիս ինչպես ծավալային, այնպես էլ խորքային ոլորտներում, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից դեպի ապագա ժամանակային չափումում հետազոտություններ կատարելու: Հասկանալի է, որ նման կտրվածքով հարցադրումը կծառայի թե՛ պատմագիտությանը և թե՛ տեսական ու գործնական քաղաքականության մշակմանը Հայաստանի Հանրապետությունում: Ա. Կիրակոսյանի մենագրությունը կօգնի մասնավորապես հայ հետազոտողին ամերիկյան հետևողականության համանմանությամբ ձևակերպել և պաշտպանել սեփական ազգային շահերը:

Հարկ ենք համարում նշել, որ հեղինակը մենագրության տողատակերում ներկայացնում է անձնանունների հանգամանակից «բառարան», որը, ըստ էության, ընթերցողին ձերբազատում է տեղեկատու գրականության դիմելու ժամանակածախս հոգսից:

Այդուհանդերձ, գրախոսվող գրքում նկատելի են նաև որոշ թերություններ, որոնք սակայն չեն արժեզրկում աշխատանքի նշանակությունը: Այսպես, արխիվային նյութով հրապուրվածությունը թերևս ստվերում է թողել ամերիկագիտության ոլորտում ստեղծված գիտական գրականության «կիրառությունը»: Առանձին դիտողության է արժանի նաև հայ հետազոտողների շրջանում դրսևորվող որոշ տեղանունների և աշխարհագրական «ավտոխտոն» անվանումների նկատմամբ հեղինակի վերաբերմունքը առաջին հերթին Արևմտյան Հայաստանի պարագայում:

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

Seda Gasparyan, The Armenian Genocide: A Linguocognitive Perspective, Yerevan, Yerevan State University Press, 2014, 206 p.

Մեղա Գասպարյան, Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, 206 էջ

ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մեղա Գասպարյանի գրախոսվող մենագրությունը լուրջ ներդրում է ինչպես հայոց ցեղասպանագիտության, այնպես էլ հայ լեզվաբանության մեջ: Գիտակցելով իր առջև դրված խնդրի կարևորությունը՝ վաստակաշատ գիտնականը և մեծ հայրենասերը, որը, ի թիվս բազմաթիվ այլ լեզվաբանական ուսումնասիրությունների, նաև հայերենագիտական հարցերին նվիրված հայերեն, անգլերեն և ռուսերեն հրապարակումների հեղինակ է, ձեռնամուխ է եղել ցեղասպանության խնդիրն արծարծող մի շարք օտարերկրյա հեղինակների՝ անգլերեն լույս տեսած պատմագիտական աշխատությունների քննությանը լեզվաճանաչողության դիրքերից: Ելնելով լեզվի և մտածողության միասնության սկզբունքից՝ հեղինակն իր առջև խնդիր է դրել բացահայտելու լեզվական հնարները որպես քաղաքական քարոզչություն օգտագործելու, հասարակական կարծիք ձևավորելու, ընթերցողի մտածողությունը ուղղորդելու ներքին, անտեսանելի մեխանիզմի էությունը: Հայոց եղեռնի թեմային անդրադարձած մի շարք քաղաքական գործիչների, պատմաբանների և գիտնականների (Հենրի Մորգենթաու, Գյունտեր Լյուի, Ռոնալդ Սյունի, Թաներ Աքչամ, Իսրայել Չարնի, Յաիր Աուրոն և այլք) գրավոր և բանավոր խոսքի լեզվաճանաչողական քննությունը թույլ է տալիս բացահայտելու գրողի/խոսողի կարծիքը, բուն մոտեցումը քննարկվող հարցի շուրջ, նրա հաղորդակցական իրական նպատակները, որոնք հաճախ թաքնված են բառախաղի, ոճական հնարի, խոսքային մարտավարական հնարի կամ որոշակի խոսքային ակտի յուրօրինակ կիրառմամբ ստեղծվող երկիմաստության քողի տակ:

Այսպես, Գ. Լյուիի “The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide” («Հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում. վիճահարույց ցեղասպանություն») աշխատության լեզվաճանաչողական քննությամբ պարզ է դառնում, որ այն պատմական փաստերի աղավաղման, միջազգային հանրության կողմից Հայոց եղեռնի փաստը կասկածի տակ դնելու փորձ է: Այստեղ թեև հեղինակը փորձում է թվացյալ անաչառությամբ նկարագրել այն պատմական իրադարձությունները, որոնք հանգեցրին հայերի զանգվածային ոչնչացմանը Օսմանյան Թուրքիայի (սակայն ըստ էության

հայ ժողովրդի հնագույն հայրենիքի) տարածքում, իրականում նա թուրքական մտայնության կողմնակիցն ու հրեական ծայրահեղականների հայացքների ջատագովն է: Կատարելով լեզվական փաստերի օբյեկտիվ քննություն Ս. Գասպարյանը բացահայտում է ընթերցողի գիտակցության վրա որոշակի դիտավորությամբ ներագղելու լեզվական միջոցները, որով էլ ի ցույց է դրվում Գ. Լյուիի այս քողարկված դիրքորոշումը: Այսպես, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացասական ներիմաստ պարունակող լեզվական միջոցների կիրառությամբ (եղանակավորող բայ, գոյական, ածական՝ must, attempt, irresolvable, shaky factual foundation, էջ 69) հեղինակը ժխտում է հայոց եղեռնի և հրեաների հոլոքոստի միջև եղած կապը: Այնուհետև, իր խոսքին թվացյալ անաչառություն, օբյեկտիվություն հաղորդելու նպատակով՝ որոշակի դերանունների, գոյականների, բայական կառույցների կիրառմամբ Գ. Լյուին փորձում է ընթերցողին համոզել, որ թուրքական կառավարության՝ հայերին տեղահանելու որոշումը հիմնավորված էր և օրինական գործողության ձախողված փորձ (I start with the assumption, in good faith, I am inclined to believe, wanted to arrange, էջ 70): Սակայն Ս. Գասպարյանը նուրբ դիտողականությամբ ներթափանցում է գրվածքի խորքերը և լեզվաճանաչողական քննության ընձեռած լայն հայեցակերպը կիրառելով՝ բացահայտում է հեղինակի իրական մտադրությունը, նրա հետին միտքը, այն է՝ աղավաղել պատմական փաստերը և արդարացնել թուրքերի կատարած ոճիրը:

Ի ցավ մեզ՝ թուրքամետ դիրքորոշումն արտահայտվում է ոչ միայն ազգությամբ թուրք մտավորականների կամ թուրքական իշխանություններին հաճոյանալու նպատակ հետապնդող օտար պատմաբանների աշխատություններում, այլև ծագումով հայ գիտնականների գործերում, որոնք «կամա թե ակամա տեղիք են տալիս թուրքամետ գաղափարներին, նպաստում դրանց տարածմանը» (էջ 81): Ասվածի վկայությունն են Ռ. Սյունիի գրվածքները, մասնավորապես նրա “Looking Toward Ararat: Armenia in Modern History” («Հայացք դեպի Արարատ. Հայաստանը ժամանակակից պատմության մեջ») մենագրությունը և նրա խմբագրությամբ լույս տեսած հոդվածների ժողովածուն՝ “A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire” («Ցեղասպանության հարց. հայերը և թուրքերը Օսմանյան կայսրության վերջին փուլում») վերնագրով:

Ս. Գասպարյանը ցույց է տալիս, որ Ռ. Սյունին թուրք պատմաբան Ս. Ռ. Սոնյելի տեսակետների ազդեցության տակ է, որի համաձայն՝ հայ-թուրքական հարաբերությունների վատթարացումը պայմանավորված էր Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքներով և օտար սադրիչների գործունեությամբ: Սակայն Ս. Գասպարյանը եզրակացնում է, որ Հայոց եղեռնի պատճառները պատերազմի իրողությամբ դիտելը առնվազն նշանակում է «փախուստ տալ իրականությունից» (էջ 85):

“Looking Toward Ararat” աշխատությունից բերված հատվածի քննությունը (էջ 29-30) ցույց է տալիս, որ թեև բացասական իմաստային հավելումներ կիրառելով՝ Ռ. Սյունին փորձում է իր գրվածքին թուրքական կառավարության անմարդկային քաղաքանությանը դատապարտող դիրքորոշում հաղորդել (the government was brutal, were arrested and exiled, inhuman policy, to eliminate a people), իրականում նա արդարացնում է թուրքական կառավարության գազանաբարո արարքները՝ դրանք համարելով հուսահատության և խուճապի արդյունք (the Turkish actions against the Armenians were taken in desperation and panic, էջ 86) և պատասխանատվության բեռը բարդում բուն սպանողն իրականացրած քրդերի և նույնիսկ հայերի ուսերին, որոնք անհնազանդ էին ու ապստամբ (էջ 98, 99-100): Ավելին, Սյունին թույլ է տալիս նաև պատմական փաստերի աններելի աղավաղում՝ նշելով, որ հայերը ապրել են Արևելյան Անատոլիայում Թուրքերի ժամանումից սուկ հազար տարի առաջ և ոչ թե հազարամյակներ շարունակ:

Ուսումնասիրելով “A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire” հոդվածների ժողովածուի նախաբանից մի հատված (հեղինակներ՝ Ֆ. Գյոչեկ և Ռ. Սյունի)՝ Ս. Գասպարյանը մատնանշում է բառային մի շարք միավորներ և քերականական կառույցներ, որոնք ճանաչողական ցուցիչներ են և փաստում են անուրանալի պատմական իրադարձություններին՝ տեղահանումներին և ջարդերին, գրվածքի հեղինակների տեղյակ լինելը (there was no dispute, the evidence mounted that, there was no civil war, էջ 102): Այդուհանդերձ, Ս. Գասպարյանի պնդմամբ, սույն փաստերին իրազեկ լինելը նրանց չի խանգարում՝ իրականությունը խեղաթյուրող թուրքամետ գաղափարներ քարոզելու: Նրանք զարգացնում են այն գաղափարը, թե Հայկական հարցում դեռևս առկա են չճշտված էջեր (blank spots), որոնց հիման վրա էլ փորձում են կասկածի տակ դնել իրերն իրենց անունով կոչելու, այն է՝ նախապես ծրագրված գանգվածային սպանող ցեղասպանություն (genocide) անվանելու հարցը: Հայերի գանգվածային ոչնչացման օբյեկտիվ փաստերի նկատմամբ թերահավատ վերաբերմունք ձևավորելու, ցեղասպանությունը մերժող հասարակական կարծիք ստեղծելու ներակա քարոզչությունն իրագործվում է նաև լեզվական այլ միավորների նպատակաուղղված և դիտավորյալ կիրառությամբ: Այսպես, yet հակառակ իմաստ արտահայտող տեքստային կապակցող բառով ակնարկվում է տեքստի երկու հատվածների՝ հայերի ջարդերը հաստատող և ցեղասպանության փաստը կասկածի տակ դնող մասերի իմաստային հակադրությունը: Իսկ ասվածի իմաստը շեշտելու նպատակով կիրառված most importantly միջանկյալ բառակապակցության օգնությամբ կասկածի տակ է դրվում Հայոց եղեռնի փաստի հավաստիությունը (էջ 104):

Խորանալով սույն ուսումնասիրության մեջ՝ համոզվում ենք, որ պատմագիտական աշխատություններում, մասնավորապես՝ Թաներ Աքչամի՝ “A

Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility” («Ամոթալի արարք. հայերի ցեղասպանությունը և թուրքերի պատասխանատվության հարցը») մենագրության մեջ, հայր և թուրքը հանդես են գալիս որպես հավաքական կերպարներ, որպես երկակի հակադրության մեջ գտնվող ճանաչողական կատեգորիաներ՝ հասկացույթներ, որոնք մի կողմից՝ որպես էթնոնիմներ ոճական առումով չեզոք են, բայց մյուս կողմից՝ վերացարկված հասկացութային իմաստային կադապար ունեցող և մարդկային ու բարոյական առումներով միմյանց հակադրվող արժեքներ: Դրա վկայությունն է վերոնշյալ աշխատության լեզվաճանաչողական քննության հիման վրա Ս. Գասպարյանի կազմած գծապատկերը (էջ 142), որտեղ տրված է ցեղասպանություն (genocide) բառի մտագուգորդային դաշտը թուրքերի և հայերի՝ պատմական զարգացմամբ ու կենսափորձով պայմանավորված ազգային մտածելակերպի համապատասխան կողավորումով: Հետաքրքրական է, որ հայի և թուրքի իրար հակադիր հասկացութային իմաստային կադապարները դրսևորվում են ազգային մտածելակերպի տարբերությամբ և ի հայտ են գալիս ցեղասպանության նկատմամբ հայերի և թուրքերի գիտակցության մեջ ծնվող հետևյալ գուգորդություններում. «ոճիր, արյունահեղություն, կոտորած, բաց վերք, հայրենիքի կորուստ, պատմության ողբերգական էջեր» (հայերի տեսանկյունից), և «կեղծված պատմություն, անհիշելի ժամանակներից եկող պատմություն, վարկաբեկող անցյալ, մոռացության մատնված փաստեր, արգելված թեմա, պատմության ամոթալի էջեր» (թուրքերի տեսանկյունից):

Պատմական փաստաթղթերի ուսումնասիրության սույն ձևաչափը, որը կարելի է որակել որպես պատմաբանասիրական, այսօր մեծ հեռանկարներ ունի հատկապես ցեղասպանագիտության ոլորտում, քանզի, ինչպես ցույց է տալիս պրոֆեսոր Ս. Գասպարյանի քննությունը, հայոց եղեռնի հարցն արծարծող օտարալեզու (հիմնականում անգլերեն) գրվածքները միշտ չէ, որ հայանպաստ են, միշտ չէ, որ ճիշտ են մոտենում հայկական հարցի քննությանը, և շատ դեպքերում, նույնիսկ թուրքերի հասցեին քննադատություն հնչեցնելով հանդերձ, նրանց գազանաբարո գործողություններն արդարացնող ներիմաստ են պարունակում: Այս առումով՝ սույն աշխատությունն արժեքավոր է ինչպես պատմագիտության, այնպես էլ լեզվաբանության համար, քանզի թույլ է տալիս պատմական փաստերի շարադրման օբյեկտիվ հենքի վրա բացահայտել հեղինակային սուբյեկտիվ նպատակները և ընթերցողի գիտակցության վրա որոշակիորեն ներազդելու խոսքային ռազմավարության մեխանիզմը: Ուստի այն միտքը, որ մարդիկ են կերտում պատմությունը, կարելի է մեկնաբանել նաև այսպես. բառերն են կերտում պատմությունը: Այս համատեքստում հասկանալի է դառնում նաև հայերի համար այդքան ցավոտ հարցի՝ “genocide” (ցեղասպանություն) բառի կիրառման կարևորությունը միջազգային ատյաններում և քաղաքական գործիչների

կողմից, քանի որ այդ եզրույթը հայոց պատմության ամենաողբերգական էջը միջազգայնորեն անվանող և դատապարտող իմաստ է ներակայում: Դրավառ ապացույցը գրախոսվող մենագրության մեջ Ս. Գասպարյանի հայերեն «եղեռն» և անգլերեն “genocide” բառերի ծագումնաբանական վերլուծությունն է իմաստային կառուցվածքի տեսանկյունից: Մարդկանց զանգվածային ոչնչացումը որպես մեղսագործություն դիտարկող բառախմբի իմաստային դաշտի կենտրոնական մասում «եղեռն» (genocide) բառ-միավորն է, որում առավել ավարտուն և հիմնավոր է արտահայտված մարդկության դեմ կատարվող ոճրագործության էությունը (էջ 174): Սույն իմաստային դաշտում ընդգրկված մյուս բառերում, ինչպես օրինակ՝ slaughter (կոտորած, մահապատիժ), carnage (արյունահեղություն, ջարդ), massacre (զանգվածային սպանություն, ոչնչացում), որոնք դաշտի միջուկից որոշակի հեռավորության վրա են գտնվում, առկա են տարբեր իմակներ (semes): Հայոց եղեռնին առնչվող մի շարք հեղինակների գրվածքների՝ լեզվաճանաչողական տեսանկյունից կատարված քննությամբ Ս. Գասպարյանը ցույց է տալիս, որ բոլոր համատեքստերում չէ, որ հոմանշային խմբի բառերից մեկի կիրառությունը «եղեռն» բառի փոխարեն համարժեք և տեղին է իմաստային, գործառության, ոճական և գործաբանական համապատասխանության տեսանկյուններից: Հետևաբար, եզրակացնում է նա, շատ համատեքստերում հեղինակների կողմից «եղեռն» բառի փոխարինումը նույն իմաստային դաշտին պատկանող այլ բառերով ոչ միայն արդարացված չէ, այլ նաև պատմական փաստերի դիտավորյալ խեղաթյուրում է, իրադարձություններին տրվող կեղծ գնահատական:

Նշենք նաև, որ անգլերեն գրված սույն աշխատությունն ընթերցողների լայն շրջանակ ունի ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Այն, ըստ էության, արժեքավոր ներդրում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ, և կարևոր դեր է կատարում հակահայկական քարոզչամեթոդային դեմ մեր պայքարն առավել բարձր արդյունավետությամբ իրականացնելու գործում:

ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՆՈՆՅԱՆ

Axel Meißner, Martin Rades “Christliche Welt” und Armenien, Berlin, LIT Verlag, 2010, 522 S.

Ակսել Մայսներ, Մարտին Ռադեի «Քրիստոնյա Արևելքը» և Հայաստանը, Բեռլին, LIT հրատարակչություն, 2010, 552 էջ

Գերմանացի ավետարանական աստվածաբան, գիտնական և հրապարակախոս, «Քրիստոնյա Արևելքը» (“Die Christliche Welt”) պարբերականի հրատարակիչ, պրոֆեսոր Մարտին Ռադեի անունը և երկարատև արգասաբեր գործունեությունը մինչև վերջերս անհայտ էին գիտական հանրությանը, այնինչ նա XIX դարի վերջին քառորդից շուրջ հինգ տասնամյակ շարունակ ոչ միայն նշանակալից ավանդ է բերել գերմանական գիտական-հասարակական մտքի զարգացմանը, այլև հետևողականորեն սատարել է Օսմանյան կայսրությունում վտանգված հայությանը, նպաստել Գերմանիայում հայանպաստ շարժման զարգացմանը՝ դառնալով հայ ժողովրդի երախտավորներից մեկը: Հարկ է արձանագրել, որ գերմանացի ավետարանական քահանա դոկտոր Ակսել Մայսների գրախոսվող մենագրությունը պատշաճորեն լրացնում է այդ բացը: Երեք գլուխներից բաղկացած աշխատությունը հենվում է մեծաքանակ արժեքավոր սկզբնաղբյուրների վրա, որոնց զգալի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Առաջին գլուխը, որը կրում է «Հայկական հարցը և Գերմանիան «Քրիստոնյա Արևելքում» 1878-1940 թթ.» վերնագիրը, նվիրված է պարբերականի էջերում վերոնշյալ ժամանակահատվածում քննարկվող հիմնահարցի վերաբերյալ ի հայտ եկած առավել ուշագրավ հրապարակումների ներկայացմանն ու քննական լուսաբանմանը: Հայկական հարցի միջազգայնացման և զարգացումների՝ հեղինակային շարադրանքն ուղեկցվում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ արժեքավոր պարզաբանումներով, որոնցում ներկայացվում են եվրոպացի տարբեր ականատեսների վկայությունները, գերմանական լրատվամիջոցների՝ հարցի առնչությամբ որդեգրած դիրքորոշումը և դրանցում եղերական իրադարձությունների արտացոլումը, ինչպես նաև հայկական կոտորածների վերաբերյալ գերմանական եկեղեցիների մոտեցումները: Գնահատանքով պետք է նշել, որ շարադրանքը բնութագրվում է ոչ միայն բուն թեմային վերաբերող հարցերի, այլև այն իրադարձությունների, զարգացումների և փոխառնչությունների հանգամանալից քննությամբ, առանց որոնց դրանց լուսաբանումը չէր կարող ամբողջական և համոզիչ լինել: Ըստ այդմ՝ անդրադարձ է կատարվում գերմանա-թուրքական տնտեսական և քաղաքական հարաբերություններին, Վիլհելմ II-ի Թուրքիա կատարած երկու այցելություններին, 1908 թ. երիտթուրքական հեղափոխու-

թյանը, 1912-1913 թթ. բալկանյան պատերազմին, հայկական բարենորոգումների՝ Առաջին աշխարհամարտի նախօրեին ի հայտ եկած զարգացումներին, հայերին ցեղասպանության ենթարկելու միջոցով Հայկական հարցը լուծելու՝ թուրքական պետական քաղաքականությանը և դրա դրսևորումներին՝ թե՛ 1890-ական թթ. համիդյան և թե՛ 1909 թ. կիլիկյան կոտորածների, ինչպես նաև Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան պետությունում հայ ժողովրդի տեղահանման ու բնաջնջման համապատկերում: Պարզաբանվում են նաև Փարիզի խաղաղության վեհաժողովին, Գերմանա-հայկական ընկերության գործունեությանը, Սողոմոն Թեյլիբյանի դատավարությանը վերաբերող այն խնդիրները, որոնք այս կամ այն չափով նպաստում են Մ. Ռադեի հայանպաստ գործունեության առավել հանգամանալից լուսաբանմանը:

Եթե առաջին գլխում հիմնականում անդրադարձ է կատարվում «Քրիստոնյա Արևելքը» պարբերականում Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, կայսերական Գերմանիայի արտաքին քաղաքականության և այլ հարակից խնդիրների մեկնաբանմանը, ապա երկրորդ և երրորդ գլուխները վերաբերում են գլխավորապես հայօգնության աշխատանքներում Մ. Ռադեի և նրա պարբերականի մասնակցությանը: Ներկայացվում են այն հիմնական դրդապատճառները, որոնք նրան ուղղորդել են դեպի Հայաստանը և հայ ժողովուրդը: Գերմանական բողոքականության լիբերալ հոսանքի այդ ականավոր ներկայացուցիչը իր պարբերականում դեռևս 1892 թ. մեծ տեղ է հատկացրել Հայաստանի և հայ ժողովրդի հետ կապված խնդիրների լուսաբանմանը: 1894 թ. նրա ակտիվ մասնակցությամբ ստեղծվել է «Անհրաժեշտ օժանդակություն» կազմակերպությունը, որը Հայ առաքելական եկեղեցու հետ սերտ համագործակցությամբ ձեռնամուխ է եղել Գերմանիայում տաղանդավոր երիտասարդ հայ հոգևորականների աստվածաբանական բարձրագույն կրթության կազմակերպմանը: Հայկական թեմատիկայի և խնդիրների հետ Մ. Ռադեի առաջին աղերսները որոշիչ են դարձել նրա հետագա երկարատև գործունեության համար, քանի որ այդուհետ նա իր պարբերականով մշտապես գտնվել է հայության կողքին՝ ջանալով մի կողմից գորակցել վտանգված ժողովրդին, իսկ մյուս կողմից իր նպաստը բերել Գերմանիայում եղերական իրադարձությունների լուսաբանմանը, հայանպաստ հասարակական կարծիքի արմատավորմանը և փրկարար աշխատանքների կազմակերպմանը: Այդ ամենն իհարկե պետք է հանգեցնել Յոհաննես Լեփսիուսի, Էվալդ Շթիրի, Պաուլ Ռոհրբախի, Ֆրիդրիխ Լոֆսի և գերմանացի այլ հայանպաստ գործիչների հետ Մ. Ռադեի սերտ համագործակցությանը, ինչը ևս, բնականաբար, սույն աշխատությունում ըստ ամենայնի լուսաբանվում է:

Մ. Ռադեն հայկական խնդիրներով զբաղվող գերմանացի բազմաթիվ այլ հրապարակախոսներից առաձևանում էր իր միանգամայն հստակ դիրքորոշմամբ՝ քննադատելով բոլոր նրանց, ովքեր փորձում էին հայօգնության աշխատանքների հնարավորությունը և անհրաժեշտությունը դիտարկել գերմանա-թուրքական քաղաքական հարաբերությունների համատեքստում

և, ըստ այդմ, կողմնակից էին միայն սահմանափակ մարդասիրական օգնություն ցուցաբերելուն: Խարազաններով այդօրինակ մտայնությունները, նա գերմանացի քրիստոնյաների պարտքն էր համարում անվերապահ և անմնացորդ նվիրումը հայօգնության աշխատանքներին, և հարկ է նշել, որ դա մեծ նշանակություն ունեցավ բազմաթիվ գործիչների դիրքորոշումները հստակեցնելու և նրանց ուղղորդելու հարցում:

Գնահատանքով պետք է նշել, որ Ա. Մայսների աշխատությունում այս առումով ևս ըստ ամենայնի ներկայացվել և արժևորվել է Մ. Ռադեի կարևոր ներդրումը հայօգնության աշխատանքներում: Նրա մենագրության կարևոր արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ Հայկական հարցի և հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի վերաբերյալ Մ. Ռադեի հայացքների լուսաբանումը կատարվում է նրա ժամանակի հիմնական քաղաքական կողմնորոշումների և դիրքորոշումների համատեքստում՝ այդ ներկայակում առավել ընդգծուն և ընկալելի դարձնելով նրա՝ որպես հրատարակչի, հասարակական գործչի և անհատի մղած գաղափարական պայքարի նշանակությունը: Մ. Ռադեն գերմանացի այն սակավաթիվ գործիչներից էր, ովքեր չէին վարանում, առանց որևէ վերապահության, դատապարտելու հայ ժողովրդի եղերական ճակատագրի հանդեպ գերմանական կայսրության որդեգրած հանդուրժողականությունը և հանդես գալու ապաքրիստոնեացված և մարդասիրական արժեքներից օտարված՝ Գերմանիայի և եվրոպական այլ պետությունների մեծ քաղաքականությունը վերափոխելու պահանջով: Նա ամենևին չէր կիսում Վիլհելմ II-ի՝ Թուրքիա կատարած երկրորդ այցելությունից, այդ ընթացքում ձեռքբերված գերմանա-թուրքական երկկողմ դարգացման վերաբերյալ պայմանավորվածություններից և Բաղդադի երկաթուղու կառուցման նախագծից Գերմանիայում ի հայտ եկած մեծ ոգևորությունը: Միաժամանակ կոչ էր անում եկեղեցուն, հոգևորականությանը և հասարակական գործիչներին քաղաքականությունը թողնել քաղաքագետներին, ավելորդ ոգևորությանը տուրք չտալ և, ընդհակառակը, ջանքեր գործադրել, որ ամրապնդվեն խիղճը, բարոյական չափանիշները և մերձավորին օգնելու պատրաստակամությունը, որպեսզի հասարակայնությունը պատրաստ լինի դիմագրավելու այն մարտահրավերներին ու աղետներին, որոնք կարող էին հետևել մեծ տերությունների, տվյալ պարագայում Գերմանիայի ապաքրիստոնեական և եսակենտրոն արտաքին քաղաքականության հետ կապված նոր զարգացումներին:

Գրքում ներկայացվում են 1896 թ. Հայաստանի օգնության գերմանական միության ստեղծման հանգամանքները և հայօգնության աշխատանքների սկզբնավորումն ու զարգացումը 1896-1942 թթ.: Պարզաբանվում են այդ աշխատանքների ընթացքում և դրանց վերաբերյալ հայ ժողովրդի գերմանացի բարեկամների շրջանում ի հայտ եկած տարակարծությունները, բանավեճերը և դրանց հաղթահարման հարցում «Քրիստոնյա Արևելքի» կարևոր դերակատարությունը: Ներկայացվում է նաև Մ. Ռադեի և նրա պարբերակա-

նի նշանակալից ներդրումն ինչպես գերմանական հասարակական շրջաններին հայոցնության աշխատանքներում համախմբելու, այնպես էլ դրանց մասնակից դարձնելու հարցում:

Մեծ եղեռնի ժամանակաշրջանում և այդուհետ ևս Մ. Ռադեն հրապարակախոսի իր ավյունով ոչ միայն ջանում էր հնարավորինս նպաստել եղերական իրադարձությունների վերաբերյալ հասարակայնության իրազեկմանը, այլև իր ներդրումը բերել Յ. Լեփսիուսի կողմից ձեռնարկվող օգնության աշխատանքներին: Նա պատերազմի տարիներին, որչափ հնարավոր էր տիրող գրաքննության պայմաններում, իր պարբերականը տրամադրում էր նաև այն հեղինակներին, որոնց նյութերը նպաստում էին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների և հայ ժողովրդի ծանր դրության պարզաբանմանը: «Քրիստոնյա Արևելքը» այդ պատճառով հարկադրված էր շատ հաճախ գործ ունենալ գրաքննության և ընդհուպ հրատարակության արգելման սպառնալիքների հետ, ինչը, սակայն, Մ. Ռադենին չընկճեց: Նա շարունակ հայ ժողովրդի կողքին էր ջանալով նաև գորակցել Յ. Լեփսիուսին իր հայանվեր գործունեության ընթացքում: Նույնիսկ եթե հայ ժողովրդի կացությանը վերաբերող Լեփսիուսի տեղեկությունների հրապարակումը գրաքննության կողմից արգելքի էր ենթարկվում, ապա Մ. Ռադեն նրա հետ սերտ համագործակցությամբ աջակցում էր դրանց տարածմանը գաղտնի թռուցիկների միջոցով:

Մ. Ռադեն, ինչպես փաստում է Ա. Մայսները, իր անվերապահ մասնակցությունն էր բերում նաև գերմանական կայսերական կառավարությանը, Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսների մասնակից տերություններին ուղարկվող հայանպաստ կոչերին և ուղերձներին, որոնք նախաձեռնվում էին Յ. Լեփսիուսի և հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների կողմից ջանալով նպաստել հայ ժողովրդի արդարացի հատուցմանը:

Ա. Մայսների ուսումնասիրությունն աչքի է ընկնում նյութի մատուցման ճշգրտությամբ և հստակությամբ, անաչառ քննական լուսաբանումներով, պատճառահետևանքային բազմազան և տարաբնույթ առնչությունների բարեխիղճ հետազոտությամբ և բնականաբար նաև օգտագործված սկզբնաղբյուրների հանգամանալից ներկայացմամբ ու քննությամբ: Հենց միայն այն հանգամանքը, որ օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկը անձնանունների և տեղանունների ցանկերի հետ մեկտեղ կազմում է ավելի քան 120 էջ, այն է՝ աշխատության ընդհանուր ծավալի շուրջ մեկ քառորդը, բավական է փաստելու, թե ինչպիսի բարեխիղճ աշխատանք է նա իրականացրել: Այն, անկասկած, կարևոր ներդրում է հայ-գերմանական առնչությունների պատմության ուսումնասիրության ասպարեզում, և պետք է հուսալ, որ առաջիկայում կթարգմանվի հայերեն՝ մատչելի դառնալով նաև հայալեզու ընթերցողի համար:

ՄՇՈՏ ՀՄՅՐՈՒՆԻ

Եռօրյա Գեոցոցիո Ժողովրդական Գրական Գործունեությունը 1914-1918 (Նախնական Գրական Գործունեությունը), Թուրքիայի, Երևան, 2011, 163 էջ.

Հայոց ցեղասպանությունը վրացական պարբերականներում 1914-1918 թթ. (արխիվային նյութերի ժողովածու), Թբիլիսի, Ունիվերսալի, 2011, 163 էջ

Հայոց ցեղասպանության մասին գրվել են բազմաթիվ մենագրություններ, կազմվել և լույս են տեսել արժեքավոր արխիվային վավերագրերի ժողովածուներ, ակնատեսների և մասնակիցների հուշեր, վկայություններ: Հրատարակվել են նաև հայ ժողովրդի ողբերգության առնչվող տարբեր երկրների մամուլի նյութերն ընդգրկող ժողովածուներ¹:

Բնական է, որ դրկից երկրի մամուլը ևս գրեթե պարբերաբար և հետևողականորեն ի սկզբանե արձագանքել է և անդրադարձել հայ ժողովրդի հանդեպ Օսմանյան կայսրությունում սկիզբ առած ողբերգական իրադարձություններին: Հայոց ցեղասպանության պատմությունը լուսաբանող փաստաթղթերի ժողովածուների թվում իր ուրույն տեղը կարող է զբաղեցնել նաև սույն ժողովածուն, որը Վրաստանի արխիվներում պահվող որոշ թերթերում ու հանդեսներում՝ «Նախնական» («Մաքարթվել»), «Նախնական» («Մամուլ»), «Նախնական Գրական» («Մախալիս փուրցելի») և «Երկր» («Երկր»), Հայոց եղենի վերաբերյալ ի մի բերված թղթակցությունները, հրամանագրերը, հեռագրերը, նամակները, հարցազրույցները, վավերագրերը, վկայությունները, այլևայլ գրություններն ամփոփող առաջին վրացալեզու հրատարակությունն է: Նշենք, որ այս տարաբնույթ փաստաթղթերի գերակշիռ մասը ամբողջովին կամ հատվածաբար քաղվել է հայկական («Մշակ», «Հորիզոն», «Վան-Տոսպ» «Պայքար») և ռուսական («Новое обозрение», «Листок», «Закавказская речь», «Кавказское слово», «Петербургские ведомости», «Русские ведомости») մամուլից, ինչպես նաև Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Հոլանդիայի, Հունաստանի, Բուլղարիայի և այլ երկրների պարբերականներից ու շրջանառության մեջ դրվել առաջին անգամ:

¹ Տե՛ս օրինակ՝ **Kloian R. D.**, The Armenian Genocide. News Accounts from the Armenian Press (1915-1922). Third edition, Berkeley, 1985; Le génocide arménien dans la presse canadienne. The Armenian Genocide in the Canadian Press, vol. I, 1915-1916; vol. II, 1916-1923, Montréal, 1985; Armenians at the Twilight of The Ottoman Era. Compiled & edited by Vosgan Mekhitarian, Rev. Vahan Ohanian. News Reports From The International Press, vol. I, The New York Times 1890-1914. Published by Genocide Documentation & Research Center, 2011; The Times of the Armenian Genocide. Reports in the British Press, vol. 1: 1914-1919; vol. 2: 1920-1923. Compiled & edited by Katia Minas Peltekian, Beirut, 2013.

Երկրները համակարգված են ժամանակագրորեն և ընդգրկում են 1914 թ. հունվարից մինչև 1918 թ. հունիսի սկիզբը: Ժողովածուն բաղկացած է հինգ մասից՝ «1914», «1915», «1916», «1917» և «1918», որոնց ենթավերնագրերը՝ «Մեր դրացիները», «Հայերի դրությունը Թուրքիայում», «Հայերի սպանողը», «Անգլիան և հայերի ինքնավարությունը», «Հայկական հարցը Անգլիայի պառլամենտում», «Հայկական հարցը Ռայխստագում», «Ամերիկյան և հայերը», «Հայ գաղթականները» և այլն, ավելի քան խոսուն են և արտացոլում են արձարձվող հարցերի բովանդակությունը՝ վրացալեզու ընթերցողին հաղորդակից դարձնելով Հայոց ցեղասպանության տարատեսակ դրվագների:

Առաջին բաժինը ընթերցողին իրազեկում է Օսմանյան կայսրությունում տիրող կացությանը, առավելապես՝ Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրականացման հարցում օսմանյան կառավարության խիստ բացասական դիրքորոշմանը, հայ բնակչության հանդեպ պետական մակարդակով ատելություն և թշնամանք սերմանելուն, ինչպես նաև Կովկասյան լեռնաշղթայի երկայնքով սահման անցկացնելու մոլագար ցանկությանը և առհասարակ Թուրքիայի նախապատերազմական ծրագրերին ու նկրտումներին: «Սախալխո փուրցելի» լրագրի 1914 թ. հոկտեմբերի 29-ի (թիվ 124) հոդվածում ներկայացված են Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության նահանգներում բնակվող հայերի թվաքանակի մասին ուշագրավ տվյալներ, որոնց կարևորությունն անժխտելի է, քանզի թուրքական կառավարությունը միշտ խուսափել է հայերի էթնիկ պատկանելության մասին ճշգրիտ տեղեկություններ հաղորդելուց: Ավելին՝ նա հետևողականորեն նվազեցրել է տարածքի հայ ազգաբնակչության իրական թվաքանակը: Թերթի վկայությամբ՝ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ արևմտահայության ընդհանուր թիվը կազմել է ավելի քան երկու միլիոն: Սույն տվյալները շրջանառության մեջ են դրվել ըստ հայկական վիլայեթների.

«1912 թ. հայերի թվաքանակը հասնում էր՝
 Էրզրումի վիլայեթում 215.000-ի
 Վանի185.000-ի
 Բիթլիսի80.000-ի
 Խարբերդի168.000-ի
 Դիարբեքիրի.....105.000-ի
 Սվազի.....165.000-ի»:

Ըստ նույն թերթի՝ Օսմանյան կայսրությունում այդ ժամանակ բնակվում էր 2.100.000 հայ (էջ 20):

Գրքի երկրորդ և երրորդ բաժիններում զետեղված են բազմաթիվ թղթակցություններ, հաղորդագրություններ, որոնք արտացոլում են հայերի արտաքսումը, կառավարության քսումների գործողությունները, օտար տերությունների արձագանքները, գաղթականների վիճակը և այլն:

Ժողովածուում կան նաև Հայոց ցեղասպանության թուրքական «տե-

ասկետին» առնչվող նյութեր՝ կառավարող շրջանակների հայտարարություններ, հարցազրույցներ, որոնք վկայում են Հայկական հարցի, հայկական տարածքների ու հայերի ճակատագրի շուրջ երիտթուրքերի պարագլուխների և նրանց կամակից աստիճանավորների վերաբերմունքի մասին: Դրանք հերթական անգամ հավաստում են, որ Հայոց ցեղասպանությունը և օսմանահպատակ ժողովուրդների կոտորածներն ու բռնությունները եղել են կայսրության պետական, ազգային, կրոնական և ռասայական քաղաքականության ու քարոզչության հիմնական գործելակերպը, կրել հստակորեն ծրագրված բնույթ: Հատկանշական են Թալեաթի՝ 1918 թ. «Սաքարթվելո» թերթում Հայկական հարցի մասին հետևյալ խոսքերը: «Ես պետք է առնվազն հիսուն տարով արմատախիլ անեմ հայերի համար բարենորոգում անցկացնելու հարցի թեկուզև հիշեցումը... Հայերը կեղտոտ և զզվելի ազգ են: Նրանց ոչնչացնելով՝ ոչ ոք ոչինչ չի կորցնի» (էջ 59-60):

Տարաբնույթ թղթակցությունները մեկ անգամ ևս համոզում են, որ դաժանագույն ոճրագործության համար մեղավոր են նաև իրենց քաղաքակիրթ հորջորջող մեծ տերությունների ղեկավարներն ու բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք օսմանյան լծի տակ տառապող հայ ժողովրդի հանդեպ տասնամյակներ շարունակ բացահայտ կրավորական կեցվածք էին որդեգրել: Ավելին՝ հաճախ բարբարոսություններ կատարվել են նրանց լուռ համաձայնությամբ, երբեմն նույնիսկ խրախուսմամբ: Վկայակոչենք ժողովածուում բերված մեկ օրինակ. կայգերական Գերմանիայի Ռայխստագի պատգամավոր, ձախ սոցիալ-դեմոկրատական խմբակցության անդամ Կարլ Լիբկնեխտը պետության ղեկավարներից մեկին հարցրել է. «Կանցլերը գիտե՞ս, արդյոք, որ թուրքերը հարյուրհազարներով ոչնչացնում են հայերին, և, եթե, այո, ապա ի՞նչ քայլեր է ձեռնարկել կանխելու համար»: Բարոն ֆոն Շթումը պատասխանել է. «Կանցլերը ամեն ինչ գիտի, գիտի նաև կոտորածի մասին, ինչպես նաև այն մասին, որ հայերը, մեր թշնամու կողմից ոգեշնչված, թուրքերի դեմ ցույցեր են նախապատրաստում: Դա թուրքերին դրդել է դիմել ծայրահեղ միջոցի՝ հայերին տեղահանել և արտաքսել բնակության նոր վայր: Այսօր մեր և Թուրքիայի կառավարող շրջանների միջև առկա է կատարյալ համաձայնություն առ այն, թե որտեղ ինչ միջոցներ է հարկ ձեռնարկել՝ լիակատար կարգ ու կանոն հաստատելու համար: Ինչ վերաբերում է մանրամասներին, ապա մենք դրանք հրապարակելու իրավունք չունենք» (էջ 93-94):

Հետաքրքիր են նաև ժողովածուի չորրորդ և հինգերորդ մասերում գետեղված այն թղթակցություններն ու հաղորդագրությունները, որոնցում ներկայացված են հայերի ոչնչացման գործընթացի հարատևումը և դրա աշխարհագրական ծիրի ընդլայնումը (Արևելյան Հայաստանի, Կովկասի և Ռուսական կայսրության որոշ տարածքների ընդգրկում), որտեղ թուրքական գործերին անմիջականորեն աջակցում էր այդ գավառների թուրք և թաթար

բնակչությունը: Ցեղասպանության ծավալմանը առավել նպաստում էին ռուսական զորքերի դասավորությունն ու նրանց իսկ կողմից արևելահայ զինված խմբերի ու բնակչության զինաթափումը:

Եվս մեկ ոչ երկրորդական նյութ, որ վկայում է թուրք-թաթարա-վրացական հարաբերությունների մասին՝ զետեղված «Սաքարթվելո» թերթի 1918 թ. փետրվարի 27-ի համարում: Վեհիբ փաշան հայտնում է վրացի գեներալ Օդիշելիձեին, որ ինքը, իբր, Էրզրումից և նրա հարակից տարածքներից լուրեր է ստացել, թե իր «հեռանալուց հետո հայերը գազանաբար ոչնչացնում են մուսուլմաններին և նրանց բնակավայրերը» (էջ 139): Այդ իսկ պատճառով իրենք «ստիպված են նշված վայրերը շտապ ազատագրել այդ բռնամուլներից»: Վեհիբը նշում է նաև, որ վրացական զորքերը թուրքական զորքերի «վերադարձը Տրապիզոն դիմավորել են մեծագույն հրճվանքով»: Նույն գրության մեջ նա, կարծես, ավետում է վրացի գեներալին. «Բորչալուի գավառում թաթարները (խոսքը կովկասյան թաթարների՝ ադրբեջանցիների մասին է – Շ. Բ.) Արամյանցի կալվածքում ավերել են բամբակագոյի գործարանը և այլ շինություններ...» (նույն տեղում):

Վրացական մամուլի որոշ օրգաններ պատմությանն են ավանդել թուրքական կառավարության՝ հայերի հանդեպ կիրառած ոճրագործությունը, հայ ազգաբնակչության տեղահանությունը, աքսորի ճանապարհներին ու հատուկ ճամբարներում ջարդարարների չարանենգ գործողությունները, հայ մտավորականության ձերբակալությունն ու սպանությունը, մոլեռանդ ամբոխի խժոժությունները, անօրինակ խոշտանգումներն ու դաժանությունները, նաև քրդերի ասպատակությունները, կողոպուտներն ու բռնությունները: Ժամանակի վրաց մամուլն անդրադարձել է նաև Մոսկվայում, Մանկու-Պետերբուրգում, Թիֆլիսում, Փարիզում, Նյու Յորքում և այլ քաղաքներում կազմակերպված ներկայացուցչական հավաքներին ու խորհրդակցություններին, որոնցում քննարկում էին և վճռում բազմաթիվ երկրներում, դրանց թվում Անդրկովկասի հայաբնակ շրջաններում, առանձնապես Վրաստանում ապաստան գտած փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության, գաղթականների կարիքների համար տարբեր երկրների կողմից տրամադրվող և հասարակական կազմակերպությունների ու խմբերի հանգանակած գումարները, սննդամթերքը, հագուստը բաշխելու և այլ հրատապ հարցեր:

Գրախոսվող ժողովածուում ամփոփված՝ Հայոց ցեղասպանությունը հավաստող, երբեմն անգամ դատապարտող, վրացական մամուլի արձագանքները խիստ էական են հատկապես այսօր՝ ցեղասպանության 100-րդ տարելիցի շեմին (ժողովածուն հազեցած է քարտեզներով և տեքստերի լուսապատճեններով): Ուստի անհրաժեշտ է դրանք թարգմանել եվրոպական լեզուներով և ներկայացնել միջազգային հանրությանը:

Ոչ այնքան սովորաձավալ, սակայն արժեքավոր այս ժողովածուն կազ-

մելու, հրատարակելու գաղափարը հղացել է և աշխատանքներն իրականացրել Վրաստանի հայ համայնքի ուսանողական միությունը: Այն լույս է տեսել Թբիլիսիի եվրահայկական դաշնության վրացական գրասենյակի հովանավորությամբ:

Չնայած գիտական և քաղաքական անտարակուսելի կարևորությանը՝ գրախոսվող ժողովածուն չի ընդգրկում վրացական բոլոր սկզբնաղբյուրները, մասնավորապես՝ 1914 թ. նախորդած, առավել ևս 1918 թ. հունիսին հաջորդած իրադարձությունների պատկերն արտացոլող հրապարակումները: Այստեղ զետեղված որոշ նյութեր հստակ հուշում են, որ Վրաստանի արխիվներում կան Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողներին: Ուստի ողջունում ենք սույն ժողովածուի լույսընծայումը, առավել ևս եթե նկատի ունենանք, որ այն Վրաստանում Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված առաջին հրատարակությունն է:

ՀՐԱՉԻԿ ԲԱՅՐԱՄՅԱՆ

Haïganouche Grkacharian, *Hadjn, si on t'oublie... Mémoires, Chamigny, Le cercle d'écrits caucasiens, 2012, 259 p.*

Հայկանուշ Կրկյաշարյան, *Հաճն, եթե քեզ մոռանում են... Հուշեր, Շամինյի, Կովկասյան աշխատությունների կենտրոն, 2012, 259 էջ*

Կիլիկյան կոտորածների պատմությունը համալրվեց ևս մեկ գրքով՝ նվիրված Հայոց ցեղասպանության տարիներին Հաճն քաղաքի հայ բնակչության դառը ճակատագրին: Հայկանուշ Կրկյաշարյանը թղթին է հանձնել 1909-1920 թթ. հաճնաբնակ հայությանը բաժին հասած ողբերգական իրադարձությունների նկարագրությունները՝ օգտագործելով արժանահավատ սկզբնաղբյուրներ, այդ թվում կոտորածների՝ ֆրանսիացի ժամանակակիցների հուշեր և պատմագիտական հետաքրքիր ուսումնասիրություններ, ինչպես նաև դժնդակ փորձությունների միջով անցած կիլիկիահայ իր ծնողների՝ Ասատուր և Սարա Սաչյանների հաղորդած տեղեկությունները (էջ 17): Կսկածից վեր է, որ պատմական եղելություններին և երևույթներին հեղինակի տված գնահատականներով հագեցած այս հրատարակությունն ունի ոչ միայն պատմագիտական, այլև աղբյուրագիտական նշանակություն: Այդուհանդերձ, ի սկզբանե հարկ ենք համարում պարզաբանել, որ նպատակահարմար չենք գտնում գրախոսվող գիրքը համարել «հուշեր»՝ բառի դասական իմաստով, թեև այն վավերացված է տիտղոսաթերթին:

Հ. Կրկյաշարյանը ներկայացնում է բազմապիսի մանրամասներ, որոնք առնչվում են մասնավորապես կիլիկիահայերի՝ 1915 թ. տեղահանությանը, Միրիայի համակենտրոնացման ճամբարներում ապաստանած հայերի դժնդակ կացությանը, բռնագաղթի հետևանքով ընտանիքի անդամներին ամբողջությամբ կամ մասամբ կորցրած և բնաջնջումից մազապուրծ եղած սակավաթիվ հայերի՝ Կիլիկիա՝ հայրենի երկիր վերադարձին 1919 թ., «այդտեղ իրենց սպիներն ամոքելու և, եթե հնարավոր է, նոր կյանք վերսկսելու համար» (էջ 15), ինչպես նաև 1920 թ. Հաճնի հերոսական ինքնապաշտպանությանը:

Համառոտակի անդրադառնալով X-XI դարերում հիմնադրված Հաճն քաղաքի անցյալին, որտեղ ի սկզբանե հայեր են բնակվել, հեղինակը անդրադառնում է հատկապես XIX դարի երկրորդ կեսին հայ մանկավարժների այնտեղ ծավալած բեղուն գործունեությանը՝ չանտեսելով նաև բողոքական ու կաթոլիկ հոգևոր գործիչների և օտարերկրյա միսիոներների դերը դպրոցներ և արհեստանոցներ հիմնելու հարցում: Նա բարձր գնահատականի է արժա-

նացնում երկու երկսեռ որբանոցներ հիմնադրած ամերիկուհի միսիոներներ Մարի Ջերբերի և Ռոզ Լամբերթի (1878-1974) հայանպաստ գործունեությունը, շեշտում հետագայում աշխարհով մեկ սփռված հայ վերապրածների՝ նրանց հանդեպ տածած երախտագիտության խոր զգացումը (էջ 27)¹: Հեղինակը միաժամանակ չի զլանում ըստ իր մոր պատումների հաղորդելու նաև հաճնարնակ հայերի բարքերին և կենցաղին առնչվող որոշ հետաքրքիր մանրամասներ:

Հ. Կրկյաշարյանը համառոտակի անդրադարձներ է կատարում Հայոց ցեղասպանության տարբեր փուլերին՝ 1894-1896 թթ., 1909 թ. կոտորածներին, Հայոց մեծ եղեռնին, քեմալականների հայաստաց քաղաքականությանը, որոնք բացահայտում են իրադարձության առանձնահատկություններին առնչվող նրա մոտեցումները: Նա շեշտում է մասնավորապես Աբդուլ Համիդ II-ի գահակալության օրոք բացարձակ միապետության ամրապնդումն Օսմանյան կայսրությունում, պանիսլամականության գաղափարախոսության որդեգրումը, բոլոր օսմանահպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան իշխանությունների կիրառած «կառավարական բռնակալական քաղաքականությունը» (էջ 53), ինչպես նաև փաստում Հաճնում բնակվող հայերի հանդեպ բարձրաստիճան թուրք պաշտոնյաների հալածանքների վերսկսումը 1880-ական թվականներից (էջ 55):

XIX դարի 90-ական թվականներին սկիզբ առած Հայոց ցեղասպանության շարունակական գործընթացը բնութագրելով իբրև «հայերի ծավալուն կոտորածներ» (էջ 26)՝ նա դրանց սանձազերծումն իրավամբ պայմանավորում է Հայկական հարցին «լուծում տալու» Աբդուլ Համիդ II-ի մտադրությամբ և հանգում միակ հնարավոր հետևության. «Աբդուլ Համիդ II-ին անվանեցին «կարմիր սուլթան»՝ հայերին կոտորելու հրաման արձակելու համար» (էջ 59): Ցավոք, նա չի մատնանշում ֆրանսիացի ականավոր պատմաբան Ալբեր Կանդալի անունը, որն առաջինն է սուլթանին բնորոշել իբրև այդպիսին²:

Նշենք նաև, որ ինչ վերաբերում է համիդյան կոտորածների ժամանակաշրջանում արևմտահայությանը սատարած եվրոպացի մտավորականներին և քաղաքական գործիչներին, ապա հեղինակը հիշատակում է սուկ Ժան Ժորեսի անունը՝ փաստելով, սակայն, որ նա իր բողոքը հայտնել է կոտոր-

¹ Ռոզ Լամբերթի՝ թե՛ Հաճնի 1909 թ. պաշարման ժամանակ և թե՛ դրանից հետո այնտեղ ծավալված բեղուն գործունեությանը բարձր գնահատական է տվել կիլիկյան իրադարձությունների ականատես անգլիացի Ֆերիման Դաքեթը: Տե՛ս *Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909. Written and compiled by Ferriman Duckett, Yerevan, 2009, p. 47*: Նշենք, որ Ռ. Լամբերթը 1909 թ. Հաճնի ինքնապաշտպանության մասին թողել է անկողմնակալ և հետաքրքիր հուշեր. տե՛ս **Lambert R.**, Hadjin, *and the Armenian Massacres*, New York, 1911: Տե՛ս նաև ֆրանսերեն թարգմանությունը՝ **Lambert R.**, Hadjine et les massacres des Arméniens, Chamigny, 2009:

² Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M. Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 13.

րածներից հետո (էջ 59): Իրականում Ժորեսը ֆրանսիական խորհրդարանում ծավալել է հայանպաստ բեղուն գործունեություն 1890-ական թվականների կոտորածներին զուգընթաց և իր ելույթներում պարբերաբար ու հետևողականորեն նշավակել սուլթանին, անվարան անարգանքի սյունին գամել օսմանյան կառավարությանը հայերի բնաջնջման համար¹:

Գրքում հպանցիկ արտացոլված են նաև 1909 թ. կիլիկիահայության կոտորածները, որը բնաջնջումից խուսափել էր 1890-ական թվականներին: Հ. Կրկյաշարյանը դրանց պատասխանատվությունն իրավամբ վերագրում է 1908 թ. հեղափոխության հետևանքով Օսմանյան կայսրությունում իշխանության եկած երիտթուրքական վարչակարգին՝ չրջանցելով նաև համիդյան տապալված վարչակարգի կողմնակիցների մասնակցությունը: Ըստ նրա իրատեսական, հակիրճ և ընդգրկուն մեկնաբանության՝ երիտթուրքերը «ոչ միայն ոչինչ չարեցին 1909 թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածները խոչընդոտելու համար, որոնք իրականացրին հին վարչակարգի կողմնակիցները, այլև դրանք ղեկավարեցին» (էջ 73): Շրջանցելով իրադարձության մանրամասները, հեղինակն ուշադրությունը կենտրոնացնում է հաճնաբնակ հայերի 1909 թ. ինքնապաշտպանության վրա, որի շնորհիվ քաղաքի հայ բնակչությունը խուսափել է զանգվածային ոչնչացումից: Հաճնի դիմադրությունն անվանելով «հերոսական» (էջ 69)՝ նա արժևորում է մասնավորապես Ռոզ Լամբերթի դերը (էջ 68):

Թեև Հ. Կրկյաշարյանը, ինչպես տեսանք, միանշանակորեն փաստում է արևմտահայության ոչնչացումը պետական քաղաքականության մակարդակով 1894-1909 թթ., որը ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բաղադրիչներից է, այդուհանդերձ Հայոց ցեղասպանությունը ժամանակագրական առումով եզերում է 1915-1918 թթ. շրջանակներում, որը, ինչպես նա նշում է, իրականացվել է «երիտթուրք ազգայնամոլների կողմից» (էջ 14): Հայեցակարգային այս մոտեցումը նա հիմնավորում է ֆրանսիական ժամանակակից պատմագրությանը բնորոշ դիրքերից՝ կարևորելով երիտթուրքերի որդեգրած պանթուրքականության գաղափարախոսությունը, որը դարձել էր նրանց «արտաքին և ներքին քաղաքականության առանցքը» ու դրդել նրանց հետամուտ լինելու «Թուրքիան՝ թուրքերին» կարգախոսին (էջ 74): Փաստերով հիմնավորելով 1911 թ. ի վեր երիտթուրքերի՝ հայերին բնաջնջելու հետևողական դիրքորոշումը՝ հեղինակն Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը համարում է հարմար առիթ Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի՝ հայ ժողովրդին ոչնչացնելու նպատակներն իրականացնելու համար (էջ 75): Բացահայտելով մասնավորապես Թալեաթի ղեկավար դերակատարությունը 1915 թ. արևմտահայության համատարած բնաջնջման գոր-

¹ Տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011, էջ 220-228:

ծում՝ հեղինակը եզրակացնում է. «Մարդկության դեմ մեծ ոճիրն իր գազաթնակետին հասավ բոլոր նահանգներից արևմտահայերի զանգվածային տեղահանությամբ և կոտորածով» (էջ 77):

Այս պայմաններում Հ. Կրկյաշարյանը համընդհանուր հենքի վրա քննարկում է նաև ռազմական գործողությունների գոտուց հեռու գտնվող Կիլիկիայի հայության նկատմամբ բռնություններն ու տեղահանությունները, մատնանշում, որ Զեյթունի հայությանը տեղահանելուց հետո միայն թուրքական զինված ուժերը մտան Հաճն և օսմանյան տեղական պաշտոնյաների աջակցությամբ կազմակերպեցին քաղաքի հայ բնակչության տեղահանությունը, շեշտում երիտթուրք պաշտոնյա Ավնի բեյի ղեկավար դերը (էջ 80-84): Հենվելով հոր պատումների վրա՝ նա անդրադառնում է 1915 թ. հունիս-սեպտեմբերին քաղաքի բնակչության տեղահանությանն առնչվող զանազան մանրամասների, միաժամանակ փաստում էական մի հանգամանք. տեղահանված հայերի տներում օսմանյան կառավարության նախաձեռնությամբ մոհաջիհներ էին բնակեցվում (էջ 90): Այս փաստն անսքող մերկացնում է երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության բուն դիմագիծը:

Այդուհանդերձ, առավել հետաքրքրական են տեղահանված կիլիկիահայերին բաժին հասած տառապանքների նկարագրությունները, որոնց նրանք ենթարկվել են իրենց բնակավայրից մինչև սիրիական անապատներ հասնելու ընթացքում: Հ. Կրկյաշարյանը հանգամանալից ներկայացնում է այն դժոխային պայմանները (պարբերաբար կրկնվող կողոպուտներ և աղջիկների առևանգում, համաճարակներ և այլն), որոնց միջով անցել են հայերը Հաճն-Հալեպ-Բար-Մեսքենե-Ռաքա ճանապարհին: Ըստ նրա պատումի՝ Սիրիայի համակենտրոնացման ճամբարներում հանգրվանածների կացությունը ևս խիստ վատթար էր: Ի շարս այլ հանգամանքների՝ մասնավորապես Տեր Զորում տեղի ունեցած հայերի կոտորածների, հարկ ենք համարում առանձնացնել Հայոց ցեղասպանությանը բնորոշ առանձնահատկություններից մեկի՝ բռնի կրոնափոխության ընդգծումը հեղինակի կողմից 1917 թ. Ռաքայում (էջ 144, 147): Նա նաև ի ցույց է դրել որոշ արաբ երևելիների բարյացակամ վերաբերմունքը և նրանց ցուցաբերած մեծահոգությունը հայերի նկատմամբ (էջ 149-150, 154):

Հ. Կրկյաշարյանի պատումի առանցքում տեղ գտած հաջորդ կարևոր դրվագը 1920 թ. Հաճնի ինքնապաշտպանությունն է, ուր 1919 թ. Ռաքայի համակենտրոնացման ճամբարից վերադարձել էին կոտորածներից հրաշքով փրկված հաճնցիները: Ի դեպ, նա 1920 թ. դեպքերն անվարան գնահատում է իբրև հայերի ողբերգության ամենազարշելի դրվագ (էջ 14-15): Նկատենք, որ համանման նողկալի դրվագներ բազմիցս արձանագրվել են նաև Օսմանյան կայսրության այլ բնակավայրերում¹: Հեղինակը վերստին մանրամասնորեն նկարագրում է թե՛ հայերի հերոսական ինքնապաշտպանու-

¹ Մանրամասն տե՛ս **Kévorkian R. H.**, *Le génocide des Arméniens*, Paris, 2006.

թյունը պաշարված Հաճնում, թե՛ քաղաքի բնակչության կոտորածն ու պաշտպանների փոքր մասի փախուստը: Այդպիսով, ինչպես նա նշում է, Հաճնի տասը հազար բնակիչներից փրկվել են ընդամենը չորս հարյուրը, այդ թվում՝ իր ապագա ծնողները (էջ 226):

Հեղինակը համառոտակի անդրադառնում է նաև Մերսին տեղափոխված հաճնցիների հետագա ճակատագրին, որոնք 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անգորայում կնքված ֆրանս-թուրքական համաձայնագրից հետո, ըստ որի ֆրանսիական զորքերը 1922 թ. հունվարին դուրս էին բերվելու Թուրքիայից, ելնելով իրենց դառը փորձից, գերադասել են մեկնել այլ երկրներ:

Փաստորեն, եթե պատմագիտական նվաճումների՝ մեր օրերի տեսանկյունից Հ. Կրկյաշարյանի պատումը գիտականության շրջանակներից դուրս է, այդուհանդերձ նրա անկողմնակալ և մանրակրկիտ նկարագրությունները մեծապես նպաստում են Հայոց ցեղասպանության տարիներին կիլիկիահայության ողբերգությունը ճանաչելուն:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Nesim Ovadya İzrail, 24 Nisan 1915. İstanbul, Çankırı, Ayaş, Ankara. İstanbul, İletişim, 2013, 584 s.

Նեսիմ Օվադյա Իզրաիլ, 1915 թ. ապրիլի 24-ը. Ստամբուլ, Չանքրըր, Այաշ, Անկարա. Ստամբուլ, Իլեթիշիմ, 2013, 584 էջ

Գրախոսվող գրքի հեղինակ, թուրք առաջադեմ մտավորական Նեսիմ Օվադյա Իզրաիլին ավարտել է Ստամբուլի Տեխնիկական համալսարանը: 2011 թ. նա հրատարակել է «1915. Մի մահվան ճամփորդություն - Գրիգոր Զոհրապ» գիրքը¹, իսկ այժմ աշխատում է «Շահինյանները օսմանյան և հանրապետական թատրոններում - Շահինյան և Բերբերյան ընտանիքներ» աշխատության վրա:

Այսօր մեր տրամադրության տակ կան 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալված և աքսորված հայ մտավորականների ճակատագրին նվիրված բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ՝ բացառիկ սկզբնաղբյուրային արժեք ունեցող գրքեր², որոնք, անշուշտ, նպաստել են գրախոսվող աշխատության ստեղծմանը: Սակայն Ն. Օ. Իզրաիլին առաջին անգամ շրջանառության մեջ է դնում մեծաքանակ արխիվային փաստաթղթեր: Հետաքրքրական են նյութերի համադրումը, դեպքերի և իրադարձությունների զարգացման հանդեպ հեղինակի մոտեցումները: Գիրքն արժեքավոր են դարձնում նաև հայ մտավորականների աքսորի և ոչնչացման մասին մանրամասն տեղեկությունները:

Նկարագրելով ապրիլի 23 լույս 24-ին տեղի ունեցած հայ մտավորականների ձերբակալությունները՝ Ն. Օ. Իզրաիլին դրանք բնութագրում է իբրև թուրք ոստիկանների կողմից Կ. Պոլսում երբևէ իրականացրած ամենանշանակալից գործողություն: Ինչպես նա նշում է՝ մեկ գիշերվա ընթացքում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում ըստ անուն առ անուն նախապես կազմված ցուցակի ձերբակալվել են ավելի քան 200 հայ մտավորականներ: Հարկ է նշել, որ ձերբակալվածների թիվն իրականում շատ ավելի մեծ է եղել³: Հեղինակը իրավամբ շեշտում է, որ նման գործողությունը 900.000 բնակիչ ունեցող Կ. Պոլսում ընդամենը մի քանի ժամում հաջողությամբ

¹ Nesim Ovadya İzrail, 1915 Bir Ölüm Yolculuğu - Krikor Zohrab, İstanbul, 2011.

² Տե՛ս «Յուզարձան ապրիլ տասնըմեկի», հաւաքեց ու խմբագրեց Թեոդիկ, Կ. Պոլիս, 1919, **Գրիգորիս ծայրագույն Վարդ. Պալաքեան**, Հայ Գողգոթան, Դրուագներ Հայ Մարտիրոսագրութենէն, Պեղինէն դեպի Զօր 1914-1920, Ա. Հատոր, Վիեննա, 1922:

³ Ըստ Թեոդիկի տվյալների՝ զոհերի թիվը հասնում էր 761-ի: Տե՛ս «Յուզարձան ապրիլ տասնըմեկի»:

ավարտին հասցնելու համար պահանջում էր մանրագնին նախապատրաստություն (էջ 14-15)՝ դրանով իսկ փաստելով արևմտահայ մտավորականության նկատմամբ կիրառված բռնությունների իրականացումը պետական քաղաքականության մակարդակով:

1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալված հայ մտավորականներին առանց որևէ պաշտոնական մեղադրանք ներկայացնելու բաժանելով խմբերի՝ աքսորել են Այաշ և Չանքըրը: Նրանց թվում էին օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներ, հոգևորականներ, գրողներ, փաստաբաններ, ուսուցիչներ, լրագրողներ, հրատարակիչներ, բժիշկներ, դեղագործներ, հասարակական և արվեստի գործիչներ և այլք:

Ն. Օ. Իզրահիլի գիրքը բաղկացած է երկու մասից և անձնանունների ցակից, որտեղ նա հիշատակում է ոչ միայն կալանավորված հայ մտավորականների անունները, այլև նշում նրանց աքսորավայրերը՝ միաժամանակ մանրամասնելով, թե նրանցից ովքեր են վերապրել կամ սպանվել: Գրքի առաջին մասում ներկայացված են Առաջին աշխարհամարտին նախորդած իրադարձություններն Օսմանյան կայսրությունում, ականավոր հայ մտավորականների գործունեության դրվագները, նրանց կապերը, միջանձնական շփումները: Հեղինակն անդրադաձներ է կատարում նաև հայ մտավորականների ձերբակալության հարցում առավել գործուն մասնակցություն ունեցած թուրք պաշտոնյաներին: Այս առնչությամբ հատկանշական է ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ստորագրությունը կրող 1915 թ. ապրիլի 24-ի հրահանգը՝ ուղղված օսմանյան բանակի գլխավոր հրամանատարության հատուկ բաժնին, որում մասնավորապես նշում է հայկական կուսակցությունների կարծեցյալ հակակառավարական գործունեության, օսմանյան բանակի թիկունքին սպառնացող վտանգի մասին, ուստի անհրաժեշտ է համարում համապատասխան միջոցառումների իրականացումը (էջ 1):

Հեղինակը ուշադրությունը կենտրոնացնում է Կ. Պոլսի Բերա թաղամասում գտնվող «Ազատամարտ» թերթի խմբագրակազմի ձերբակալության վրա, որի աշխատանքները 1915 թ. մարտի 31-ից օսմանյան կառավարության կողմից արդեն դադարեցվել էին: Նշենք, որ «Ազատամարտ»-ի խմբագրակազմի ձերբակալությունը թերևս Կ. Պոլսի հայ մտավորականների ձերբակալությունների մեկնարկը դարձավ:

Գրքի երկրորդ մասում ընթերցողը կարող է ծանոթանալ հայ մտավորականների և նշանավոր անձանց անուններին և կենսագրություններին, նրանց լուսանկարներին, ականավոր գրողների տարբեր տարիների ստեղծագործությունների տիտղոսաթերթերին, հայերի կողմից տպագրվող որոշ թերթերի ու ամսագրերի շապիկների և տիտղոսաթերթերի պատճեններին և տարբեր փաստաթղթերի:

Ն. Օ. Իզրահիլն հատուկ ուշադրության է արժանացրել Այաշ և Չանքըրը աքսորված մտավորականներին բաժին հասած դառը ճակատագիրը: Նա

գրքում զետեղել է մի աղյուսակ, որն ամփոփում է աքսորյալների տեղաշարժերը ապրիլ-օգոստոս ամիսներին, որոշ դեպքերում նաև նրանց սպանվելու օրերն ու վայրերը:

Անտարակույս, 1915 թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած զանգվածային ձերբակալությունների հետևանքով հայ մտքի, մշակույթի, մամուլի երբեմնի խոշորագույն կենտրոնը՝ Հայկական Պոլիսը գլխատվեց: Օսմանյան կառավարության ղեկավարության կողմից Կ. Պոլսում, այնուհետև Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում մանրակրկիտ ծրագրված հայ մտավորականության ձերբակալություններն ու ոչնչացումը ոչ միայն դարձրին դարձրին արդեն իսկ անպաշտպան ժողովրդի համատարած բնաջնջման ու տեղահանության գործընթացների իրականացումը, այլև հայ և համաշխարհային մշակույթին պատճառեցին անդառնալի կորուստներ՝ հանձինս այլևս չստեղծագործող Կոմիտասի և մարտիրոսացած Զոհրապի, Վարուժանի, Սևակի, Միամանթոյի ու շատ այլոց:

Կարևորում ենք թուրք մտավորական Նեսիմ Օվադյա Իգրաիլիի գրքի լույսընծայումը, առավել ևս, որ 2014 թ. Ստամբուլում այն վերահրատարակվել է: Արժանահավատ տեղեկություններ պարունակող նրա գիրքը, անշուշտ, թուրք հասարակությանը ճիշտ տեղեկություններ կհաղորդի պուսահայ մտավորականության ոչնչացման մասին:

ԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ

А. В. Владимирский, Великий Ататюрк: «Отец народа», «Человек Судьбы», Москва, Яуза, Эксмо, 2014, 352 с.

Ա. Վ. Վլադիմիրսկի, Մեծ Աթաթըրքը. «Ժողովրդի հայրը», «Ճշմտիվ տարրի Մարդը», Սուկիշ, Յուրաք, Էկսմո, 2014, 352 էջ

Не секрет, что историческая наука является одной из важнейших отраслей турецкой пропагандистской машины. Это наглядно проявляется, в особенности, в отрицании факта Геноцида армян, а также фальсификации не только истории армянского народа, но и Османской империи. Это обстоятельство дает себя знать как в официальной турецкой историографии (в действительности фальшивой), так и в исследованиях ряда подкупленных Турцией западных и американских авторов. Основные антинаучные направления официальной турецкой историографии были определены основателем и первым президентом Республики Турция Мустафой Кемалем Ататюрком.

Желая расширить границы фальсификации исторического прошлого, турецкая пропаганда с давних пор пытается внедрить свои антиармянские тезисы и пропаганду не только в западные «научные» круги, но и в постсоветскую, в особенности, российскую научную среду. Ярким проявлением этого можно считать направленные на отрицание факта Геноцида армян «научные изыскания» в российских архивах Мехмета Перинчека, сына печально известного фальсификатора Догу Перинчека¹. Тюркофильство присуще также определенным представителям российской тюркологии. Правда, они активно не вовлечены в турецкую пропаганду, однако зачастую прямо или косвенно способствуют ей, а в сфере однобокого и восторженного представления и рекламирования истории и культуры Турции действуют открыто и активно, что в определенной степени вредит научной объективности. В результате перед читателями, не являющимися специалистами по истории Турции, преступники предстают рыцарями без страха и упрека².

Все это является составной частью турецкой пропаганды, за которую различные турецкие структуры платят не скупясь. К слову сказать, практика подкупа зарубежных, главным образом, западных научных и журналистских кругов для распространения протурецких сведений или фальсифицированной информации имеет давние традиции. Например, в конце XIX – начале XX в. на страницах европейской прессы печатались фотографии и карикатурные изображения султана Абдула Гамида II, которого виднейшие западные государственные деятели

¹ См.: **Перинчек М.**, Армянский вопрос в 120 документах из российских государственных архивов, М., 2011. См об этой книге: **Мирзоян Г., Гончар Н.**, Почему суд по факту Геноцида армян Турция призывает довериться историкам, Ереван, 2012.

² См. например: **Розалиев Ю. Н.** Мустафа Кемаль АТАТЮРК. Очерк жизни и деятельности, М., 1995.

и историки именовали «великим убийцей» (Уильям Гладстон), «кровавым султаном» (sultan rouge) (Альбер Вандаль). Однако, подкуп французской прессы способствовал главным образом сохранению гробового молчания о массовых армянских погромах 1890-х годов¹, или же представлению злодея в позитивном свете. Его фотографии иногда были изображены на первых страницах французских периодических изданий².

Рецензируемая книга А. В. Владимирского вписывается в общее русло турецкой пропаганды, ибо Мустафа Кемаль в ней предстает в героическом облике. Вместе с тем, нельзя не отметить, что его книга написана по сути на любительском уровне. В конечном итоге, налицо не только сознательное или неосознанное искажение исторической действительности, но и многие противоречия, а также недостаточная осведомленность автора. В то же время в изложении материала иногда встречаются более адекватные, объективные оценки. Следует также отметить, что само заглавие книги, а также изображенный на каждой странице турецкий флаг, героизация автором личности Ататюрка однозначно содержат элементы пропаганды. Не исключено также, что критике уделено определенное место только для придания протурецкой книге объективности.

В первую очередь отметим, что А. В. Владимирский по всей вероятности не тюрколог и даже не историк, поэтому в его книге преобладают особенности журналистского, риторического жанра, отсутствуют научный аппарат и список использованной литературы. Уместно подчеркнуть, что сам факт публикации книги в серии «Гении власти», красноречиво свидетельствует об отношении автора к личности Мустафы Кемалья. В заглавии книги отражена данная Ататюрку Уинстоном Черчиллем характеристика: «Человек Судьбы». В аннотации, опубликованной также и на последней странице обложки, заметна присущая книге тенденциозность и антинаучность: «Он был велик и бесстрашен, он был патриотом и ГЕНИЕМ ВЛАСТИ – но не святым», – пишет автор. В аннотации проскользнула лингвистическая и стилистическая ошибка: автор ошибочно считает фамилию «Ататюрк» прозвищем Мустафы Кемалья. Не соответствует действительности утверждение А. В. Владимирского о том, что его книга – «первая русская биография Мустафы Кемалья», которая «восстанавливает о нем всю правду». Достаточно упомянуть, что в 2002 г. в Москве была опубликована монография А. Г. Ушакова о нем³.

Рекламным ходом, направленным на привлечение читателя можно считать имеющее место в аннотации обещание автора раскрыть тягу Ататюрка к алкоголю, а также мифы о его нетрадиционной сексуальной ориентации. На более чем 300 страницах книги нет ни одного слова на эти сюжеты, за исключением некоторых строк, описывающих зависимость Ататюрка от алкоголя (с. 255). Уже во введении А. В. Владимирский лишь одним предложением обращается к его

¹ Виктор Берар, один из виднейших французских общественных деятелей того времени характеризовал позицию французской прессы «заговором молчания». См. об этом: **Погосян В. А.**, Первый этап геноцида армян через призму французской историографии и общественно-политический мысли (конец XIX – начало XX века), Ереван, 2011, с. 61 (на армянском языке).

² См.: **Демоян Г.**, Освещение Геноцида Армян на первых страницах мировой прессы, Ереван, 2014, с. 132-133 (на армянском языке). Об отрицательных отзывах о нем см.: там же, с. 110-111.

³ **Ушаков А. Г.** Феномен Ататюрка. Турецкий правитель, творец и диктатор, М., 2002.

сексуальной ориентации, отмечая, что как военный деятель он провел свою жизнь в основном в мужской среде, что «порой даже вызывало у его врагов подозрения в нетрадиционной сексуальной ориентации, но никаких доказательств этого так никогда и не было представлено» (с. 5). К числу необоснованных в его адрес упреков, автор относит обвинение в педофилии, вызванное удочерением Ататюрком восьми девочек. То есть обещанный на обложке анализ этих двух важных обстоятельств ограничивается несколькими предложениями и отрицанием адресованных ему обвинений.

Однако, А. В. Владимирский не подвергает никакой критике утверждение о создании Ататюрком основ для установления в Турции демократических свобод и проведения демократических выборов (с. 6), что противоречит фактам, приведенным им самым на последующих страницах книги. Он пишет, что парламентские выборы в Турции были по сути фарсом и депутаты не избирались, а назначались Ататюрком. В таком случае возникает закономерный вопрос: на каком же основании он упоминает об организации Мустафой Кемалем демократических выборов?

Дискуссионна также точка зрения автора относительно поклонения Ататюрку в современной Турции. Несомненно, у определенной части турецкого общества сохраняется именно такое отношение к нему, что обусловлено как объективной реальностью, так и сформированным за десятилетия культом его личности. Однако, исследователь не имел никакого права не упоминать о происходивших в Турции вот уже длительное время трансформациях в восприятии личности Ататюрка.

А. В. Владимирский характеризует Османское государство «империей мусульман, а не турок», что явно свидетельствует о его непрофессионализме. Хотя эта империя была теистической, а с 1516 г. султан был также и халифом, тем не менее, ошибочно ее называть мусульманской. По всей вероятности автора ввело в заблуждение то обстоятельство, что этноним турок не был принят и распространен в империи, однако это отнюдь не означает, что государство не было турецким.

Обращаясь к проблеме происхождения Мустафы Кемаля, А. В. Владимирский отмечает, что ему приписывают нетурецкое происхождение и в качестве доказательства приводят его внешний вид: светлую кожу, светлые волосы, голубые глаза. Однако, автор противореча основным элементам антропологического типа турок, утверждает, что среди них много светловолосых людей (с. 8). Затем в качестве довода в пользу турецкого происхождения Ататюрка он отмечает, что разговорным языком в его семье был исключительно турецкий, что, по нашему мнению, нельзя считать доводом. Одним предложением он обращается к версии о еврейском происхождении Мустафы Кемаля, отмечая, что его враги утверждали, будто его отец принадлежал к «иудейской секте денме» (с. 9). Между тем, денме по турецки означает «верообращенный» и в первую очередь «верообращенный еврей», и не является названием секты. Криптовреев именно этой группы, по имени деятеля Сабетая Севи (Цабтай Цви), призывавшего часть евреев, проживавших в Османской империи, принимать ислам, интегрироваться в мусульманское общество, но и тем не менее оставаться верным еврейским идеалам, называют «сабетайцами». Однако, А. В. Владимирский продолжает

уверенно настаивать на том, что никаких доказательств нетурецкого происхождения Мустафы Кемалю или его родителей нет (с. 9).

Автор упоминает также о тесных взаимоотношениях Ататюрка с Джемалем, одним из предводителей младотурок¹, а также о его напряженных отношениях и соперничестве с Энвером. В книге уделено достаточно внимания получению Мустафой Кемалем профессионального военного образования, что с одной стороны отражает объективную реальность, а с другой создает подходящую основу для восхваления его личности. В этом контексте приведены также конкретные, иногда очень подробные примеры его военных успехов. Одним из них является детальное описание сражения при Дарданеллах, которое А. В. Владимирский считает его «звездным часом» (с. 39). Можно согласиться с его мнением о том, что это сражение стало переломным в судьбе Мустафы Кемалю, в особенности в плане его прославления. Однако, в той же главе он отдает дань однобоким турецким утверждениям о предательстве немусульманского населения Стамбула, отмечая, что «в столице нетурецкое население готовилось торжественно встретить войска союзников» (с. 41).

А. В. Владимирский поверхностно обсуждает также, наверное, представляющий для нас наибольший интерес и в то же время неизвестный эпизод биографии Ататюрка: в январе 1916 г. он был назначен командующим Эдирнейским корпусом османской армии, который был перемещен на Кавказский фронт и размещен к северу от Диарбекира. Уже летом 1916 г. Мустафа Кемаль со своим корпусом разместился неподалеку от озера Ван. По мнению А. В. Владимирского 7-8 августа «Кемаль-паша отбил у русских Битлис и Муш» (с. 55). На самом деле, турецкая армия захватила эти города. Но уже в сентябре русские войска отвоевали Муш. Важно отметить, что автор даже не упоминает об армянском населении этих регионов и о том, в какой мере корпус турецкой армии, возглавляемый Мустафой Кемалем, участвовал в резне и гонениях армян Муша, Битлиса и Диарбекира. Известно также, что за успехи на Кавказском фронте Мустафа Кемаль был награжден медалью «Золотого меча ордена Имтияз» (с. 56). Вместе с тем автор делает определенные намеки о его вовлеченности в осуществлении Геноцида армян. Он отмечает, что в 1919 г., когда по обвинению в организации и осуществлении истребления армян были арестованы многие младотурецкие чиновники, Мустафа Кемаль «остался на свободе» (с. 83), избежал ареста «хотя ему и пришлось воевать на Кавказе» (с. 79). По другому говоря, А. В. Владимирский косвенно и весьма справедливо намекает на возможное непосредственное участие Ататюрка в Геноциде армян.

Отметим также, что неоднократно употребляя термины «Геноцид армян» и «Западная Армения», А. В. Владимирский в то же время не избегает от антинаучной формулировки «Восточная Анатолия». Скорее всего это обусловлено использованной им литературой. По другому говоря, у автора полное отсутствие конкретных, обоснованных научных оценок и четкого подхода к изучаемым вопросам. Именно это обстоятельство обусловило наличие в его книге множества противоречий. К примеру, он отмечает, что в 1920 г. «на восточных гра-

¹ Отметим также, что об этом свидетельствует и внук Джемалю паши. См.: Джемаль Г., 1915. Геноцид армян, Ереван, 2014, с. 16 (на армянском языке).

ницах Турции недавно провозгласившая свою независимость Армения попыталась захватить Западную Армению, переданную ей по Севрскому договору» (с. 143). Однако, если речь идет об Армении, как можно в данном контексте использовать слово «захватить»? Согомона Тейлеряна «мстившего за геноцид» (с. 134), он называет несколько страниц спустя «армянским террористом» (с. 186). Обращаясь к вопросу государственного грабежа и присвоения армянской и греческой недвижимости уже в республиканской Турции, А. В. Владимирский отмечает, что в руки кемалистов «перешли имена и поместья иностранцев и бежавших из страны греков и армян» (с. 238). На деле подавляющее большинство греков и армян было уничтожено, о чем он вряд ли не знает.

В книге бросаются в глаза технические ошибки и повторения, иногда повторяются даже целые абзацы (см. например, с. 80). Кроме того, некоторые темы зачастую не связаны между собой и переходы от одной к другой бессмысленны, что приводит к раздробленности общего текста. В результате, во многих случаях нарушено логическое повествование событий, что создает непонятную для читателя картину.

А. В. Владимирский подробно излагает историю формирования и становления кемалистского националистического движения, сотрудничества Мустафы Кемала с различными националистическими и преступными кругами, которые стали костяком этого движения, однако избегает от раскрытия их истинного лица и совершенных ими злодеяний. Вместе с тем, не имея четкого научного подхода, автор все же освещает некоторые интересные и важные обстоятельства. Например, цитируя слова великого везира Фериды паши о том, что «микробы «Единения и прогресса» намного опаснее бацилл ужасного туберкулеза», а также «Единение и прогресс» и националисты (кемалисты – *Р. М.*) – это одно и то же» (с. 106), он фактически доказывает, что сами османские руководители, на деле, никакой разницы не ставили между кемалистским националистическим и младотурецким движениями.

В книге представлены также некоторые эпизоды армяно-турецкой войны 1920 г., а также ее отголоски на международной арене. Описаны, в частности, попытки российской дипломатии сохранить или же вернуть некоторые территории исторической Армении. А. В. Владимирский старается осветить деструктивные шаги Ленина, а также объективный подход Народного комиссара иностранных дел РСФСР Г. В. Чичерина в этом направлении. Он не обходит молчанием отрицательные последствия вмешательства Сталина в решении судеб армянских территорий, касается также имевших место противоречий между подходами Сталина и Чичерина, отмечает о предложении Сталина запретить Чичерину «посылку нот туркам под диктовку националистически настроенных армян-большевиков» (с. 151). Автором упомянуты не только усилия бежавших в Германию вождей младотурок Энвера и Джемала в разрешении этого вопроса, но и их сотрудничество как с большевиками, так и с кемалистами. А. В. Владимирский уверенно и по праву заявляет, что «поставки советского оружия помогли кемалистам выиграть войну с Арменией» (с. 157).

Иногда А. В. Владимирский уделяет особое внимание «насилию» над мусульманским населением на освобожденных (по его мнению «захваченных») греками территориях, однако он избегает от освещения подробностей массовой

резни, учиненной кемалистами над греками на этих территориях. Даже обстоятельства возникновения пожара в Измире в 1922 г., который по свидетельству беспристрастных иностранных очевидцев был организован турками¹ и в научной литературе иногда называется холокостом, А. В. Владимирский, к сожалению, считает невыясненными до сих пор (с. 194). Опираясь на антинаучные протурецкие тезисы, он называет освобождавших свою историческую родину греков оккупантами, высказывает также свою уверенность в том, что 9 сентября 1922 г. «освобожденный турецкий Измир встречал своих освободителей» (с. 195, 220).

